

Բնագր

ԱՐԽԱԳՐԻ ՊՐԱԳՆԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՈՒԹՅԱՆ

Դ. ՏԱՐԻ 1965

ՅՈՒՆԻՍԿՈ

6

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارنين كارنيك قزاجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԿԻՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԹԻՍՏԻ

ՎԱՐԻՑ ԽՐԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՐԱԳԻՐՆԵՐ
 ԵՂ. ՊՕՅԱԴՅԱՆ, Պ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Բ. ԳԵՂԱՐԳ
 Յ. ՅԱՍՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Վ. ՕՇԱԿԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 ED. BOYADJIAN
 B.P. 1153, BEYROUTH - LIBAN
 Հեռագրային քիւ 252786/14

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Պ. ՍՆԱԳԵԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Ն. ՃԱՊՐԻ
- Հ. ՅՈՎԱԿԻՓԵԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Գ. ՎԱՀԱՆ
- Գ. ԳԵՂԱԿ
- Հ. Գ.
- Զ. ԳԻՐԷՋԵԱՆ
- ԱՐՄԱՆՑ
- Բ. ԹԱՇԵԱՆ
- ԵԴ. ՊՕՅԱԴՅԱՆ
- Պ. Ս.
-
- ՆՇԱՐՆԵՐ

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Դ. ՏԱՐԻ, ԹԻԻԼԵ

ՅՈՒՆԻՍ 1965

ՊԵՏՐՈՒԹ

ՄԿԶԿՊԱՏԻԺ *Կը պահանջեմ*

ՊՕՂՈՍ ՄԱՊԵԱՆ

– Վաղը պիտի այցելենք Քարնավալէ թանգարանը, – յայտարարեցին ու տունն մեթրոն, փողոցը, թանգարանին թաղային թիւը:

Սորպոնի «Յրանսական քաղաքակրթութիւնն զասընթացքը՝ իր օտար ունկերդիրներուն լուսապէս ճանչցնելու համար մեծ մայրաքաղաքը՝ ունէր այցելութիւններու յաւելումածական յայտադիր մը: Շարաթը հեղ մը ու Շարաթ օրերը, փրոֆեսէօրի մը ընկերակցութեամբ, ուսանողները կ'այցելէին այս կամ այն վայրը՝ յիշատակարան մը, թաղ մը, թանգարաններէն մէկը, տաճար մը:

Առտու, նշանակուած ժամէն առաջ, ելալ ճամբայ ու մտալ թանգարանին հանդիպակաց փողոցին վրայ երկարող սրճարանը: Քիչ անց եկաւ Խտալուհին, Քարլան ու անգամ մը նայելէ ետք շէնքին, հանեց պզտիկ տետրակ մը եւ սկը-

սաւ արձանագրել զրան վրայ գտնուած դարաւոր փորագրութիւնը:

Շուտով իրեն միացան ուրիշներ ու երբ փրոֆեսէօրը երեւցաւ ելալ ու խտնընկցալ իրենց:

Հասած էր ժամը, բայց հետաքրքիրներուն թիւը շատ չէր: Ընդամէնը եօթը հոգի էին ու կը ներկայացնէին եօթը տարբեր երկիրներ: Քիչ մը սպասեցինք: Եկող չեղաւ:

– Ճիշդում են կոչեցնալք, բայց սակաւ են ընտրեալք, – ըսաւ փրոֆեսէօրը ժպտելով, ու մտանք ներս:

Փարիզի տուններուն մեծ մասին պէս, արտաքինով ոչինչ ըսող շէնք մըն էր Քարնավալէն, այլ որքա՞ն պատմութիւն ու խորհուրդ կ'ամփոփէր ներսը, Փարիզի տուններուն մեծ մասին պէս: Դուրսէն տեսնուած մասերուն նայելով ո՞վ կ'ընայ պնդել, թէ իր տեսածը կը ներկայացնէ այս քաղաքին ամբողջական խորհուրդը:

Նե՛րսն է Փարիզը, այս անշուք ու զորշ զանգուածներուն խորքը. հոս է իր շշու-
ցուցիչ լոյսը, իրական հարստութիւնը,
յաւելանութիւնը նուաճող իր գաղտնիք-
ները ներսն են:

Թանգարան դառնալէ առաջ պատ-
մութիւն չինած տունն է ան, Մատամ
Սէփինիէի համբաւաւոր սալոնը, ուր ժա-
մանակակիցները եկած են ու վիճած,
ներշնչած, ներշնչուած ու հեռացած են,
խոնկոյթ բան մը փոխանցելով այս պա-
տերուն: Մատամ Սէփինիէն այստեղէն
դրած է կոմսուհի իր աղջկան ուղղուած
հաշակաւոր իր նամակները, որոնց ըն-
թերցումով Ֆրանսացիները կը վերակազ-
մեն ժամանակի այդ հատուածը, ու այն-
քան հպարտ են անոնց ոճային նրբու-
թիւններով:

Հիմա, ու հարիւր տարիներէ ի վեր,
անիկա դարձած է Թանգարան ու կ'ամ-
փոփէ Յեղափոխութեան չրփանի ամէնէն
թանկ նշխարները: Հոն կը գտնես ձեռա-
դիր պատկերասրահներ, Յեղափոխութեան յաղ-
թանակը աւետող թերթերէն օրինակներ,
վարսափունջներ ու հագուստի ծուլներ,
դրիչներ ու մահաբեր գործիքներու հա-
ւաքանդակներ: Ասոնցմէ աւելի մարդուս
ուշադրութիւնը կը գրաւեն սակայն օր-
ուան պարզ ժողովուրդին՝ Յեղափոխու-
թեան բերած մասնակցութեան առարկա-
յական վկայութիւնները: Իւրաքանչիւր
արհեստաւոր իր մէկ ձեւակերտին վրայ
արձանադրած է իր խանդավառութիւնն
ու կամքը: Պնակներ, ափսէներ, սըր-
ուակներ ու անոնց վրայ՝ «Մահ թագա-
ւորին», «Կեցցէ Յեղափոխութիւնը», «Ա-
զատութիւն կ'ուզենք» ու Յեղափոխա-
կան հանդանակներուն ամէնէն զրաւիչը,
յախճապտկեայ անօթի մը վրայ՝ «Մահ
կամ Ազատութիւն»:

Ֆրանսացիներուն մէջ ալ թուրքեր
ու արիւնոտ սուլթաններ դորձած են
արդեօք, որ մարդիկ ստիպուէին մահը
եւ ազատութիւնը նոյն աստիճանին վրայ
բերել եւ հաւասար կերպով ընդունիլ մէ-
կը կամ միւսը, — ըսի իւրովի, ու չեմ
գիտեր որո՞ւն զըրոյժով կը պատրաստ

ուէի թուղթի մը վրայ առնել բնադիրը,
երբ կողքիս երեւցաւ փրօֆեսէօրը:

— Հետաքրքրական բան մը գտա՞ր,
— հարցուց ժպտուն:

— Այո:

— Ի՞նչ:

Մատնանչեցի:

— Բան մը կը յիշեցնէ՞ք քեզի:

— Մեր նշանաբանն է:

— Նո՞ր:

— Դարերէ ի վեր:

— Մեր Յեղափոխութենէ՞ն ալ առաջ:

— Ձեր Յեղափոխութենէն ալ առաջ:

Երկեցի անմիջապէս ու յիշեցուցի
մեր Եղիշին «Մահ՝ իմացեալքը, որ
ազատութեան ծարաւի մը յայտարարու-
թիւնն է նախ եւ ապա այդ դիտակցու-
թեամբ մահը ընտրողներուն տրուած
անմահութեան պսակ մը:

Նոյն պահուն փրօֆեսէօրը կանչեց
միւսները ու անօթիներուն նայելով՝ սկը-
սաւ դրուագել աշխարհը նոր անկիւնա-
դարձի մը առջեւ դրած այդ տարերային
չարժուէր: Մենք խանդավառութեամբ
մտիկ կ'ընէինք, մինչ Քարլոս կառափ-
նատ բարձրացող իւրաքանչիւր անձի հետ
կը տօգունէր ու կը դողար: Այսպէս էր
միշտ, հաւաքական յուզումներէ ու խան-
դավառութենէ դուրս, զլիսակ կամ
աչքերը հեռուն սեւեռած բացակայ մը:
Ամբողջ Յուլիսը միասին անցուցինք,
բայց իր դէմքին բնաւ չնշմարեցի արեւ-
մըտեան աշխարհի աղջիկներուն անփոյթ
զուարթութիւնը: Բարեւ կու տար միայն
ու բարեւ կ'առնէր միայն... Կը ժպտէր
քիչ անգամ ու իր ժպտը ներքին զոհու-
նակութենէն աւելի դիմացիին հաճոյք
պատճառելու կանխատեսածուած կեց-
ուածքէ մը կը ձեւակերպուէր: Վերա-
պա՛հ, շատ մտածկոտ ու շատ տխուր էակ
մը, որ խուճապահար հեռացաւ մեզմէ,
երբ փրօֆեսէօրին նկարագրութեամբ՝
կառափնարանի ճամբուն վրայ յեղափո-
խականները սկսան քաշքշել Ֆրանսայի
վերին թաղաւորը եւ Մարի Անթուանէ-
թը: Ապա նոյն ճամբուն վրայ երեւցան
Մատամ Բօլանը եւ Անտրէ Շէնիէն, մե-
ծաւորական անթօնն ու Բօպէտիէրը, ա-

սոնց միւս բնկերները ու մեծերուն հըռ-
շակաւոր խօսքերը:

— Աղատութիւն, որքա՞ն ոճերներ կը
դորձուին ի՞նչ քու անունովդ:

— Յեղափոխութիւնը բանաստեղծնե-
րու պէտք չունի:

— Բօպէսփիւրը պիտի հետեւի մեր
քայլերուն:

Փրոֆեսէօրը վերջացուց ու ժամա-
ցոյցին նայեցաւ:

— Յեղափոխութեան մակընթաց օրե-
րուն թերեւս ըմբռնել է մէկզմէկ սպան-
նելու այս մոլեղնութիւնը, բայց անկէ
դուրս մարդ իրաւունք չունի ուրիշ մարդ
մը դատելու եւ մահաւճիւն ստորագրելու
անոր դէմ, — ըսաւ Զուիցերիացին:

— Դեռ նման իրաւունք մը տալ կը մեր-
ժեմ մարդոց նոյնիսկ յեղափոխութեան
օրերուն, — յարեց Շուէտուհին:

— Վէճի հետաքրքրական նիւթ է մա-
հաւճիւնի պարագան, — ըսաւ փրոֆեսէօ-
րը, — բայց ելլե՞ք դուրս եւ պզտիկ սուր-
ճի մը առնէ՛ք շարունակենք:

Նշանք Գարապալէէն ու մօտակայ
որճարանին մէջ, «պզտիկ» սուրճի մը եւ
«պզտիկ» սիկարէթի մը հետ՝ Զուիցե-
րիացին շարունակեց իր մարդասիրական
ճառը, վեր առնելով կեանքի արժէքը եւ
յիմարական գտնելով մահաւճիւնին որ-
գեղարմը:

— Ո՛ր, մարդ իրաւունք չունի սառ-
նասրտութեամբ ուրիշ մը կեանքէն զըր-
կելու:

— Ինչպէ՞ս թէ չունի, — առարկեց Ա-
մերիկացին, — առանց մահապատիժի ըզ-
դաստացնող օրէնքին՝ չարադործները
քառսի պիտի վերածէին կեանքը: Ար-
դարեւրուն խաղաղութիւնը ապահովելու
եւ բարութիւնն ու բարիքը աճեցնելու
համար, ես անհրաժեշտ կը դռնեմ չարա-
դործներուն օրինական պատուհասումը:

Փրոֆեսէօրը կարծիք չէր յայտնէր:
կը ժխտմտէր միայն սխալ կառուցուած
նախադասութիւններուն ասեմ:

— Թերեւս դիարատու թուի ձեզի, —
խօսք առի եւ, — բայց ըսեմ՝ մենք այն-
քան տառապած ենք, որ չենք կրնար ար-
դաթ լըլլալ, ու եղած ենք այնքան բա-

ւի, որ դիւրին չէ մեզի հանդուրժել չա-
րը: Եւ կը բաժնեմ պարոն Ամերիկացիին
տեսակէտը: Մարդիկ պէտք չէ մտքէ հա-
նէն այդ սարսափելի օրէնքը:

— Բայց ոճրագործը անբնական մարդ
է, — ձայնը բարձրացնելով խօսեցաւ Շուէ-
տուհին, — տնտեսակիցն է, խանգարուած
խառնուածքը, ու իրենց ջիղերուն ու տը-
րամարանութեան տէր անձերը իրաւունք
չունին այդ խանդարումը չահագործե-
լու:

— Օ՛ր, այո, իրաւունք չունի՞ն, — դառն
չելուով մը արձագանգեց Հունգարացի ե-
րիտասարդը: — Բայց ի՞նչ նուրբ են ձեր
բառերը: Թանգարուած խառնուածք,
անդիտակից, անբնական...

— Միշտ այդպէս չէ, — դժբախտա-
բար, — վրայ բերաւ Ամերիկացին, — գի-
տակից ու մշակուած ծրագիրներով ոճիւր
գործողներուն թիւը աւելի է, քան ան-
դիտակից ոճրագործներուն թիւը, որոնց
պարագան, յսմենախղճաւ, անտեսուած
չէ տշխարհի դատարաններէն: Հարկ է
մահաւճիւնի օրէնքը Դամոկրիան սուրբին
պէս առկախ պահել մարդոց զլխուն:

— Ոճրագործը պատժելու համար, —
նորէն խօսք առաւ Զուիցերիացին, — կայ
ցկեանս բանտարգելութիւնը, աքսորը,
ուրիշ միջոցներ կան: Կեանքը թանկաւ-
թէք բան է ու քաղաքակրթ մարդկու-
թեան վայել չէ մահապատիժ կիրարկելու
բարբարոսութիւնը:

— Բայց չե՞ս խորհրդ, — առարկեց
Սպանացին, — որ ճի՛շդ այդ արժէքը ան-
վրտանդ պահելու համար մարդիկ որդե-
գրած են այդ միջոցը:

— Աւելի առողջ միջոցներ չեն պակ-
սիր, — պնդեց Շուէտուհին. — դիտուած
է որ մահապատիժի օրէնքը չեղեալ հա-
մարող երկրներուն մէջ նուա՛յ ոճիր ու
անկարգութիւններ կը պատահին, քան
մահապատիժով իր պաւակներուն սպառ-
նացող երկրներուն մէջ:

— Ձեզի ծանօթ է հարկաւ, — աւել-
ցուց Զուիցերիացին, — Պելճիքայի կեղ-
րոնական բանտին առինքնող պատմու-
թիւնը, որ քանի մը տարի առաջ ողջունե-
ուեցաւ ողջ մարդկութեան կողմէ: Ձորս

տարի շարունակ բանտը առանց բանտարկեալի մնալէ ետք՝ կառավարութիւնը մեծ հանդիսութեամբ զայն վերածեց աշխատանքի ու բարիքի կեդրոնի մը։ Ուրե՛մն։

— Անշուշտ, ամէն մարդ, — խօսք առաւ Քարլան, — հարցը կը դիտէ իր անկիւնէն եւ լուծումները կը հիմնաւորէ հոգեբանական ու պատմական ուրոյն ժառանգութեան մը վրայ։ Եւ բռնակալի մը որոշումով դնդակահարուած լրատւորողի մը թոռն եմ եւ սգաւոր ու վրէժ-խնդրական բարկ մթնոլորտով յազեցած տան մը մէջ մեծցած անձի մը համար անբնական չէ, կը խորհիմ, որ համամիտ պտնուի մահապատիժը պահելու դադարաւորին։ Ասիկա իմ անձնական պարտադաս է։ Բայց ամէն անգամ, որ մարդկութիւնը սերունդ առ սերունդ ալիկոծող այս անբոցը սեղանի վրայ բերուի, ջանի մը տարի ետ կ'երթամ ու կը յիշեմ Հոմերի համալսարանին մէջ մեղի հետ պատմութեան հետեւող հայ ուսանողի մը պոռթկումը։

— Մահապատիժ կը պահանջեմ, — պոռաց, — երբ մեր ընկերներէն մէկը մեծ ձեռնհասութեամբ հակառակ տեսակէտը կը պաշտպանէր, — մահապատիժ կը պահանջեմ, — կրկնեց սրահը թունդ հանող ձայնով մը, ու բռունցքը օդին մէջ ցլցած՝ սկսաւ խուզարկել մեր դէմքերը։

Քնն չեմ գիտեր ճոյն պահուն ինչ տպաւորութիւն կրեցին միւսները, որովհետեւ աչքերս չկրցայ հեռանել իր այլազան պոռթկում ու գողահար մարմնէն։ Աղքատ, հեղահամբոյր ու սակաւախօս ուսանողի տիպարը դարձած էր յանկարծ շրջապատը իր ուժով լիցնող բարդ աղտոյտի մը։ Ինծի թուեցաւ, թէ հետու ու խորունկ տեղէ մը կու գայ իր ձայնը եւ անսովոր է այդ յորդումին թաքուն դրդապատճառը։ Կարծես իրական ռեքս-գործ մը կար դիմացը, հայրը, մայրը, եղբայրը սպաննած յայտնի չարազործ մը, այնքան թարմ էր իր վէրքին անդրադարձը ձայնին մէջ, այնքան մարդկային էր ինք ու վարակիչ։

— Մահապատիժ կը պահանջեմ, —

պոռաց երրորդ անգամ ու շարունակեց, — թո՛յն կը պարունակէր մեղի մատուցուած ամէն ազնուութիւն, քողարկեալ դատաւարութիւնն էին բոլոր պթութիւնները, ու խարդախ բան մը կար մարդկայնական վսեմ սկզբունքներուն մէջ։ Դուք հաւանաբար աշխարհը կը տեսնէք տարբեր գոյնով, գուցէ կեանքը խնջոյք մըն է ձեզի համար, աշխատանքի, վայելքի թանկ առիթ մը, որովհետեւ դժոխքը ճանչցաք մեր Տանդէին երեւակայութիւնը սերտելու աստեղ միայն, մինչդեռ մենք իրականը ապրեցանք, դժոխքներուն ամէնէն զարհուրելին, որուն նկարագրութեան համար տասը Տանդէներուն տասը հանճարները անբաւական պիտի դային։

Քվերջին բառը արտասանեց ու առանց մեղի նայելու, քայլ մը առաջացաւ ու նետեց իր յոգնած մարմինը պատին կից նստարանին։ Քիչ մը ետք նորէն վեր առաւ դուրսը, նորէն մօտեցաւ մեղի, նորէն ալիկոծեց սրահը։

— Իմ կուրծքիս տակ, սրտի տեղ, ժողովուրդի մը դերեզմանատունը դարձած ծովի՛ր կը մոնչնի հիմա, անապատներ կ'այրին, խորխորատներ կը պոռան եւ ոչ մէկ կրօնք ու տառուած կրնան մեղմել հոգիիս քինայոյզ մորմոքը։ Գազանը ակնկառոյց կը սպասէ ներդաժիտ հանդանակներու՝ ձեռնարկելու համար արիւնի եւ աւերի իր լրացուցիչ արշաւանքներուն։ Եւ մահապատիժ կը պահանջեմ դադանին։

Քարլան լրացուց ու դուրսը առաւ ձեռքերուն մէջ։ Վայրկեան մը ետք ցրեցըւեցաւ մարմինը ու աչքերը դետին սեւեռած՝ վճռական շեշտով մը յարեց։

— Եւ մահապատիժ կը պահանջեմ։ Ու նորէն լուց։ Ձեռքերը ինչու լուցին նաեւ միւսները։ Բաժնուելու ատեն ձեռքերը սեղմելով շնորհաւորեցի իր դատաւարութիւնը։ Երջանկութիւն մը ողողած էր մարմինս։ Կարծես հոգիս պէտք ունէր այդ անողոք բառերուն սրնունդին։

Գ. Ս.

ԲՆԱԶՆՋՈՒԱԾ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ԵՐԳԸ

Մենք յաղթեցինք մահուան,
 Որովհետև վիշապ մը կը բնակէր մեր հոգիին մէջ.
 Նօթգլխանի վիշապ մը՝ որ ծխածանի եօթը գոյներն ունէր.
 Վիշապն էր ան, ոչ թէ չարիքի,
 Այլ բոլոր անասուններուն վիշապը մորկաբեւ,
 Բարութեան եւ սիրոյ վիշապը գեղեցիկ,
 Որուն առջեւ կը բացուէին կամարներն երկնքի,
 Ու ծովերու խորակառոյց ապարանքները կապոյտ.
 Գաղտնիքն էր ան մեր անպարտելի կամքին,
 Մեր յարուցեալի խորհուրդը երաշխաւ:
 Եւ մենք ապրեցանք արիւնի եւ արցունքի ծովերէն անցնելով,
 Հասանք նստահանգիստ մը՝ ուր բարձրադաշտի ալ թեւատարած՝
 Ծունկի եկանք մեր պաշտպան սուրբերուն առջեւ,
 Մեր Աստուծոյ առջեւ, որ կարծեցինք թէ խլացած էր երէկ,
 Միևչդեա ա՛ն էր որ վերապահած էր մեզի այս Յարութիւնը երաշխի...



Փորձեցին մեզմէ խլել կեանքի զրահը, որպէսզի համայնական
 գերեզմանի մը մէջ

Մռացաւթեան պատմութիւն մէջ մնայինք առ յաւիտ.
 Բայց մենք կտոյժած էինք խելայեղօրէն
 Մեզ շրջապատող բարեբաւ.
 Անդունդ մը բացուած էր մեր ոտքերուն տակ,
 Բայց գահավէժ իյնալու վտանգը մեզ աւելի հզօրապէս
 Շղթայած էր երկրին, բարձունքի լուսաշող ժայռերուն՝
 Որոնց վերեւ կը բացուէր մեր մտքին երկինքը բոցավառ:



Մեր աչիքը փորեցին երկաթներով երաշէկ,
 Բայց Լոյսը թափանցած էր միմչեւ մեր արիւնը հրակայլակ,
 Մինչեւ մեր սրտին ստիպրը երազափայլ:
 Լոյսը մեր ռազմերուն մէջ կը հոսէր,
 Մեր ճաշմին մէջ ռազմի եւ բիրեղի արձագանգներ հիւսելով:



Հսկայաբեւ խաչի մը վրայ բռնեռած,
 Երկրին եւ երկնքին միջեւ առկաթ՝
 Վախճան չունեցաւ մեր գազգոթան.
 Բայց մահառեցանք մահուան դէմ,

Եւ մեր աչքերը սեւեռաբիւր հորիզոնին՝
Ուրկէ ծագող արշալոյսի մը սպասելով՝
Կեանքի՛ն, կեանքի՛ն, կեանքի՛ն հաւատացինք:



Հաւատացինք որ Յոյսը պիտի չպարտուէր երբեք.
Յոյսը մեր արիւնին իւրաքանչիւր կաթիլին մէջ
Ծիրանի ադամանդի մը հուրը կը վառէր,
Մեր արցունքին իւրաքանչիւր կաթիլին մէջ
Ազիւն բիրեղը կը ճանաչէր.
Յոյսը մեր շրթներուն աղօթքն էր անլռելի.
Յոյսը մեր ձեռքներուն մտածումն էր խաչաձեւ
Յարութեան խորհուրդին համար.
Յոյսը մեր կամքն էր. ապրելու մեր կամքը՝ որուն
Ազազակեցինք անունը Հայրենիքին...



Տարածուեցանք մեր սրբազան հողերուն վրայ,
Ուժասպառ, արիւնաբաւ, յօշոտուած մարմիններով:
Գետերը կտսեցուցած էին իրենց հոռոմէք պղտոր,
Եւ արիւնով բամբակացած՝
Դաշտերն աւ ճամբաները կ'աղաղէին:
Սեւեռացանք երկնքին, առանց որ մէկը օգնութեան հասնէր մեզի.
Ոճիրը կը գործուէր դոնփակ.
Որպէսզի մարդկային ոչ մէկ խիզմ սահմակէր.
Որպէսզի աչ մէկ բազուկ գիւնուէր արդարութեամբ:
Որպէսզի գիշերն իջնէր շիրմաքարի պէս,
Եւ լուսնեան կնիքը դրուէր Քչմարտախօս բերաններու:



Մենք մոռցած էինք աղօթելու իսկ.
Եւ Յուշը սոսկ մեր չարչարալից մտքէն կը փրցնէր
Մանկութեան սնաբին վերեւ հսկող հրեշտակին քեւերէն
Արիւնոտ քանի մը փետուր:
Մեր եկեղեցիները խորտակուած էին իրենց զանգակներով.
Մեր երէցները մոռքուած էին խորաններուն վրայ,
Եւ ամենց արիւնը վերջին պատարագին համար
Գինիի տեղ սկիւններն էր լեցուցած...



Լեռնէ լեռ, կիրճէ կիրճ, միմչեւ Անապատին աւազներն արեւակէզ
Մեր արիւնը անջնջելի վարդերով ծածկեց
Արեւելի ճամբաներն՝ ուրկէ
Դաբեր առաջ մեր թագաւորներն էին անցած
Իրենց աստեղաբիւ բանակներով:
Հիմա կ'անցնէին կարաւանները մահատեսիլ,

Ծերեր, մանուկներ, կիներ,
 Կիներ՝ որոնք կեանքի սաղմեր ունենին դեռ իրենց մաքրաշուք
 արգանդներում մէջ,
 Եւ այդ կեանքն էր՝ որուն մեծ կառչեցանք ամբակտելի հզօրութեամբ,
 Կեանքն մեզնէն էր միշտ,
 Մահը առկա չէր պուստ մը հզաւէր,
 Միջանկեալ ուժ մը սարսափելի՝
 Որուն մեր ժողովուրդը պիտի յաղթէր անսլալման:
 Կեանքն մեր գրասն էր հագար վերջերով ծածկուած,
 Բայց զայն պահած էինք միշտ մեր կարծիքն վրայ:
 Եւ այսպէս կեանքն էր, մինչեւ որ Սողոմոն անունով մէկը յայտնուեցաւ
 Անշուշտ, անառաւոր, անլսելի հեծեծամեքներով գիշերին մէջ՝
 Ուր ծառերէն կախուած գիակներուն դէմ
 Հովերուն զաշտոյնները կը փշրուէին...



Անտարանները մոխրացած էին հրդեհուած տաճարներուն մէջ,
 Եւ պարմանի երաժիշտները խոզխոզուած էին ֆալերուն վրայ՝
 Զորս մաշեցուցած էին սերունդները ծնրադիր.
 Բայց մէկը կար գոր սնրագործը մտքած էր բոլորովին.
 Անուն էր Սողոմոն եւ անոր սիրտն էր գեհեմ վրէժի.
 Անոր աշխարհն մէջ տարօրինակ արեւ մը կար.
 Անոր ձայնը ամօթած աղջկան մը ձայնին պէս քաղցր էր:
 Անոր ձեռներուն մէջ ոչ մէկ աստի պիտի չպրտար մահասարսառ
 Մարմինն ազաւնիի մը ձիւնաթել:
 Անոր անունն էր եօթն անգամ կրկնուած
 Հակատագրին քաջ շրջաններէն:
 Յաւերժութեան մասնակցին մէջ արձանագրուած անհաւելի խորհուրդով,
 Անունը՝ որ փոքրկասաստ հնչեց սնրագործին ականջներուն մէջ,
 Երբ ան տեսաւ իր դէմը կանգնած՝
 Բնաշնչուած ժողովուրդին այս գաւալը վրիժառու:
 Խենթութիւնը զարհուրելի աչքեր ունէր
 Երբոր Անօթութիւնը տեսաւ.
 Տեսաւ ծաղաւաղիւծ մանուկներ՝ ոլոնք երբ կը փորձէին մօտենալ
 Գետակի մը պղտար ջուրերուն,
 Գնդակահար կ'իյնային դեռ կաթիլ մը չըմպած.
 Փայտէ ռոտերով տարօրինակ քոչումներու մեմ
 Առանց կռիւն մը արձակելու:

Այսպէս յաջորդեցին իրարու դրուագները մահուան...



Բայց անպարտելի կեանքը զրահներ հագուեցաւ մեզմէ բոլոր անոնց՝
 Որոնք ահեղօրէն մաքառեցան
 Եւ մինչեւ իսկ իրենց եղունգներով կամքի երկաթակու ժայռերուն
 կառչեցան.
 Անոնք ծնած էին հայրենիքի պահապան վիշապներու ծագէն,

Շաղին Գարահիսարի մէջ, Ուրփայի մէջ, Մուսա Տաղի շուֆին մէջ.
Անոնք հերոսութիւնը հասցուցին մինչեւ ծիրանին ճահատակութեան,
Անոնց անունները ադամանդով գրուած կը փափփուին Ամմահութեան
ապառաժին վրայ...



Մայրերը մեռան չարչարալից երկունքներով.
Կոյսերը չկարողացան ամառարտ պահել շուշաններն իրենց մարմնին.
Մահուկները չնամչեցան իրենց մայրերը սգաւոր.
Նրիտասարդ չկար, ծերերը փոխան աղօթքի՝ անէծք միայն շունչին
իրենց շրթներուն վրայ.
Աւերակ քանդակաւոր մը շուքը կ'իյնար հրդեհուած քաղաքի մը դեռ տաք
մոխիրներուն,
Բայց մեծ աղաղակ մը բարձրացաւ ծովամուռնի,
Աւետելու համար Յարութեան Առաւօտը երաշալի.
Ժողովուրդը զոր բնաջնջած էին, տակաւին կ'ապրէր,
Դեռ չէր շփած կեանքի կրակն անոր արիւնին մէջ,
Դեռ Ազատութեան վիշտան անոր հոգիին մէջ կը քնարախէր մոլեգին,
Անոր ուղեղին մէջ կը ծաղկէին փոսփորաշաղ վարդեր,
Անոր ձեռքերը՝ արոնցմէ խուսափած էր ստեղծագործ ուժը, կընային
յգկել վերստին
Քարերն աւ մետաղներն հայրենի լեռներուն,
Եւ ամենց վրայ արձանագիր հնչեցնել
Յաւիտենական կեանքին երգը լուսնդէն...



Անապատներէն, մահաբայր կիրճերէն, հրդեհուած քաղաքներէն
Դէպի չարս ծագերն աշխարհի
Բազմաւթիւն մը տարագիր՝ ար ժողովուրդի մը ստուերն է գոցեցս,
Անա՛ կ'իջնէ գէղի ծովեզերք՝
Ուր ճաւ մը լուսամանակ քեւերն իր կը բանայ
Ազատութեան հովերուն.
Անոր առաքատները մագաղաթներ են խնկաբայր
Որոնց վրայ արիւնով գրուած են շարականներ Շնորհալիի,
Եւ Նորեկի սրտէն բխած օրհնութեան երգեր.
Անոր ցուկին վրայ մեր հին Աստուածներն են խմբուած,
Աստուածուհին Անահիտ ասկի ստիճաններով,
Մեր առաջնորդներն՝ որոնք հերոսներ աւ ճահատակներ եղան,
Մեր բանաստեղծները յաւերժագեղ, արեւադէմ:
Նաւը կը հեռանայ ցամաքէն
Դէպի հեռաւոր երազատեմէ հորիզոնները Յոյսի՝
Ուր մեզի կը սպասեն Կեանքը եւ Ուրախութիւնը կեանքի յաւերժութեամբ...

ԱՐՄԷՆ ՆՐԿԱԹ

«Բագին» տաքած է վաթի գրութիւնը տարա-
մտաւորական Նազեմ ձապրիէն:

Հեղինակը կը պատկանի ձապրիներու հռչա-
կաւոր գերդաստանին, որ տաւած է Սաքիոյ ժա-
ղապահ և մտաւորական շարք մը դէմքեր:

Կու տամք գրութիւնը լեզուական թերեւ զնն-
հրպատմանով:



ԴՐՈՒԱԳ ՄԸ ԱՆՑԵԱԼԵՆ

Տարիներ առաջ, դրախտանման Պրուսայի գեղատեսիլ պալատներէն
կը ժայթքէր լոյսը ամէն կողմ, շողարձակ և շաղուցիչ: Այդ պալատնե-
րուն հոսին կ'արձագանցէր կանչը ուրախութեան: Անոնցմէ մէկէն մանա-
ւանդ, երջանկութիւնն էր, որ կը հասէր: Անոր շրջակայ պարտէզներուն մէջ
ծաղիկները բարձր բռնած էին իրենց գլուխները և թռչունները իրենց ան-
լըռելի հրգեքը կը գեղեցիկէին առտաւընէ մինչեւ իրիկուն: Բնութեան այդ
արտակարգ գեղեցկութիւնը վեհութիւն մը կու տար պալատին, և պալա-
տը, իր կարգին, բնութեան կու տար տեսարան և զգեստ:

Ատաւած այդ դրախտը հոն տեղաւորած էր, որպէսզի մարդիկ գիտ-
նամ բարիք ընել իրարու: Սակայն, բնութեան մեծ ուժը, որ ամէն կողմ կը
տիրապետէր, մերժեց ամէն ինչ: Ու այդ շէնք ապարանքին վրայէն ամացու
բախտին խորտակիչ անիւր և տեղի ունեցաւ մեծ փլուզումը:

Կարմրաբակ, մեղրահոտ աշտով ու շրթներով ազուտը հարսներն
ու թուխ գեղաւիտիները մնացին խուճապահար: Անոնց դէմքերուն վրայ դիւ-
րին էր կարգաւ անձկութիւնը ամծանօթ գալիքին:

Հարսանեկան պալատն այդ դարձաւ տուն մեռելական, տուն ռզրի և
տրիւններու:

Սիրուն ու վախկոտ, փոքրիկ աղջիկ մը միայն յաջողեցաւ հազաւորի
դամբարանի նմանազ այդ կործանած պալատէն:

•

Հալէպ:

Հայուհի մըն էր ան: Իրմէ էր և իրմով՝ ամբողջ հայաբնութեան:
Իրմէ՝ վաճառի անհաղթելի էր ան խղճիս և զգացումներուս:

Իր գերդաստանին միակ կանգուն սիւնը ան էր հիմա: Իր անցեալն ու
իր ցնդը հպարտութիւն կու տային իրեն, և ան դարձաւ փարոսը բոլոր ու-
ղեկորայններուն: Իր երակներէն կը հոսէր բարիքի և օրհնութեան արիւնը
ու աչքերէն՝ լոյսը ամէնուն վրայ: Անոր սիրտը հասցէն էր գրութեան, բա-

լասանը՝ որին ու տկարին: Մտնին հետ բաց էր նաև ձեռքը, ինչպես եղած էր իր տոհմին ու ցեղին ձեռքը: Մեծ եղաւ ազդեցութիւնը գաւազնեղան վաճառքի եւ հպարտացաւ անոնցմով: Եղաւ սրբութեան եւ վեհութեան խորհրդանշանը մը անոնց աչքին: Դարձաւ պահապանը եին աւանդութեանց եւ սովորութիւններուն:

Այսպէս էր ան:

Եւ ես իրմէ եմ եւ ունիմ հպարտութիւնը անոր: Արդեօք խնամքի ծառէն, խնամքէն գատ կարելի՞ է սպասել ուրիշ պտուղի: Ես իրմէ եմ եւ ունիմ հպարտութիւնը անոր:

Դեռ փոքր, ան կը պատմէր անցեալի իր փառքերէն ու ցաւերէն, երբ անկողնոյ մէջ, կիսաբաց աչքերով կ'աշխատէր իմանալ: Կիսաբաց վիճակով կ'անիծէր այդ սեւ անցեալը: Անդամ ժամանակը կատարեց իր կեդրոն գործը: Աշխարհը պաշտպան դարձաւ անիրաւութեանց, մինչ ես անգիտակ մըն էի աշխարհի անցադարձերուն:

Սակայն, հազէն եկած ամէն ինչ պիտի վերագառնայ հոգին: Այս ճշմարտութիւնը միտքարեց զիս: Բայց ծանրացաւ նաեւ ցաւալի ժամանակը ուսերուս վրայ, եւ ես մնացի առանձինն ու կ'իմէի: Ըրի լաւագոյնս մտնալու համար զայն:

Հիմա, ամէն անգամ երբ կը տեսնեմ այն գաւառը, որմէ խնամ էր մայրս, կ'ունենամ զգացումը ցաւին: Երբ կը կենամ իր հայելիին առջեւ, կը տեսնեմ անա քաղցրօրօ իր ստուերը, կ'աւ լամ եւ արցունքները կ'աւ գան այնպէս, ինչպէս մանուկ օրերուս:

Կը պատմէի հայելին ու կ'ըսէի, քէ ինձ գեղեցիկ է այնքան, որքան մայրս էր, երբ կը կենային դէմ դիմաց:

«Ես մեծ եմ անոր մեծութեամբ, գեղեցիկ՝ անոր գեղեցկութեամբը: Գիտե՞ս, քէ անոր աչքերուն զոյնը երկինքի կապտուն էր, անոր պղտիկ հասակը բարձրէն, աշտերուն կարմիրը՝ խնամքէն:

«Կարմիրը շրջանակիս անոր մարտիրոս նախահայրերուն արիւնէն է: Մեմք երկուքս երկուտեանց կ'իմէի կարծես: Ժամանակը զարկաւ ինծի եւ զիս վերածեց ապակիի անարժէք կտորի մը: Կը լսե՞ս անուշահոտութեան սրտակներուն սա փափսուքը: Կը հասկնա՞ս անոնց լեզուն, կ'ուզե՞ս չոր քարգմանը ըլլամ անոնց: Կ'ըսեմ անոնք.՝ Մայրդ, ինձ անուշ քուրմուկ մըն էր կենեմքին մէջ: Նայնիսկ զարման ծաղիկները օր մը գանգատեցան քնութեան դատաւորին այդ քուրմուկին համար: Այսպէս միշտ զգիտի՞ք էր ան: Ոչինչ տարօրինակ է հաս, վասնզի ան կու գար խելացի ցեղէ մը, կ'ըսեմ էր սրբազան խունկով:

Եւ արդ, անցորդ բարեկամ, որ կը փախայ այդ քարձումբէն, մեղմացաւ քայլերդ, չէ՞ որ ռաբբիաց տակ կան բաղուած քաղցր հագիներ: Եթէ կ'ուզես պահել այդ ռաբբիան մախապներուն յիշատակը, մախընտրելի է, որ ռաբբիդ գետնին չդպչիս, երբ կը փախաս:

Եւ յանկարծ լսեցի մօրս մեղմ ձայնը, որ կ'արթնցնէր զիս մրափէս.

«Ի՞նչ ունիս, գաւազն, երազիդ մէջ գեղտէկներու հետ կը խօսէ՞ք, դիւրի՞ք էին անոնք: Ամէն ինչ գնաց եւ ես ծերացայ եիմա. պիտի չուզէի յիշել եւ յիշեցնել գեղեցկութիւնս: Պիտի յիշեմ միայն, որ Հայուհի մըն էի եւ, ժամանակի թշնամիք...»

ՆԱԳԻՄ ԶԱՊԻՆ

ՆՈՒՐԵՆԲԵՐԳ ԼԻՆԵՐ

Ա.

Ի գուր եմ ասում, թէ Հայը տանջուած
 Ձի՛ եղել կեանքում հաշա ու միաբան.
 Թէ մրա հոգում դարան է մտած
 Երկպառակութեան որպէր դրուծան:
 Թէ հայ պատմութեան թերթերում դեղնած
 Արձանագրուած տխուր էջեր կան.
 Թէ յիւցագնական դարերում՝ անցած,
 Սասնայ Դաւիթի, Վահագնի անուան,
 Ամսառ վարդանի ու Դաւիթ Բէգի
 Եւ մինչեւ Դրոն, Նիկոլը-Դուման,
 Այդ Աստուածատիպ բոլոր փառանքի
 Յիշատակուած է՝ յաւէտ անիծեալ
 Անուններ դժնի, մի վասակ Սիւնի,
 Դաւո ու Աւիս,
 Ինչպէս Աթիլիս.

Դա՛ հետեւանք է սոսկ այն քառսիմ
 Որ ստեղծել են քոնակայների
 Դաւադիր ոգին, սարսափն ու սուրն.
 Եղծել թարգմերը մեր առաքինի,
 Յանել եմ սերուն՝ յիսի ու դաւի,
 Եւ որպէս խարան փակցնել թուֆով
 Մեր հանճարածին ցեղի ճակատին:

Բ.

Իսկ երկիրը մեր, դաշտերն արեւշատ,
 Անցնող ու դարձող հզոր ազգերի
 Քառուղիներում որպէս մրցադաշտ՝
 Տրտրուել են միշտ, մերխուժողների
 Կրունկների տակ:
 Բախուել են մրանք մեր վէս լեռներին,
 Եւ տարերքի պէս՝ շառաչել, անցել...
 Թողել են անբն ու եղեռնածին
 Իրենց սեւ գործի արգասիքը սին:

Կը լինէր անշուշտ ե՛ւ խաղաղութիւն,
 Եւ քարօր մի կեանք բոլորի համար.
 Զէր լինի խուժում մայսնիք ու արիւն,
 Թէ լինէր հօրք եւ իրաւարար
Նուրեմբերգ արգար,
 Բոլորի համար:

Թէ ցեղասպանը դատուէր ու փետուէր,
 Թէ ամէն գոյնի բռնակալների
 Ու սատրապների կոկորդից բռներ
 Մի արդարադատ եւ իրաւարար
Նուրեմբերգ անչար՝
 Բոլորի համար:

Խիզըն «մեծերի» քէ մեռած չըլներ,
 Եւ իրենց գործի, արարքի համար
 Պատասխան տալու երկիւզը լինէր,
 Ո՛չ մի բռնակալ «իզմերի» համար
 Մի ողջ ժողովուրդ սրի չէր քաշի,
 Ու նրանց հոգը՝ յանուն սուտ բանի
 Անուրդ չէր դնի.

.

Այս ատոմական դարում լուսաւոր,
 Ընտանիքներում ազգերի բոլոր
 Զէր լինի կեղծիք ու շահագործում,
 Զէ՛ր լինի *գաղութ* ու բռնադատում –
 Ա՛խ, քէ աշխարհում,
Ազգերի Ուխտում
 Մի նոր ու հօրք
 Նուրեմբերգ լինէր:

ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Թեհրան, Իրան

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

Զ.

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆԸ

Ծիրին-կատարի զաղաթին արեւը ոսկեզոյն թափ կապած էր, երբ Բոսնիայի ուխտաւորները Մովսսարի այդ բարձունքին հասան:

Վերելքը վանքէն դէպի Ծիրին-կատար, ժայռոտ ձորերէ եւ ցցուն բարձունքներէ կ'անցնէր, եւ ուղեւորները յոգնած էին: Պահ մը կանգ առին Ծիրին-կատարի ուսին եւ ընտելեան վեհափառ տեսարանը դիտեցին:

Սարհատ ընտանի այս բոլոր վայրերուն մնաց բարով կ'ըսէր իր սրտի խորերէն: Պատանութենէն երիտասարդութեան անցած էր այս միջավայրին մէջ, ու մարտական երազներու մկրտութիւնը ստացած էր Մշոյ դաշտի խորախորհուրդ մեհեանի դմբէթին տակ: Փախստական ընկերներ ունէր, որոնք խոր ձորերուն մէջ ապաստանած էին: Արաբոն մեկնած էր Կովկաս, յոյս եւ սպասում ձգելով իր հետեւորդներուն: Նորահաս ընկերներ ունէր Մուշէն եւ Դաւաշէն, աղատութեան հրդեհէն բռնուած, որոնց հետ կոպուած էր Ազատութիւն կամ մահ ուխտով: Ու հիմա, այս բարձունքին այդ բոլորէն կը բաժնուէր: Տխրութիւն մը համակած էր էութիւնը, ու կարօտով հոս կը դառնար տեսնելու դաշտի ծով տարածութիւնն ու անկէ բուրբալառող գիւղական ծուխերը: Վանքը կը մնար կատարներու լուքին տակ, կը դառնար խորհրդաւոր իր հինաւուրց դմբէթներով եւ մազադաթեայ գրքերով:

Տխրութեան այդ պահուն իր հայեացքին կը բացուէին նոր հորիզոններ, բարձրաբերձ Սասունը:

Հող, այդ բարձունքին՝ վանքի դմբէթի ծանրութիւնն ու լեռներու ճնշումը չէր զգար իր հոգիին վրայ: Այժմ դմբէթներու զաղաթէն, վարի աշխարհը կը չափէր, վերէն, կարծես երկնքէն առկախ:

Սարհատ եւ Աղամ լռակեաց դարձած էին, խորհրդածութիւններով ծանրաբեռն, մինչդեռ քեռի Օհան եւ քանի մը ուխտաւորներ վանքին մէջ անցուցած քանի մը օրերը հեքիաթային չափազանցութեամբ իրարու կը պատմէին:

✽

Ծիրին-կատարէն վար իջան Կուրտիկ լեռան կողերը եւ անկէ ուղղը-ւեցան վայրէջքով մը դէպի Շէնիկ գիւղը, որ Անտոքի ստորոտը փոքրիկ դաշտի մը վրայ կը տարածուէր: Արեւը հորիզոնէն բարձրացած էր քանի

մը հասակ, երբ ուխտաւորները գիւզը հասան եւ կանգ առին իշխան Գրգոյի տան բակին առջեւ:

Աւանդական սովորութեամբ, տան մեծաւորին տիկինը զանոնք հիւրասիրեց հաց ու թացով: Ուխտաւորները, կշտացած ու հանգստացած՝ կը պատրաստուէին դէպի Անտոքի կողմերը մագլցել, երբ տեսան իշխան Գրգոյի իր հետեւորդներով վերադարձաւ տուն: Անոնք գինուած էին ու Հետեւորդները պարթեւահասակ երիտասարդներ էին: Ուրախութիւն ու քաջութիւն կար անոնց դէմքին վրայ: Բոլորը ոտքի ելան ի յարգանա իշխանին, որ բարձր Սասունի քաջ հերոսի անունը ունէր եւ իր տունը բաց էր բոլոր ճամբորդներուն առջեւ:

— Բարո՛վ եկած էք, ուխտերնիդ կատար, ո՞ր շրջանէն էք, — ըսաւ իշխան Գրգոյն եւ հրաւիրեց, որ նստին:

Պատրաստարանը անուշտ ջրեկտն Օհանը պիտի ըլլար:

— Բանց գաւառէն, այս տիրացուն ալ իշխան Կրպէի եղբոր տղան է՝ Հիմա մեր շրջանի թագ ու պարծանք...

— Շատ մի ուռեցներ, քեռի Օհան, գորտը կը պայթի, — ըսաւ Սարհատ: Մենք դեռ հաւկիթէն նոր դուրս եկած ճուտեր ենք, ու խօսքը ուղղելով իշխան Գրգոյին:

— Իշխան Գրգո՛, փառք Աստուծոյ որ գինուած երիտասարդներ կը տեսնեմ շուրջը համախմբուած, վանքի շրջապատին մէջ, միայն Արարօն, Մխան եւ Լեւոնը գէնքով կը պտտէին, մնացած ժողովուրդը անգէն հօտի կը նմանի:

Սարհատ աչքը մտաւ քաջակորով իշխանին, եւ տեսնելով որ Արարօյի մասին տեղեակ է, խօսքը անմիջապէս այդ մասին դարձուց:

— Լսեցի որ բանտէն փախած է. է՛հ, եթէ մեր կողմերը գայ, կառավարութեան ձեռքը անոր չի հասնիր:

— Իշխան Գրգո՛, Արարօն մեկնեցաւ դէպի Կովկաս գէնք ու կռուողներ Տարօն բերելու համար, — ըսաւ Սարհատ տխրութեամբ:

— Շատ հեռու տեղ ձեռք նետած է, — ըսաւ իշխանը մտածելու, — ինչ որ պիտի բնենք, մենք մեր ձեռքովը պիտի բնենք, մեր ունեցած շունեցածը կու տանք գէնք մը ձեռք բերելու համար: Հոս մենք առանց գէնքի կրնա՞նք ապրիլ: Մենք Մերկէ—Մոզանէն կու գանք, մեր վրանները այդ մարդադեմ տիկներուն եւ անտառակներուն մէջ գետեղուած են, մեր ու Քիւրտերուն սահմանը այդտեղ է, եթէ մեր գէնքերուն բերանը անոնց կողմը ուղղած չըլլանք, մէկ օրուան մէջ մեր ուշադրները կը քշեն կը տանին: Եօթը դը—դալներու պատմութիւնը անշուշտ լսած էք: Ժամանակին այդ անօրէնները հիւր եկան մեր ամառանոցը եւ յիսուն հոգի հիւրասիրուեցան ըստ աւանդութեան, բայց կողոպտելու իրենց սովորութիւնը չմոռցան եւ եօթը դըալներ իրենց ծոցը զրին եւ այդ առիթով կռու սպառահեցաւ: Կռիւր տեւեց երկու—երեք տարի, եօթը հոգի Քիւրտերէն սպաննուեցան, երկու հոգի ալ մեզմէ: Վերջապէս Քիւրտերը մեռածներու արունքը վճարեցին եւ ետ դարձուցին մեր եօթը դըալները: Ատկէ ի վեր անոնց ոտքը Մերկէ—Մոզանէն չ'անցնիր:

— Աստուած ձեր գէնքը անսպասելի ընէ: — քեռի Օհանն էր որ մագլթանքով կը փակէր եօթը դըալներու հեքիթը, որ սակայն իրողութիւն մըն էր:

— Առանց գէնքի այս դազաններուն մէջ մենք դերի կը դառնանք, գտնե՛ք եւ ձեր շրջանի երիտասարդներուն իմ կողմէ պատուիրեցէ՛ք, որ ամէն

մէկը զէնք մը ճարէ, զէնքով կրնանք մեր պատիւը փրկել, այլապէս այդ զիջատիւններուն ախորժակը սահման չունի: Սահմանը զէնքն է:

Ուխտաւորները շնորհակալութիւն յայտնեցին եւ բռնեցին Անտրի ճամբան: Իրենց հանդիպող Սասունցիները զինուած էին եւ ոմանք ալ սուր ունէին: Դաշոյնը սովորական դարդ մըն էր ամէն մէկ երիտասարդի կողքին:

Սարհատ եւ Աղամ աւելի հասուն մտքով այս երեւոյթներէն եղբայրացիներն, թէ հայ ժողովուրդը ազատ հայրենիք մը ունի այս բարձունքներուն վրայ, ու այս երեւոյթը հրեւեանքով լեցուց անոնց սիրտը:

Ուխտաւորները Անտրի վրանները հոսան, հրը սրեւը մեծղի լեռան գաղաթէն արեւմուտք կը մտնէր: Կրկին իշխան Պետոյի տաղաւարին հիւր եղան: Տանտիկիներն ու երիտասարդները յիշեցին, որ Զորեպան Օհանը քանի մը տարի առաջ պատանի մը դէպի Առաքելոց վանքը կը տանէր, ու հիմա կայտառ երիտասարդ մըն էր իրենց հիւրը, ճառագայթող խորհուրդ մը դէմքին: Հարսներն ու աղջիկները անոր կը նայէին բաղձանքով լի աչքերով ու իրարու կը հաղորդէին իրենց տպաւորութիւնները:

Հիւզակներէն ու վրաններէն բողբոջէին երիտասարդներ ու հովիւներ ճամբարուկեցան իշխան Պետոյի վրանին առջեւ, աշխարհէն լուր մը առնելու համար: Անոնք զինուած էին եւ ուր որ նստէին՝ պահակի իրենց դերը չէին մոռնար:

Սարհատ եւ Աղամ անոնց պատմեցին Տարօնի լըջանի մէջ բռնկած շարժումները, Կիւլիգարի դատը, Արարոյի եւ Մխոյի ձերբակալութիւնը, Արարոյի բանալի փախուստը եւ մեկնումը դէպի Կոյկաս՝ ժարտական ուժեր Տարօն բերելու նպատակով:

Մեծղի լեռան լանջին հաւաքուած այդ երիտասարդները ողևորութեամբ լսեցին ուխտաւորներու տուած լուրերը, խանդավառուած ու անձնադատ՝ միմեքեան ըսին.

— Թող Հոս վերադառնան զինուած քաջերը, թշնամու ձեռքը այստեղ մեզի չի հասնիր:

Երզն ու պարը վրաններու երեկոյսան ժամանցն էին: Երգի ձայներ զանազան վրաններէ կը լսուէին, ու տեղ տեղ պարի ելած էին հովիւները:



Արշալոյսին, հովիւներն ու հօտերը երբ կը մեկնէին, ուխտաւորները ճամբայ ելան:

Ուխտաւորներու փոքրիկ կարաւանը ծանօթ ճանապարհով անցաւ Գերին եւ Տալուրիկի բարձունքներէն հասաւ Սպիտակ աղբիւր, մանկական վերջիւններով լեցուն:

Վերադարձի այս ճամբուն վրայ, Սարհատ կրկին ապրեցաւ իր մահկութիւնը, յիշեց Դուրի հեքիաթը, որ իրեն պատմած էր Զորեպան Օհան, երբ ուխտի կ'երթային Հեղինի վանքը, ուր Սուսամի եւ իր կեանքը իրարու պիտի կապուէին, այնքան յուզական պարզութեամբ:

Քարերն ու աղբիւրները այլևս իրեն կը խօսէին մտերիմ ձայնով: Ամէն արձապանդ Սուսամի սրտառուչ ձայնը կը բերէր իրեն: Մարմինն ալ կը ծանրանար մտածումներուն չափ, ու որքան կը մօտենար հայրենի տունին, այնքան խոհերը կը բարդանային ու ապրումները կը խորանային: Ագիւր, հայրենիքը, ազատութեան հրդեհը զինք առնէնքա՞ծ՝ կ'ընդունուէին Սուսամի սիրտը հեռ, խորունկ տաղնապի մը մատնելով Սարհատը:

Ճանապարհը երկար էր, ու Սարհատի մտածութիւնները վերջ չունէին:

Իր ուղին անորոշ էր եւ իր ձգած բաղձալի երջանկութիւնը երկուքի բաժնւում։ Ո՞ր երջանկութիւնը պիտի ընդգրկէր։ Կը մտածէր, թէ կարելի՞ էր այս աշխարհի մէջ երկու երջանկութիւն մէկտեղել։ Ինչ որ շատ որոշ էր իր մտքին մէջ, իր նուիրական ուխտն էր, ապատութեան ընծայուած։ Այս վճռական համոզումէն յետոյ, սակայն, սրտի ուխտ մը ունէր, նուիրապետութեամբ՝ Հեղինի կանանչ դմբէթին տակ, ու Սուսմանից տունին մէջ։ Ատկէ՛ տլ չէր հրաժարեր։

Մտածումներով ծանրաբեռն, խոհուն դէմք մը ստացած էր Սարհատ, երբ իր հօրեղորք եւ ջորեպան Օհանիկն հետ կանգնեցան իրենց դրան առջեւ։ Վերջապէս պահն էր, ու իշխան Կրպէն, իր սովորութեան համաձայն սաքուն նստած, հանդարտօրէն խալիոնը կը ծխէր։

Ուխտաւորներու երեւումին, ոտքի ելաւ ու իր դրկին մէջ առաւ Սարհատը, որ այնքալ գիւղի հին անտառի տղան չէր։ Կրպէի սիրտը ելած էր։ Բան չխօսեցաւ, միայն Սարհատի ձեռքը բռնած՝ տարաւ իր քովիկը նստեցաւ ու լուսնիմար յուշումն ու ուրախութիւնը ապրեցաւ։ Սարհատով չէնցած կը նկատէր իր տունը։

Կրպէի կէնը եկաւ եւ համբուրեց Սարհատը։

— Դուք բարո՛ւմ եկար, դարձի՛ւք տղաս, դալդ բարի ըլլայ, այս մարդուն աչքերը ճամբան մնացին քեզի սպասելով։

Տան ու գրտիկ հարսներն ու աղջիկները համախմբուեցան եւ հեռունէն զեղումով դիտեցին Սարհատը ու ժպտեցան անոր։

Ընտանեկան յարկին տակ, պահ մը վերադարձաւ իր մանկութեան օրերուն, եւ սրտանց խօսեցաւ դուռ ու դրացիին, մեծին ու փոքրին հետ, հին օրերու զգացումներով։ Բայց լրջութիւնն ու խոհունութիւնը կը մնային անոր դէմքին, ու այդ երեւոյթը՝ գիւղացիներուն վրայ կը թողնէր այն տպաւորութիւնը, թէ Սարհատը վանքէն եկած ուսումնականի մը կերպարանքն ստացած էր։

Իշխան Կրպէի տունը սօնական երեւոյթ մը ստացած էր, հոն հետդհանէ հաւաքուող գիւղացիներուն եւ կանանց բազմութեամբ։ Կրպէն չորրջապատուած էր գիւղացիներով, իսկ իր եւ Սարհատի եղբայրները ոտքի կեցած՝ կը յարգէին բազմութիւնը, որ եկած էր իրենց տունը պատուելու եւ Սարհատը տեսնելու։ Տան բոլոր երիտասարդները ժպտուն ու գոռովալիկ կը դիտէին Սարհատը, որ ժայռի կտորի մը պէս նստած էր իշխան Կրպէի քովը, խոհուն ու խորհրդաւոր դէմքով։

Առաջին երեկոն էր, որ Սարհատ հայրենի կտուրին տակ կը ննջէր բոլորի գուրգուրանքին առաքկայ դարձած։

Գիշերը երբ առանձնացաւ, իր անկողինին շուրջ համախմբուեցան երիտասարդ հօրեղբայրներն ու իր եղբայրները ու երկարօրէն խօսեցան աշխարհքի անցուղարձէն։

Հայրենի կտուր, սփոփիչ բոլոր վերադարձող զարկաներուն։

Յաջորդ օրը, Սարհատ կ'արթննար հայրենի ծխանին տակ, մանկութեան օրերու ուրախութեամբ, ու իր առաջին դարձը կ'ըլլար այցելութիւն մը տալ արտ ու ավին, այգիներուն ու ծառերուն, որոնց հետ այնքան յիշատակներ կային կապուած։ Բայց անմիջապէս ինքզինք կը դպար արդէն իրմէ օտարացած միջավայրի մը մէջ։ Արարոյի խումբին իր ընկերակցութիւնը փախստականի եւ դժուարութիւնները սիրական էին, լայն հորիզոններու վրայ նետուելու յանդգնութիւնը իր մէջ եւ կու դար, մինչդեռ գիւղը հին օրե-

բու անփութիւն, տափակ կեանքի պատկերը ունէր ու ինք իրենց այգիներու եւ արտերու համար անպէտք արարած մըն էր: Տան յոյսերն ալ պատկող մէկը չեղաւ սակայն, Տէր Ղազարի տեղը բռնելու համար: Իր աշակերտութիւնը Աւագեւոց վանքի մէջ, զինք կը նետէր աղատազրական շարժման ճամբուն վրայ անդարձօրէն, ու հիմա հայրենի տան մէջ ինքզինք օտար կը դնար:

Սարհատ միայն անգամ մը իր եղբօր եւ երիտասարդ հօրեղբոր հետ ամառանոցի հիւղակները բարձրացաւ, իշխան կրպէի հրացանը առած, անոր արտօնութեամբ գիշեր մը անցընելու համար: Իր հետ լեռ բարձրացողները կը մտածէին թէ՛ Սարհատ հիւղակներու եւ վրաններու շրջանին մէջ ժամանակին պատած ու գիշերած պատանի մըն էր ու թերեւս այդ պատշաճ ալ ուրախութիւն մը կ'ընար բերել այս ուսումնական երիտասարդին, որ դէռ զին մէջ բան մը չէր գտներ ընելիք ու տխուր էր:

Իշխան կրպէն պատուիրած էր իր եղբօր, որ հիւղակները հասնելուն պէս, ու մը մատաղ ընեն ի պատիւ Սարհատին, անոր հալալ բաժին նկատելով այդ գոհողութիւնը: Երբ վրանները հասան, հօրեղբայրը նոր վերադարձած հովիւներուն պատուիրեց, որ լաւ ու մը բերեն աւ խնդրեց Սարհատէն, որ աղ տալ մատաղցունէն: Սարհատ յուզումի մատնուեցաւ այս սրտառու Վարձուցին համար, աղը երկարեց ուլին եւ հօրեղբայրը ուլը մատղեց Սարհատի առջեւ:

— Բարո՞ւմ եկար հայրենի դոպաները, այս լեռներն ու մարդադէտինները շատ նայեցան քու ճանապարհին: Մեր աղբիւրներու ջուրը հալալ ըլլալ քեզի:

Սարհատ զգացումներով զեղուն պահ մը կ'ապրէր ու սրտանց կ'ողջունէր ամառանոց ելլող բոլոր հովիւներն ու հարսները, որոնց նայուածքին մէջ պուրջաւորեց ու սէր կը տեսնէր հանդէպ իրեն:

Սարհոյ ընտելիւնը խօսուն էր, ու համապատասխան իր զգացումներուն: Շատ անգամ տեսած էր Սուսամը, որ հիւղակէ հիւղակ կ'անցնէր եւ պատանական իր սիրտը կը թրվար անոր անցքին հետ:

Երեկոյան երբ մատաղի խորովածը կը մատուցուէր, կեանքը արդէն ռկած էր ետալ հիւղակներուն շուրջ:

Ճաշի ընթացքին, տեսնելով որ շրջապատին մէջ Հեղին գիւղի վրաններն ու հիւղակները չկան, հարցուց.

— Այս տարի հիւղակները քիչ կ'երեւին, վառուած կրակներէն այդպէս կը դատեմ: Ժամանակին մինչեւ գիմացի կսգերը հիւղակներ կը հաստատուէին:

Պատասխան տուողը հօրեղբօր կինը եղաւ.

— Այս տարի Հեղինի օշխարները ուրիշ կողմ վրան դրած են, մեր մարգագետիններէն հեռու, այս լեռան անդիի երեսը:

Սարհատ Սուսամին հանգիպելու բաղձանքին մէջ յուսախար եղաւ: Լուսն թաղուեցաւ մտածումներու մէջ, բայց հաճոյքով լսեց այն խօսակցութիւնը, որ բերնէ բերան անցաւ Հեղինցիներու յիշատակութեամբ:

Հօրեղբօր կինն էր խօսողը նորէն.

— Սմէն տարի այս կողմերը կու գային, առաջին երկու տարին իշխան Վարդանի աղջիկն ալ անոնց հետ հիւղակները կ'ելէր, ամէն աստիճան քու մասիդ կը հարցնէր: Հիմա արդէն հարսնու աղջիկ է եւ հիւղակները չի գար: Հարսները խորհրդաւոր ժպտով կը քննարկեն, առանց իրենց ակնարկը հետացնելու Սարհատէն, որ խոհուն էր անոնց հետ երբեք չէր

նմաներ իրենց ծանօթ անդուստ պատանիին: Ներաշխարհային խորունկ ար-
բուսով ու քաղցրութեամբ սն լսեց Սուսամի հետաքրքրութիւնը իր մասին,
ինչ որ սիրոյ իրենց ուխտին կրկնակի հաստատումն էր: Իսկ վրաններու
առջեւ հաւաքուած կիներն ու հարսները լիովին ըմբռնեցին, թէ Սարհատի
հետաքրքրութիւնը Սուսամի շուրջ էր: Ուսումնական երիտասարդը ծանր
հիւր մը դարձած էր իրենց աչքին ու անոր լուրջ կեցուածքը թոյլ չէր տար,
որ անդուստ հարսները կատակով իսկ ակնարկութիւններ ընեն:

Սարհատ յաջորդ օր կը վերադառնար գիւղ եւ մէկը չկար որ կարե-
նար զսպել հարսներուն շատախօսութիւնը: Անոնք իրենց լեզուն կ'երկա-
րէին մինչեւ Հեղին գիւղի հիւղակները, Սուսամի ականջը նետելու Սար-
հատին հետաքրքրութիւնը, ծաղկուն ձեւերով:

✽

Քանի մը շաբաթներ անցած էին այն օրէն, երբ Սարհատ վերադար-
ձած էր տուն: Իշխան կրպէն, յաջորդական խօսակցութիւններու ընթաց-
քին կրցաւ համոզուիլ, թէ Սարհատ քահանայ դառնալու եւ Տէր Ղազարի
տեղը բռնելու մտածումն ու յատկութիւնը չունի: Այդ պատճառով, երբ
օր մը առանձին նստած էին թթենիին տակ՝ ծանրութեամբ ըսաւ.

– Սարհատ, հիմա հասուն երիտասարդ ես, պատկուելու ժամանակ
է, աչքդ որո՞ւն կը բռնէ, հարս մըն ալ բերենք. թող աւելնայ հօրդ շատա-
խօսը:

Սարհատ զգաց, թէ հօրեղբայրը լուրջ գիտաւորութեամբ այս առա-
ջարկը ըրաւ ու պէտք զգաց լրջութեամբ պատասխանելու.

– Հօրեղբայր, ես ամուսնանալու միտք չունիմ, դուն հօրս տեղն ես
ու ես մեծցած եմ քու գուրդուրանքիդ տակ, ինչ որ պիտի ըսեմ թերեւս
բարկացնէ քեզ, բայց պէտք է խոստովանիմ ու ապա խնդրեմ, որ թոյլ տաս
մնամ աշակէս, ինչպէս ուխտած եմ Մոյսիսարի ժայռերուն մէջ: Ազգին ալ
մատաղներ պէտք են: Արարոյի խումբին հետ ե'ս ալ մատաղցու դառնալու
ուխտը ըրած եմ: Մեզի համար հիմա ամուսնութիւն չկայ: Լսած ես ան-
շուշտ, որ Մուսա բէկը Ղարսայ Միրոյի աղջիկը փախցուց տարաւ, ու
դատն ալ հիմա Պոլսոյ մէջ կը տեսնուի: Ի՞նչ ապահովութիւն ունինք, որ
քիւրտ ցեղապետներ օր մըն ալ մեր հարսներն ու աղջիկները պիտի չտա-
նին:

– Սարհատ, տղա՛ս, աղէկ ուխտ է, բայց շատ հեռուն դացած ես:
Մենք գիւղացիներս ուժ չունինք դիմադրելու օսմանցուն: Ի՛նչ, եթէ մենք
ալ Քիւրտերու պէս գինուած ժողովուրդ ըլլայինք, այն օր երբ ընկուզե-
նիներու տակ դուն կ'առնեցար Քիւրտերու դէմ, մեր գիւղացիները անոնց
դիմակը կը փռէին տեղն ու տեղը եւ Քիւրտերուն ոտքը կը կտրուէր մեր շըր-
ջաններէն: Քու բռնած ճամբան դժուար ճամբայ է, ստիպուած պիտի ըլ-
լաս փախստական դառնալ, տունէ տեղէ հեռու:

– Փախստական մըն ալ ե'ս կ'ըլլամ, հօրեղբայր, Արարօն եօթը-ու-
թը տարի քարանձաններու մէջ ապրեցաւ, ու խոստովանիմ քեզի, թէ
վանքէն իմ ընկերներու հետ յաճախ փախստականներու հետ, ձորերու եւ
քարերու մէջ մնացինք ու իմ կեանքը ուսումի հետ փախստական երիտա-
սարդի մը կեանքը եղաւ, տուն նստելու սովորութիւնը կորսնցուցած եմ:
Ազգը բռնկած վիճակ մը ունի, ա'լ չի կրնար հանդուրժել բռնութիւններն
ու անիրաւութիւնները, ես ալ այդ հեղեղին մէջ նետուած եմ: Հոս չեմ կրը-
նար մնալ, պիտի բռնեմ օտարութեան ճամբան, միտք ունիմ Հալէպ եր-

Թալ, եւ Թերեւս տարուան մը աշխատանքով կարողանամ լաւ դէնք մը ձեռք ձգել եւ վերադառնալ Մշոյ դաշտ, ուր փախստական ընկերներ ունիմ :

Կրպէն խորունկ մտածումներու մատնուեցաւ : Այս անակնկալ յայտնութիւններուն ծանրութեան տակ զլուխը խոնարհեցաւ կործքին վրայ :

— Սարհա՛տ, քեզի այլեւս բան մը պիտի չըսեմ : Իմ փափաքս էր, որ տուն մնայիր եւ դայն շէնցնէիր, ինչպէս ըրած են մեր պապերը, բայց դուն ուրիշ ճամբայ ընտրած ես, ըրէ՛ ինչպէս կ'ուզես, բայց մտածէ՛ նաեւ այս տան մասին, որուն սիւներէն մէկն ալ դուն ես :

Լոռեթեան մէջ երկուքն ալ խորունկ ապրումներով ոտքի ելան : Անոնք դանդաղ ֆայլերով տուն դարձան ու այլեւս խօսք չբացուեցաւ այդ մասին :

Գիւղի առօրեան կ'ընթանար սովորական ճամբով, իսկ Սարհատի համար օրերը երկար էին եւ կապարի ծանրութեամբ կը ճնշէին իր ուսերուն :

Անձան մշուշները ձորերէն վեր կը բարձրանային դէպի գիւղը, ու աղանիներու երամները ճուղ կու տային դիւղի վերերն ու վարերը : Սարհատ աշնանային տխրութեամբ՝ առիթի մը կը սպասէր, գիւղի հորիզոնէն հեռանալու համար :

✽

Մշուշոտ օր մըն էր, երբ Կալշոյի Մանուկը իր երկար հասակը տընկեց Սարհատինց սեմին :

Սարհատ ուրախութեամբ դիմաւորեց այս հին փախստականը, որ քաջ ասպատակի անունը շահած էր առաջին տարիներուն : Բռնաց եւ Խիանքի դաւառները ծանօթ էին Կալշոյի Մանուկին : Ան էթէ չէր կրցած տուն ու տեղ մը շէնցնել, զոնէ կրցած էր չափուիլ քիւրտ աւաղակներուն հետ, ու զարմանքի մատնել աշխրհապետերը : Հայոց մէջէն կ'ընամբ այսպէս կարծի մը ելլել ու երբեմն կ'ընկնէին անցնող ու դարձող կարաւաններուն ճամբան կտրել : Արարոյի եւ Լեւոնի Կովկաս մեկնելէն ետք՝ խումբին միւս անդամները ապաստանեցան իրենց շրջանները, սպասելով նոր դէպքերուն, որոնք զիրենք մարտական կեանքի պիտի կոչէին :

Կալշոյի Մանուկը ժամանակ մը թափառեցաւ Բերդակի եւ Առաքելոց վանքի շրջապատին մէջ, բոլորովին մինակը եւ միւս հետապնդուած : Միտքը եկան աղգականները, որոնք Մասունէն հեռացած էին եւ հացթուխ դարձած Հալէպի մէջ : Այս մտածումը ճամբայ բացաւ անոր Հալէպ հրթալու, նոր կեանք մը սրունելու : Արկածախնդրութիւնը Մանուկի նկարագրին հական մասն էր, ու ամէն ճամբայ իրեն համար զործի նոր փորձ մը : Ան դրացի դաւառէն եկած էր Մակթինի յատկապէս Սարհատը տեսնելու եւ աւսոր յայտնելու, թէ ճամբայ պիտի ելլէ դէպի Հալէպ :

— Երթանք Հայպու քաղաք, հոն աղգականներ կան, Բռնաց եւ Խիանքի շրջաններէն շատեր հոն հաստատուած են : Ատեն մը հոն մնանք, տեսնենք թէ աշխարհը ինչպէս կը դառնայ :

Սարհատ հօրեղբոր յայտնեց, թէ վաղը ճամբայ պիտի ելլէ դէպի Հալէպ, Մանուկի ընկերակցութեամբ : Տնեցիները շուարումի մատնուեցան :

— Բարի ըլլայ ճանապարհդ, — ըսաւ Կրպէն, — հօրեղբայրներդ եւ եղբայրներդ ասկէ ետք տունը պիտի կառավարեն, ես տարիքս առած եմ, առաջուան ուժը չէ՛ մնացած վրաս : Այսպիսով քահանայական սերունդը կը վերջանայ մեր տունէն :

Մշակաւորվ կը խօսէր այս խիստ մարդը, որ այլեւս նախկին որսորդը եւ գիւղին իշխանը չէր զգար ինքզինքը, բայց հոգիին խորէն հպարտ էր Սարհատով, որ քաջութեան գրաւականն ունէր ամրակուտ իր կապին մէջ:

Տնեցիները յուզումնաւոր եղան այս բաժանումէն: Սարհատ քահանայական սքեմը իր ուսերուն չառնելով հանդերձ՝ տան հպարտութիւնը դարձած էր, ու հիմա կը նետուէր հեռաւոր ճանապարհներուն վրայ, դէպի ճակատագրական Հայէսլը, ուրկէ շատ քիչերը կը վերադառնային տուն: Սասունցի Դաւիթի հեքիաթէն պիտէին, որ հայրենական տունէն վտարուած փոքր Մհերը Հայպու քաղաքը պիտի երթար: Այսպէս էր Դաւիթի եւ խանութի կտակը:

Գացած է մաքր մաւրաւսէս,
Ուժն ու խաչ պատերազմին իմ թուէս,
Գնա՛ Հայպու քաղաք,
Հոն քու սննեակը սարճուկ է,
Հոն քու հացը քիտուկ է:

Ճակատագրական Հայպու քաղաք, ուր, Սասունցիները, ժայռի պէս մարդիկ, զլորուելով իրենց լեռներէն, դարերով պիտի զային եւ հացթուխ ու ջաղացական դառնային...

Գլխիկ Մհերի ճակատագիրը ժառանգած, Սարհատ ճամբորդ էր դէպի անծանօթ քաղաքը:

Է.

ԴԷՊԻ ԱՆՇԱՆՈՒ ՔԱՂԱՔԸ

Սարհատ եւ Մանուկ արշալոյսին՝ ճամբայ ելան դէպի հեքիաթային քաղաքը: Տնեցիները ամբողջ ոտքի էին ճամբորդէքի այդ պահուն: Կրպէն տխուր էր եւ յուզուած, իսկ կիներու եւ հարսներու աչքին մէջ արցունք կար յանկարծուստ մեկնումին առթիւ:

Անոնք անցան Ժանօթ բլուրներէն անդին, մտան Տիգրիսի մէկ ճիւղի խորխորատներուն մէջ եւ ուղղուեցան դէպի Ծարդին, հին Տիգրանակերտի աւերակները:

Այս տառջին կայանը կը հասնէին Ժանօթ շրջաններէ անցնելով, ընտանի բնութեան մը լեռներու, ձորերու եւ անտառներու դրացնութեանը մէջ, ու բնութեան այս ընկերակցութիւնը միթիթաբանք մըն էր իրենց. անոնք մտածումն իսկ չունեցան, թէ օտարութեան ելած են: Բայց երբ Ծարդինէն ճամբայ ելան Տիգրանակերտի դաշտային ճանապարհը բռնելով, խառնուած կարաւաններու, Սարհատ օտարութեան դժացումը ունեցաւ ու խորհրդածեց:

— Ո՛ւր կ'երթամ, ո՛ւր է Հայպու քաղաք. իմ ի՞նչը կորած է հոն:

Կարծեա թէ պզտիկ Մհերն էր, որ կը խօսէր Դաւիթի գերեզմանին վրայ:

Անորոշութեան այս ներքին յուզումին ու մտածումներուն մէջ, ան

կը դգար, թէ լեռնաշխարհ մը իր հոռու կը ձգէր, սրուն վրայ Սուսամի գեղական ծածկերը կը ծածանէին, որպէս իր սրտին դրօշակը:

Մանուկ իր երկար հասակով շվտի մը կը նմանէր, եւ արդէն անոր ասպատակութեան օրերուն, շատեր զայն շվտ կը կոչէին: Ամէն դժուարութեան դիմացոյ մարդ էր եւ փախտական կեանքի հնարքները զիտէր, կրնար գլուխ պահել ամէն տեղ ու յարմարիլ միջավայրին: Ծամբու ընթացքին ամէնուն հետ շվտով կը ստեղծէր, միամիտ կերպարանքով ու շուտով բոլորին կենսադրականը կ'ունենար իր մտքին մէջ: Որով՝ ապահով կը դգար իր ճամբորդութիւնը: Ու երբ ասուէր, թէ վտանգաւոր տարրեր կային կարաւանին ընկերացոյ, յաջորդ կայանին Սարհատին կ'ըսէր.

– Սարհատ, երկար ճամբորդութիւնէ յոգնած ենք, քիչ մը հոս մը նանք:

Երբ արշալոյսին կարաւանը ճամբայ կ'իջէր ու իրենք միեակ կը մը նային, քմեքմեքով կ'ըսէր.

– Շունները շատ էին այս ֆրեպաններուն մէջ: Այսօր տեղի կարաւան մը պիտի անցնի այստեղէն, անոնց հետ կը շարունակենք ճամբան: Թոշ քիթը կախած ես սգաւորի պէս, ամէն օր Մովսսարի ժայռերուն մէջ՝ զդատի պտտէինք: Սոսոր ճամբաներն ալ հետաքրքրական են: Հիմա մեր գլուխները պահենք մեր ուտերուն: Հարկաւ օր մըն ալ մեր աստղը պիտի փայլի:

Սարհատ թէեւ խտրելով կը յիշէր իրենց խումբին ցրտմը, բայց հագեպէ կը քաջաբերտէր Մանուկի ճակատագրական անտարբերութիւնն, ու ատիկա ուժ կու տար իրեն ճամբան շարունակելու: Իր վերջնամները, փախտական օրերու խանդավառութիւններն ու Սուսամի երազային ներկայութիւնը ժամանակը կը կրճատէին ու, երբ կայան մը կը հասնէին, պահ մը կը մոռնար այդ բոլորը ու կը հանգստանար:

Մանուկը զգալով Սարհատի ապուստանն ու գէպի զարիպութիւն ելլելու ներքին մտահոգութիւնները, շատ յաճախ անոր կը պատմէր փրական կամ հեքիաթային գրուածներ, որոնք տեղի ունեցած էին այս ճանապարհներուն վրայ. ան կը զարդարէր իր խօսքը այնքան երեւակայութեամբ, որ հերոսապաշտ Սարհատը կը մոռնար ճամբու յոգնութիւնը, կը մոռնար իր վիշտը, նոյնիսկ կարծես կը վերագտնար հերոսական կեանքին:

Մօտեցած էին անծանօթ քաղաքին եւ յաջորդ օրը մօտեց պիտի դորժէին անոր դարպասներէն ներս, եփրատը կ'անցնէր ընդարձակ դաշտէն պղտոր ու անշարժ դնացքով մը: Մանուկ առիթը դտաւ ըսելու.

– Տե՛ս, մեր դուլալ աղբիւրները, որոնք Բիւրակնի կապոյտ լճակներէն կը բխին ու ջրվէժներով ու ճերմակ փրփուրով կը զարգարեն մեր լեռներն ու ձորերը, հոս, արարական աշխարհի սահմանին՝ պղտոր ու անշարժ ճահիճի կերպարանք առած են: Հոս այս գետի եզերքներու վրայէն ի՛նչ կտրիճե՛ր անցած ու դարձած են, որոնք նշանաւոր աւազակապետներ եղած են: Ի՛նչ, ի՛նչ մարդ էր Համմէ Մուսկին, որ իր կտրիճներով դուրս գու գար միւսուսէն մինչեւ Հալպու քաղաք, իր նիզակին տիրապետութեան տակ ասնելով ամբողջ տարածութիւններ: Ուղտերու եւ սլիսարներու հօտեր կը քչէր–կը տանէր, կարաւանները կը գինաթափէր, կը կողոպտէր եւ իր անունը լսողները կը հրաժարէին դիմագրութեան ամէն դադափարէ:

Համմէ Մուսկինն է, միզակ եւ գէճ Եւմի,

Երբ միզակը գետին կը գարնէ, գետնէն կտրելի հատը կը վերցնէ:

Այսպէս էր հեքիաթին երդը:



Հեքիաթի օրօրներով, անորոշ զգացումներով Սասնոյ սարերէն գլորած Սարհատ ու Մանուկ կը մտնէին հեքիաթային Հալէպէն ներս ու Հարացուփորձէ յետոյ կը հասնէին հայկական եկեղեցիին շրջափակը:

Եկեղեցին կառուցուած էր Սասունցի տարազիրներու նուիրատուութեամբ, ամէն ոք ծանօթ էր այդ Սասունցիներուն: Մանուկ եւ Սարհատ առանց դժուարութեան կրցան գտնել ծանօթներ իրենց շրջաններէն ու ապաստան գտան անոնց մօտ:

Մանուկի համար ամէն տեղ պարզօրէն ապաստան մըն էր, առաւել կամ պակաս տարբերութեամբ: Առտուտուն, երբ այցելեց իր ազգականներուն եւ այլ Սասունցիներու փուռերը ու տանց հալածանքի ճաշ ըրաւ անոնց հետ, արդէն յարմարած էր միջավայրին: Մինչդեռ Սարհատի համար նոր ու տարօրինակ աշխարհ մըն էր Հալպու քաղաքը: Հայկական մթնոլորտէն ու շունչէն տարբեր տեղ մը, բակերով ու պարիսպներով շրջապատուած: Մարդիկ իրենց զգումներով ու ճերմակ ակաւներով, կիներու բազմութեան մը տպաւորութիւնը կը զգէին: Քաղաքը պաշարուած բերդի մը կերպարանքը ունէր, ու խաչտարդէտ բազմութիւնները անընդհատ խուռներած շարժման մէջ էին ու անոնց վրայ կ'աւելնային չորս ծագերէն հոն մտնող բազմաթիւ կարաւաններ, զանգակներու անընդհատ զօղանջով: Համերգը կը բազմապատկէր երկաթադռներու եւ թիթեղադռներու մուրճերուն աղմուկով եւ հրապարակներու վրայ իրենց ապրանքը աճուրդի հանած մարդոց բազմաձայն պոռչտութեամբ: Պղտոր զանդուած մը որ շատ նման էր Եփրատի պղտոր ջուրերուն, ու ինքն ալ պսպղուն կաթիլ մը Սասնոյ աղբիւրներէն կ'իյնար այս պղտոր միջավայրին մէջ:

Սարհատ եւ Մանուկ յաճախ իրարու հետ էին ու խորհրդակցութեան կը նստէին իրենց բնակիչներու մասին:

— Մանուկ, ի՞նչ պիտի ընենք այս խառնիճաղանճ քաղաքին մէջ: Եթէ մեր աղբիւրներն ու փրփուրն գետակները, արարական անապատը հասնելով պղտոր ծով մը դարձած են, մենք ալ այս պղտոր ջուրերուն մէջ պիտի խեղդուինք:

— Ինչո՞ւ չուտ կը յուսահատիս, պատառ մը հաց կը գտնենք ուտելու եւ տեղ մը մեր դուռը հանդստացնելու: Ինչպէս կարաւաններով եկանք, ճիշդ այնպէս կարաւանի մըն ալ միանալով կրկին կ'ելլենք այս քաղաքէն:

— Ինչ որ կը տեսնեմ, յուսահատական է, — ըսաւ Սարհատ, — մենք միայն ոսկիին ձայնը կը լսենք Հալպու քաղաքէն, մինչդեռ խեղճ ու կրակ փռապաններ ու ջաղացպաններ դարձած են Սասունէն հոս թափուած յեռնականները: Քիչ մը ոսկի ունին, կուշտ հաց կ'ուտեն, բայց կորսնցուցած են լեռնական ժողովուրդի մը բոլոր յատկութիւնները: Ձուլուած են խառնիճաղանճին, որ անդոյն կերպարանք մը ունի:

Ամէն բան պարզ աչքով դիտող Մանուկը հանդարտութեամբ պատասխանեց.

— Ի՞նչ կ'ուզես որ ընէին այս մարդիկ, որ թրքական կառավարութեան եւ Քիւրտերու հալածանքէն ազատած, ինկած են այս առեւտրական քաղաքը: Լեռներու վրայ եթէ մնային հովուութիւն պիտի ընէին, եւ հազիւ կտոր մը կորեկ հաց ճարէին: Հոս ինկած են ու փռապան ու ջաղացպան դարձած: Բայց կրնան եկեղեցի շինել եւ օգնութիւն մը հասցնել իրենց ազգականներուն: Փառք Աստուծոյ, դեռ մեզ ալ ատեն մը պահելու կարողութիւն ունին:

— Հոս մեր տեղը չէ՛, — ըսաւ Սարգստ, — մենք հոս կը խեղդուինք: Թրքական բռնակալութիւնը հոս ներկայ է իր փաշաներով եւ ոստիկաններով, իսկ ժողովուրդը, քրիստոնեայ կամ իսլամ՝ անհայրենիք բազմութիւն մըն է, աննկարագիր խառնիճազան՝ մը: Դրամի պաշտամունքը կլանած է ամէնքը այս հեքիաթային քաղաքին մէջ, մոլորուն եւ պղտոր բողմութիւնը ո՛չ մէկ մտահոգութիւն կը պատճառէ տիրապետող թուրքին: Ո՞վ որ երկուր ժամանակ մնայ հոս, կը պղտորի եւ կը կլանուի անգոյն զանգուածէն:

— Գլուխս շատ քարերու զարնուած է, — ըսաւ Մանուկ, — քիչ մը համբերութիւն պէտք է, սմբացո՛ւր ջղերդ եւ համբերէ՛. դուն եւ ես այս քաղաքին ապրանքը չենք, ատենը պիտի դայ, որ հիւսիսի դռնէն ճամբայ պիտի ելլենք դէպի մեր լեռները:

Սարգստի տխրութիւնն ու մտահոգութիւնները քիչ մը կը մեղմանանային Մանուկի հանդուրժողական փիլիսոփայութեամբ, ու անոնք հետքահետէ մտածեցին դործ մը ճարել, որ իրենց քիչ մը ոտկի պիտի բերէր ապագայ իրենց ծրագիրներուն համար: Ու անոնք, ամէն օր տոյցելուներ ունէին իրենց ծանօթ ու անծանօթ Սասունցիներէ:

Սարգստ հետզհետէ կը ցաւ հաստատել, թէ լեռնական այդ ժողովուրդը տարագրով ու վարուելակերպով թէեւ տեղական արտաքինը իւրացուցած է, բայց իր հոգիին մէջ պահած է հերոսական լեռնականը: Անհաւան այդ կեցութեամբ անոնք կը ցած էին քաղաքի եւ զանազան շրջաններու մէջ ապահովել իրենց շրջապաններն ու փուռերը, ու, հարկ եղած պարագային, իրենց բռունցքը ցոյց տուած էին ընչաքաղց բազմութիւններու եւ աւաղակներու: Ասիկա մխթաբանք մըն էր Սարգստի համար, որ կորսուած կը նկատէր այս բազմութիւնը, այս կլանող քաղաքին մէջ, բայց կը զգար, թէ անոնք օգտակար տարր մը կը մնային եւ կրնային օժանդակ ըլլալ լեռնաշխարհին, քանի որ ամբօրէն կառչած կը մնային սասունցի ըլլալու հպարտութեան:

»

Այսպէս տաք ու պաղ մտածումներու միջեւ տարուեր՝ անոնք անցուցին 1889-ի ձմեռը Հալէպի մէջ, ու երբ յաջորդ տարին գարունը բացուեցաւ, Սարգստ այլեւս համբերութիւնը սպառած, կը մտածէր իր վերադարձի մասին:

Աղգային ու քաղաքական լուրերը իրենց արձագանդը հասցուցած էին մինչեւ Հալէպի պարիսպները: Փուռերու եւ ջաղացներու մէջ Արարոյի տարաբնէրը, փախուստը դէպի Կովկաս, Կիւլիզարի դատը, Հայաստանի բարենորոգման խնդիրը, հեքիաթային չափազանցութեամբ բերնէ բերան շրջան կ'ընէին: Հեռաւոր վայրերէ գաղափարական դործիչներ ճամբայ ելած էին դէպի Ձէյթուն եւ Եմանք ալ իրենց դէմքը ուղղած էին դէպի իւրօրոս Սասուն:

Սարգստ տեղեակ այս բոլորին, կը զգար թէ որեւէ ուժ զինք չի կըրնար կապել Հալէպի կեսնին: Երբ անիկա պատրաստութիւններ տեսաւ Սասուն վերադառնալու, զարմանքի չմատնուեցան Սասունցիները, որոնք լսած էին, թէ պատանեկան օրերէն ան կապուած է եղեր Արարոյի խումբին. անոր վերադարձին մէջ կը տեսնէին դործիչի մը երեւումը, նուիրուած՝ ազգին: Այս պատճառով քանի մը փոպաններ ու ջաղացպաններ

ի մի հոսանքանցան, գնեցին քնտիր շաշխան հրացան մը, դամասկեան դաշոյն մը և նուիրեցին կորովի երիտասարդին:

— Աստուած քեզի հետ ըլլայ, լա՛ս, մենք այս ալիւրներուն մէջ թաթխուեցանք, մինչ դուն մեր լեռները կը դառնաս, մեր պատիւը պաշտպանելու համար: Զամբազ բարի ըլլայ, — ըսին իրենց նուէրը տուած ժամանակ:

Սարհատ խորապէս յուզուած էր այս ինքնաբոլիս եւ թանկութէն նըւէրծեալ համար, որոնք այն օրերուն մարտական մարդու համար մեծագոյն գոհարեղէնները կը կազմէին:

Սարհատ անհամբեր էր ճամբայ ձլլելու, բայց փորձառու Սասունցիներ զինք վար դրին մէկ-երկու ամիս, որպէսզի ապահով ու վստահելի կառաւարկ մը յանձնեն:

Մանուկ տեղեակ էր այս քոյրին, բայց ինքը առայժմ վերագրածի մասին չէր մտածեր: Սարհատի տնայարանքին մէջ կը տեսնէր անհնգարտ երիտասարդը, եւ, ո՞վ գիտէ, ազնկայ մը քաշողական ուժը: Ինքն ալ ժամանակին սիրած աղջիկէն զրկուած էր ու դիտէր, թէ սրտի թելը ամուր կապ մըն էր այն վայրերուն հետ, ուր երիտասարդ մը սեւաչակայ էակ մը ունէր: Եւ Մանուկը չէր սխալած: Իրօք Սարհատի հոգիին մէջ, մարտական կեանքին դառնալու բաղձանքին հետ, Սուսմի կարօտն ալ մեռաքսէ թելի մը նման հիւսուած էր:

— Դռնանք երթանք մեր երկիր, ապրինք մեր պատուով եւ պաշտպանենք մեր ժողովուրդը եւ կամ մեռնինք զինքը մեր ձեռքին, տղամարդու պէս, — կ'ըսէր Սարհատ, միշտ մտածկոտ, առաքելութեան խոհուն կնիք մը իր ճակտին:

Սասունցիները լուր տուին Սարհատին, որ պատրաստուի մեկնելու. անոր ըսին, թէ լճէի եւ Ծարդինի ջրեպանները հասած են Հալէպ եւ քանի մը օրէն պիտի վերադառնան զէպի Տիարպէքի եւ Մուշ: Այդ ջրեպաններուն մէջ կային հրեք-չորս Հայեր, որոնք Սասունէն փոխադրուած էին Ծարդին եւ լճէ եւ կը պարապէին այդ արհեստով, զինուած ու միշտ զբոստական տարագով: Անոնք մեծ կարաւան կը կազմէին Հալէպէն եւ Տիարանակերտէն ապրանք փոխադրելու զէպի Մուշ եւ իրգրում: Քիւրտ եւ հայ այս ջրեպանները նշանաւոր էին իրենց քաջութեամբ եւ ճանապարհներուն վրայ աւազակները անզօր էին անոնց գնդակներուն առջեւ:

Անուանի քանի մը Սասունցիներ առանձին խօսակցութիւններ ունեցան հայ ջրեպաններուն հետ, ու յատուկ յանձնարարութեամբ Սարհատը անոնց ներկայացուցին, որպէս իրենց ազգականը, եւ խնդրեցին, որ զայն ապահով հասցնեն Սասուն:

Ջրեպան Կարպուշը, հին ու փորձառու կտրիճ մը, մեկնած ժամանակ պատուիրեց.

— Քիչ մը տարազդ քրտականի վերածէ, զլուխդ գոյնզգոյն բան մը կտալէ, մնացածը կը լրացնեն հրացանն ու դամասկեան այս դաշոյնը: Վաղը առաւօտ արշալոյսին, մենք ճամբայ կ'ելլենք, լաւ կ'ըլլայ, որ այս դիրքեր իսկ փոխադրուիս մեր խանը, ճամբու ընթացքին իմ ազգականս պիտի ըլլաս ու երբեմն ինծի պիտի օգնես, գործի վրայ երեւնալու համար: Մեզի հետ եղած Քիւրտերը քաջ են, եւ միայն նուիրուած իրենց կարաւանի աշխատանքներուն եւ գէժ են աւազակութիւն ընող Գիւրտներուն:

Սասունցիները շնորհակալութիւն յայտնեցին Կարպուշին եւ իր բնակերներուն եւ խօսք տուին, որ մութը իջնելուն պէս Սարհատը կ'ըլլայ քր մօտ:

Հալճակի տարադիրները հիւրասիրեցին Սարհատը մերջին անգամ եւ երբ մութը կոխեց, անոր հետ դացին այն խանը, ուր ջորեականները իջեւանած էին: Սարհատը յանձնեցին ծանօթ ջորեականներուն:

Երիտասարդը հետը ունէր փոքրիկ ծրար մը, ուր տեղաւորուած էին իրերը եւ քիչ մը պաշար: Հին ծանօթներու պէս, Սարհատ Գարպուշը եւ միւս ջորեականները բարեւեց եւ տեղաւորուեցաւ անոնց կողքին, պատին հոթնցներով իր ընտիր հրացանը: Զինուած ջորեականներու այս խումբին մէջ, նորեկին գինեալ ներկայութիւնը բնական նրբաօյժ մըն էր:

— Բարե՛ ճանապարհ ձեզ, յաջողութի՛ւն ձեր կարուանին, — բռին Սարհատը եւ հանդիստ սրտով վերադարձան տուն: Խանի դռները պիտի շրջուէին:

Սարհատ ուրախ էր: Զորիներու զանգակները կը զնգային, ինչ որ ստույգ հաստատումն էր, թէ ինք ճամբան բռնած է դէպի սիրած սարերը...

Ը.

... ԴԷՊԻ ՍԻՐԱՄ ՍԱՐԵՐԸ

Արշալոյսին, Հալճակի հիւսիսային դռնէն դուրս փնջէր Կարաւանը: Զանգակներու զօղանքները կը լեցնէին հինաւուրց քաղաքը: Արեւը լծադած անոնք կ'ուղղուէին դէպի Եփրատ եւ անցնելով հին Կարկամիչի կամուրջը, կը բռնէին Տիարպէթի ճամբան: Կայանէ Կոյան Կարաւանը շարժական քաղաքի մը տպաւորութիւնը կը թողուր ու եռանդուն կեանք մը կը ստեղծէր իր իջեւանած կայաններուն մէջ:

Սարհատ աւելի հանդիստ աչքով կը դիտէր իր շուրջն ու բոլորը, կը ծանօթանար պահապան շրջաններու ժողովուրդներուն, անոնց բարքերուն եւ տիրութեամբ կը հաստատէր, թէ տղ բաղմութիւնները ազգային այն մըտաւորութիւնները շունչէին ինչ որ ունէր հայ ժողովուրդը իր բնավայրին մէջ:

Կարաւանը այսպէս ոլոր-մոլոր կ'ընթանար դաշտային ճանապարհներով ու Սեւերակի անապատային եւ անբնակելի տարածութիւնները կտրեւէն հաշտ շորերով օրը, երեկոյեան, աշտուժ զօղանքներով կը մտնէր Տիարպէթի ճամբան պարիսպներէն ներս, ինքնալատուկ քաղաք մը, որ իր ներքին թխրով, առեւտրական շարժումներով շատ նման էր Հալճակին, այն տարբերութեամբ միայն, որ արարական տարազներուն տեղ քրտական տարազներու տիրապետութիւնը աչքի կը զարնէր, ու արարելէն փոխարէն՝ քրտներէն եւ հայերէն էր յաճախ դորձածական ընդուն:

Երկու օրուայ հանգիստ պիտի առնէր կտրուանը, որոք բնածաւորումներու համար: Սարհատ այդ հանգիստէն օգտուելով՝ կըցաւ ծանօթանալ քաղաքին, ուր առեւտրական բոլոր ձեռնարկները Հայերու կը պատկանէին եւ մետաքսեղէնը գլխաւոր ճիւղերէն մէկը կը կազմէր: Միջնափաղը ուշադրաւ էր իր առեւտրական եռուղեւով եւ կարաւաններու երթնելով: Հայերը պայծառ կը պահէին իրենց նշանաւոր եկեղեցիները եւ աշակերտներով լեցուն պարտեզները: Այսպէս դուրս ամբողջովին կլանուած էին առեւտր-

բական գործերով: Թուրքերը՝ չնչին փոքրամասնութիւն մը՝ տիրապետող դերի մէջ էին ու մոլեռանդ: Իսկ Քիւրտերը առեւտրականներէն խարուող բաղմունքի մըն էին, որ խուռներամ կը մտնէր քաղաք, կը ձգէր ոչխարներու հօտը հոն եւ փոխարէնը դունապեղ հազուատները կը տանէր հետը:

Սարհատ զարկալուծենէ վերադարձողի հոգեբանութեամբ մետաքսէ կտորեղէն առաւ իրենց տան հարսներուն իրրեւ նուէր: Հեռու տեղէ կու գար, հեքիաթային Հալպու քաղաքէն կը վերադառնար, չէր կրնար դատարկ ձեռքով հայրենական տունը մտնել:

Հայկական հոծ դանդուած մը կ'ապրէր այս հինաւորաց քաղաքին մէջ, ու տոհմիկ շունչ մը կար հայկական թաղերէն ներս: Սարհատ այստեղ զգաց, թէ այս պարսպապատ քաղաքէն կը սկսի իր մուտքը Հայաստանէն ներս:

Կարաւանը քաղաքէն դուրս ելլելէն ետք՝ Տիգրիսի նշանաւոր կամուրջէն կ'անցնէր եւ կ'ուղղուէր դէպի հին Տիգրանակերտը, որ տարածուած էր Սասնոյ լեռներու ստորոտը, Պէրիսի դաշտին եզերքը:

Կարաւանը իր կալուածին մէջն էր եւ անկէ անդին ամէն անկիւն, իրեն ընտանի ամէն կայան, ծանօթներով ու բարեկամներով լեցուն, ստկան, ունէր թշնամիներ յանձինս աւազակախումբերու, որոնք անտառներն ու կիրճերը կը բռնէին կողոպտելու համար տկար կարաւանները: Օրէնքէ դուրս մարդիկ էին անոնք, ապստամբ իրենց զէնքերուն, եւ երբ հարցը կողոպտուտի շուրջ կը զսոսնար՝ կը մոռնային քարեկամութիւնը եւ կողոպտելը կը նկատէին հերոսական արարք:

Լճէի եւ Ծարդինի ջրեպանները կտրիճ էին եւ շատ լաւ զինուած, անոնք ծանօթ էին իրզրումէն մինչեւ Հալէպ իրենց փոխադրական ճարտարութեամբ ու հաւաարմութեամբ, փոխադրութիւն մը՝ որ ապահովուած էր անոնց զէնքերով: Շատ յաճախ, մեծ աւազակախումբեր, հեռաւոր ճանապարհներու վրայ, ընդհարած էին անոնց, բայց միշտ ալ հանդիպած էին ուժեղ դիմադրութեան, երկուստեք զոհեր թողնելով կրուի դաշտը: Կարաւանը անուանի կտրիճներ զոհ տուած էր եւ այդպիսով շահած քաղութեան վարկ մը: Այդ պատառով աւազակները կը զգուշանային այդ ջրեպաններուն հետ բախում ունենալէ: Բայց պատահումները օրէնք չի ճանչնար: Ու պատահեցաւ, որ բախում մը տեղի ունենայ կարաւանին եւ նշանաւոր աւազակապետ Փուշոյի միջեւ:

Ծարդինէն կը բարձրանային դէպի լեռնային շրջանները, ու մէկ օրուայ ճանապարհ կտրելէ ետք՝ պիտի անցնէին Գայի Դրունքէն, որ կաղմըւած էր Տիգրիսի մէկ ճիւղին՝ Սուրբի գետին խորխորատին վրայ, բարձրաւանդակ մը՝ կաղնիի կոյս անտառով շրջապատուած: Կարաւանը մէկ ճամբայ ունէր այդ անտառը կտրելու եւ մէկ ճամբայ ժայռոտ վայրէջքը իջնելու, վայրէջք մը՝ որ քարէ սանդուխի ձեւը առած էր անցող-դարձող ձիերու եւ ջորիներու սմբակներուն տակ: Երեւի Տիգրան Մեծի այրումին ալ այդ ճամբով պատերազմ մղած էր Հռոմէացիներուն դէմ:

Այդ անտառէն կ'անցնէին աւելի ամփոփուած, որպէսզի հոտ մնացող յմայ, ու երբ հասան կիրճին գլուխը եւ մէկ մասը վայրէջքը բռնեց, յարձակում տեղի ունեցաւ կարաւանի յետամասին վրայ: Աւազակապետ Փուշօն եօթը գործակիցներով Գայի Դրունքի երկու կողմերը բռնած էր եւ թաքնուած ծառերու եւ ժայռերու մէջ՝ երկու կողմէն կրակ կը բանար կարաւանին վրայ, որպէսզի ջորիները լքեն եւ հեռանան: Զորեպաններէն ու մանր ապստամբներով իրենց շուրջ բոլորը գտնուած քարերուն ու ծառի բու-

ներուն՝ հակահարուած տուին, իսկ վայրէջքը բռնողներէն ոմանք դարձան օդնութեան հասնելու յետապահներուն, բայց անոնց վերելքը կ'իյնար աւազակներու կրակին տակ, եւ տեղ չունէին թաքնուելու: Սարհատ Կարպուշի կողքին էր, հրք գէպքը պատահեցաւ վերելքին գլուխը: Աւանց վայրկեան կորսնցնելու ցատկեց ժայռի մը բացուածքին մէջ, որպէսզի ապահով ըլլայ կունակէն եւ դիմացի հարուածներէն: Նշմարած էր, որ աւազակներու հարուածները կու դային աջէն ու ձախէն: Զննեց աւազակներու գիրքերը եւ նշմարեց անոնց քոլոսները որ կը շարժուէին ժայռերու ետեւ: Սարհատ նշանակէտերը ճշդելէ ետք՝ առանց երեւնալու գոռ ձայնով մը կ'անշեց.

— Հեռացէ՛ք այդ քարերէն, այլապէս ձեր գիւակները թռչուններուն կեր կը դարձնեմ:

Վարէն վեր ելլող ջորեպանները նշմարեցին Կարպուշի ազգականը, որ ժայռի ճեղքուածքին մէջ դիրք գրաւած էր եւ լսեցին անոր սպառնալիքը: Մէկ վայրկեան ետք, անոր շաշխառ հրացանի ձայնը թնդաց ու աւազակներու բռնած քարերէն քոլոս մը օդին մէջ վեր թռաւ եւ ապա գլորեցաւ անդունդը, երկրորդ հարուածը քարի կոտորէր օդը հտնեց եւ գիմացի ժայռերուն տակէն լսուեցաւ.

— Ա՛յ, պապօ՛, վերաւորուեցայ...

Լռութիւն մը տրեց, երկարեցաւ...

Ջորեպանները կամաց-կամաց դուրս եկան իրենց դիրքերէն, շրջապատը խուզարկելու: Աւազակները փախած էին, իրենց պետին գիւակը հոն թողնելով...

Սարհատ կը մնար ժայռին մէջ, աւելի ազատ բարձունքի մը վրայ եւ չորս կողմը կը դնէր վտանգը դիմադրաւելու համար: Կարաւանը ազատուած էր: Կորիճ ջորեպանները, որոնք տասնեակ մը արիւնոտ կոխներու մասնակցած էին, հիացմունքով դիտեցին Սարհատը ու միաբերան խոստովանեցան, թէ անոր վճռական հարուածն էր, որ աւազակները փախուստի մատնեց: Կարիճ Գիւրտերը հերոսապաշտ են: Նոյն վայրկեանէն հերոսացուցին Սարհատը:

Սարհատ համեստ կեցուածքով՝ կարաւանին հետ համբայ ինկաւ ու երբ խօսք եղաւ պատահած դէպքին մասին, յաջորդ կայանին մէջ, ինքն էր, որ գովքը ըրաւ կորիճ ջորեպաններուն, որոնք կուրծք տուին աւազակներու տեղատարափ գնդակներուն դէմ: Սակայն, կարաւանապետը բոլորին հաղորդեց, թէ Սարհատի անվրէպ գնդակն էր, որ կարաւանը փրկեց ծանր վնասէ մը:

Կարաւանը յաջորդ օր կը հասնէր Փասուր եւ ըստ սովորութեան առանց դադարի պիտի անցնէր Մուշ. սակայն, մէկ օր դադար տուին, որպէսզի երկու ջորեպաններ շեղեն իրենց ճանապարհը դէպի Բաանք, Սարհատը հայրենի տուն հասցնելու համար: Կարաւանի հերոսն էր այդ երկտասարդը, ու կարաւանը գիտէր յարգել անոր քաջութիւնը:

Սարհատին կ'ընկերանար Կարպուշը:

Ջորիները բռնեցին ազատուած, թեթեւոտ կը կտրէին դիւերանց լեռներն ու ձորերը եւ արեւածաղին կը մտնէին հայրենի տուն, անակնկալ յուզումի մատնելով բոլոր տնեցիները:

Ծերունի Կրպէն գողգոջ ձեռքերով կ'ողջագուէր զարիպ Սարհատը եւ ուրախութեան արցունքներ կը թափէին աչքերէն: Կրպէն այլեւս նախկին կարծր իշխանը չէր:

Տունը իրարանցումի մատնուեցաւ, ջորեպանները հիւրասիրելու հա-

մար: Անհուն զոհունակութիւն մը աւելին անոնք, որ այս կտրին երիտա-
նարքը Սասնոյ լեռներուն կը յանձնէին: Զորեպանները զովքը բերն Սար-
հատին, Հպարտութեան յուղում մը ստեղծելով Եղբայրներուն եւ Հօրեղ-
բայրներուն մէջ: Իոյրն ալ ուրախ էին, որ իրենց տան տարագիր զաւակը
կը վերադառնար այսպէս զինուած:

Զորեպաններու բերած ծրարը բացուած էր, աւ Սարհատ Հօրեղբօր՝
Կրպէի տիկնոջ կը յանձնէր մեծաքանակները, որպէսզի Հարսներուն բաժ-
նէ: Հարսները թովածն ուրախութիւն մը կ'ապրէին, քանտաւորութիւն մը
նկատելով այս անակնկալ վերադարձը:

Զորեպանները երկու ժամուայ Հանգիստէ ետք՝ Հեծան ջորիները,
Հնորակալութիւն յայտնեցին Հիւրասիրութեան Համար եւ որոնիմաց եւ
դարձան դէպի իրենց կարաւանը:

Տնեցիները քաղցր զգացումներով կը նայէին Սարհատին ու զուր-
գունները անբարեառ կը զեղուր բոլորէն դէպի վերադարձող զգարիպը:

Իշխան Կրպէն երբ կըրցաւ Հայրական յուղումը գտակ, փոքր ուղղեց
ոտքի կանգնած երիտասարդներէն մէկուն:

— Տղա՛յ, Սարհատի գէնքը հոս բեր տեսնեմ:

Պատին կոթնած գէնքը երբ Կրպէի ծունկին վրին, Հին որսորդը զայն
կռնց իր ձեռքերուն մէջ, խողովակը քննեց, չափախը շոյեց, ուրախ ժը-
պէտ մը ծաւաւեցաւ. դէմքին վրայ:

— Սթամպուլի շաշխան մըն է, ամէնէն լաւ գէնքը, որմէ շատ քիչե-
րը ունին: Ի՞մ գէնքը տար քով փայտի կտոր մըն է:

Դառնալով Սարհատին:

— Սարհատ, լա՛ւ, այն օրը որ քու վրադ բարկացած էի, է՛հ, վեց-
եօթը տարի առաջ՝ երբ գէնքս յեռը տարած էի, մինչեւ այսօր սրտիս ցաւ
եղած էր եւ դիմ կ'այրէր. քայց այսօր, այս նոր գէնքը ձեռքդ տեսնելով՝
ցաւս տնցաւ: Զինքն ու պատիւը Հաւասար պահէ:

— Հօրեղբայր, տղայութեան չարութիւններ էին, ես մօռցած եմ: Ան-
կէ ետք գլխէս շատ բաներ անցան:

Սարհատ իր մանկական վիշտը մոռցուած Համարեց, Հօրեղբօր զըղ-
ջումը մեղմելու Համար, մինչդեռ այդ մօրմօքն էր, որ զինք միշտ սեփա-
կան զէնք ճարելու:

Ներկայ եղողները գէնքը ձեռքէ ձեռք անցուցին Հիացմունքով: Այդ
օրերուն լաւ գէնքի մը տիրանալը Հարստութիւն մը ունենալ կը նշանակէր:
Անկախ կեանք, որուն այնքան կարօտ էին լեռնական այս երիտասարդները:
Հարսներուն եւ աղջիկներուն աչքին զինուած երիտասարդը աւելի գեղեցիկ
կ'երեւէր, գերմարդկային առաւելութեամբ:

Կէսօրէն ետք գիւղական բազմութիւնը Տէր Ղապարեկն բազմ լեցուած
էր, Սարհատին քորի գալուստ մագթելու եւ տեղեկութիւններ տալու
Համար իրենց ազգականներէն: Մանկութեան օրերուն, Սարհատ զիւղի Ս.
Գէորգն էր, իսկ այժմ անոնց ոչմը կայտառ երիտասարդ մը կար, որ վան-
քէն ուսումնական, ծանրօրէն նստած էր իշխան Կրպէի կողքին: Գիւղացի-
ները անոր կը գիմէին պարոն Գէորգ կոչումով: Մասաւորականները շատցած
էին Տարօնի աշխարհին մէջ: Միացեալ Ընկերութեան տառնամեայ գործու-
նէութեան Հասցուցած քննադատարտները, Հեռաւոր Պոլսէն եկող օւսուցիչ-
ները Պարոն տիտղոսը քննականացած էին: Ու Սարհատ, որ վանական
ուսում ստացած էր, բայց վանական չէր եղած, Հիմա պարոն կոչումը կը
պաշտար:

Մարհատող զեղականներու խօսակցութիւններէն հոսանց, որ գործիչներ չընթացած են Վերին Սասուն եւ իրենց կեդրոնատեղի ընտրած են Աւարոնք գիւղը, որ բախտաւարութիւն ունեցած էր վարժարան մը ունենալու Միացեալ Ընկերութեան խնամքին յանձնուած: Այդ կեդրոնին մէջ հոս գոյին չընթացող զիւղերէն աշակերտներ եւ ուսում առնելէ ետք՝ կը դառնային իւրենց գիւղերը ուսուցչական պաշտօնով: Դպրոցական գործի պատրուակով Հրայրն ու Տաճատեանը չընթանէ չընթան անցած էին, գործի մղելով վստահելի անհատները:

❖

Մարհատի ժամանակէն երեք օր անցած էր, երբ երեկոյեան անոնց տունը մտաւ Աղամ, զէնք մը ուսին ու ջերմօրէն ողջագուրուեցաւ Սարհատին հետ: Անոր վերադարձի լուրը շուտով հասած էր Սաղտուն, ուր կը մնար Աղամ, ուղարկելով նոր գործունէութեան մը:

Գեղական բազմութիւնը ցրուելէ ետք, Սարհատ եւ Աղամ զիւղերը միասին անցուցին: Սարհատի զեկուցումը կարճ էր: Կելլոյի Մանուկը կը մնար Հալէպ, իսկ ազատագրական շարժման արձադանգները կը յսուէին այդ հեռաւոր քաղաքներուն մէջ: Գէորգ վերադարձած էր իր ընկերները գտնելու, յոյս ունենալով որ Արարօն ու Լեւոնը շուտով կ'երեւան Մովսսարի շրջանին մէջ:

Աղամ Սարհատին ներկայացուց իր դիտածները, որոնք տարիէ մը ի վեր չընթան կ'ընթան բերան, Մշոյ դաշտէն մինչեւ Սասուն:

— Քու մեկնելէ ետք, ձերան շրջանին, Աւարոնք երեւցաւ Արմենակ եւ Միացեալ Ընկերութեան այդ գիւղի վարժարանի աւարտականներէն խմբակ մը կազմեց, որոնք իրարու պիտի կապէին Պուլիի, Պիանքի եւ Բոսնքի երեւելիները, քահանաները, եւ եռանդուն որսորդները, որպէսզի քրտական ոսնձու թիւններու դէմ կննան եւ սերտ գործակցութիւն ունենան Վերին Սասունին հետ: Արմենակ յատկապէս յանձնարարած էր, որ մըտիկ ընեն Շէնիկի իշխան Գրգոյին, քանի որ տնիկա կանգնած է գինուած Սասունցիներու գլուխը եւ Քիւրտերը կը պատկանին անոր ուժէն: Ատեն մըն ալ եկաւ Սաղտուն եւ ինծի հետ կապեց քանի մը ազգայնիկ տուներու գինուած երիտասարդները եւ պատուիրեց՝ լուր հասցնել Հալէպ, որպէսզի դուն շուտ վերադառնաս: Փառք Աստուծոյ, հիմա հոս ես:

— Նոր փախտականներ կա՞ն Առաքելոյ փառքի եւ Մշոյ դաշտի շրջանին մէջ, անհամբերութեամբ հարցուց Սարհատ:

— Այժմ քանի մը աւարտականներ Միացեալ Ընկերութեան վարժարանէն, Դաշտէն ու վանքի շրջապատէն գինուած խմբակներով գիւղերը կը պատին գիւղէ գիւղ, ազատութեան քարոզ կը կարդան եւ հապուած են Արմենակի հետ: Վերին Սասունը պետութեան տուրք չի տար, Քիւրտերը անոր սահմաններուն չեն մօտենար, իսկապէս ազատ հայ իշխանութիւն մըն է, տեսակ մը հայտնաբերող ճրագը: Լուրեր կը հասնին Կովկասէն, որ շուտով խմբեր պիտի մտնեն երկիր:

— Մենք այլեւս տունը չենք կրնար մնալ, եւ ոչ ալ կրնանք տա տեղեկութիւններով դժգոհել: Հիմա երկուքս ալ զէնք ունինք, կրնանք փախուտական դառնալ եւ շրջանէ շրջան փոխադրուիլ, ստորդ կացութիւնը ըմբռնելու համար: Վերին Սասունը մնալուն կայան մըն է, ուր մեր զէնքերով կրնանք դեր մը կատարել եւ մեզի միացնել այն փախտականները, որ Դաշտի եւ Մովսսարի շրջանին մէջ դաշտակիւն օւնէին: Ի՞նչ ապագայով:

Թիւնս այն է, որ խորտուժը աւելի մեծ է, քան մենք կը զգանք, մեր գիւղացիներու պատմածներէն իմացայ, որ Միացեալ Ընկերութեան Մշտ վարժարանի ուսուցիչներէն Տամատեանը կրկին անգամ Սասնոյ գիւղերը պտըտած է, եկած Ահարոնք, անցած է Պերմ եւ անկէ Տալուրթիկի վրայով վերադարձած է Վերին Սասուն:

— Այդ մասին մոռցայ յայտնելու, մեր գիւղն ալ եկաւ Տամատեան: Մեր ժողովուրդի լեզուով կը խօսէր բոլորին, խանդավառութիւն ստեղծելով եւ յոյս կու տար, թէ քրիստոնեայ մեծ պետութիւնները պիտի միջամտեն Թուրքիոյ դործերուն եւ թէ անոնց ճշման տակ բարենորոգումը պիտի իրականանայ:

— Ես աւելի իշխան Գրգոյի քաղաքականութեան կը հաւատամ, մենք մեր յոյսը պիտի դնենք մեր գէնքին եւ քաղուկին վրայ, օտարէն յոյս չկայ: Կը յիշե՞մ, երբ տարի մը առաջ մենք Արարոյի հետ էինք, Մուշի գործիչներէն Մուշեղը եկաւ մեր մօտ ու խօսեցաւ.

— Վերին լիզուց, Տրանսըզից մըզի ումուտ չկայ: Մօսկով լէ քան զԹուրք տաճա վատ է: Միակ աղբըրութիւնով, յուս, ոչր եղնիով կրնանք զմեզիկ ազատենք էս վիճակից մըր քուլֆութով ու ազգով, մըր մալով ու մուլքով Հանգիստ ապրենք: «Ճերմակ արտըսուք շատ թափեցանք, քիչեկ մը լէ կարմիր արիւն թափենք. էն վախթ տեսէք թէ իմալ կ'եղնի»:

«Տէրտէր, եպիսկոպոս զմեզ աղօթելու կը խրատեն, իդրանք լէ հիմիկ զուրանց գլուխ չեն կարնայ ազատել Թուրքի, Դրդու զուլումից»:

— Այդ մարդը կարծես իմ սրտէն կը խօսէր, ասոր անոր վրայ յոյս դրնելով մեր կրիստոսորդները կը սպասեն, մինչ քունութիւնը կը ծաւալի: Առածը կ'ըսէ. — Այն ինչ որ ձեռքը կ'ընէ, հայր ու մայր չեն կրնար ընել:

Սարհատի եւ Աղամի խօսակցութիւնը երկար տեւեց, ու անոնք միայն կէս գիշերէն ետք կ'ընային քնանալ: Համաձայնեցան քանի մը օրէն մեկնիլ դէպի Վերին Սասուն: Աղամը պիտի գար իրենց տունը եւ միասին ճամբայ պիտի ելլէին ծանօթ ճանապարհներով:

Է

Սարհատ մնացած օրերը անցուց իր հօրեղբայրներուն ու եղբայրներուն հետ, օր մը միայն անոնք զոգան բարձրացան եւ եղան հոն համախրմբում հովիւներուն, հարսներուն եւ սղջիկներուն հետ: Սարհատի այցը ուրախութիւն ու ցնծութիւն բերաւ անոնց եւ ամբողջ գիշերը երգ ու պարով անցաւ: Բայց... Հեղինի վրաններն ու հիւղակները չկային այդ լեռնալանջին վրայ:

Սարհատ արդէն հասուն երիտասարդ էր ու բաղձալի փեսացու՝ բոլոր նորահաս աղջիկներուն: Սակայն, բոլորն ալ գիտէին, որ անիկա տունը մնացողը չէ: Եթէ մէկը կար որուն վրայ աչք ունէր, ան ալ դեղձան ծամերով Սուսամն էր:

Սասունցի հարսներն ու աղջիկները համարձակախօս են.

— Աղբ'ը, — ըսաւ հարս մը, — քու հեռանալէն յետոյ դէպի Առաքելոց վանք, ա'լ Հեղինցիները այս կողմերը չեկան, միայն մէկ անգամ Սուսամը տեսանք: Արդէն հասուն աղջիկ էր եւ կարծես թէ յուսահատ դարձաւ մեր զոգաններէն:

— Ձայնդ կարէ՛ աղջի, Սուսամը ի՞նչ կապ ունի ինձ հետ, — ըսաւ Սարհատ քծիծաղով:

— Աստուած վկայ, աղբեր, այստեղ եղած ժամանակ միայն քու մա-

սին խօսեցաւ. աղուոր աղջիկ է, ա՛ռ Սուսամբը, ան ալ մեր գիւղի հարս-
ներէն մէկը կ'ըլլայ:

— Էհ, էհ, է՛հ, լեզուիդ շատ մի տար: Այստեղ հաւաքուած հարսնե-
րըդ ի՛նչ ըրած էք, որ ուրիշ հարս մըն ալ բերենք, — կատակով փակեց
խօսքը:

Սարհատ բոցավառուած էր աղատութեան կրակէն եւ կը զգար, թէ
ամբողջ էութեամբ նուիրուած է այն ուխտին, որ ըրին Գաւթի քարին տակ.
սակայն, Սուսամի պատկերը մտքէն չէր հեռանար եւ ներքին տառապանք
մը կ'ապրէր, որք մինակ ըլլար: Սուսամի հետ երդումով կապուած էր,
սէրն ու երդումը իրար ձուլուած կ'աճէին իր մէջ ու անզիմադրելի մը-
ղումով մը կ'ուզէր անդամ մը տեսնել զայն եւ ապա քոնել թափառական
կեանքի ճամբան: Խղճի խա՞յթը զինք կը մղէր, թէ ջերմ սէրը, ատոր հա-
շիւը չէր կրնար տալ, բայց կը զգար, թէ Սուսամի ջերմութիւնը անբաժան
է իրմէ:

Ջողաններէն վերադարձած էին, եւ այն քանի մը օրերը, որ անցան,
Սարհատին համար եղան խորհրդածութեան եւ ներքին ապրումներու օրեր:
Կը սպասէր Ադամին, որ չուշացաւ:

Բարեւ Աստծոյ բարիէն ետք, իշխան Կրպէն ուշադրութեամբ դննց
Ադամը, որ այլեւս ընտանի գէմք մըն էր իրենց տունին, ու հարցական ծա-
յեցաւ անոր:

— Այ տղա՛յ, ճամբորդի պատրաստութեամբ կ'երեւիս: Ի՞նչ է, ո՛ւր
կ'ուղղուիս:

— Իշխա՛ն Կրպէ, կ'ուզեմ վերադառնալ Առաքելոց վանք. գիւղերու
մէջ մենք այլեւս շատուկ չենք կրնար ապրիլ: Սարհատին հետ խօսքը մէկ
ըրինք ու պիտի վերադառնանք քիչ մը այն կողմերը:

— Ի՞նչ, Սարհա՛տն ալ ճամբորդ է:

— Հօրեղբայր, — ըսաւ Սարհատ, — ատեն մը Մուշի եւ Վանքի շրջ-
ջանները անցնինք ու տեսնենք աշխարհք ի՞նչ կայ չկայ, հանդարտ նօտե-
լու ժամանակը չէ: Քիւրտերը մեզ կը հետապնդեն, այս վայրերուն մէջ
բախում մը՝ մեր գիւղական շրջաններուն կրնայ վնասել: Առածս փորձան-
քը հեռացնենք տան դռնէն:

Իշխան Կրպէն խռովքի մատնուեցաւ, լռեց, բայց զգաց, թէ անկա-
րող է զսպել այս ինքնագլուխ երիտասարդները:

— Աղէկ չէք ըներ, որ տունն ու տեղը կը թողուք ու թափառական կը
դառնաք, — ու քիչ մը լռելէն յետոյ, — դէ՛, որ կ'երթաք Աստուած ձեզի հետ
ըլլայ, ձեր անցած ճանապարհներու վրայ փուշ չտեսնէք, ձեր կոխած դե-
տինը ծաղիկներ բուսնին: Իրարու պաշտպան կեցէք, ամէն մէկդ տան մը
ճրագն էք, չմարի այդ ճրագը, որ օր մը ձեր պապերուն տունը չէնցնէք:

Կրպէն տխրութեան տակ կ'ըսէր միտք:

Տնեցիները յանկարծակիի եկան, ինչպէս որ եկած էին Սարհատի վե-
րադարձին: Ուրախութիւնը քաշուեցաւ անոնց երեսէն, ուր հիմա ամպա-
մած շուարումը կը ծաւալէր:

Սարհատ եւ Ադամ ճամբորդ էին: Անվերադարձ ճամբայ մըն էր, որ
կը բռնէին այս երկու քաջակորով երիտասարդները: Տնեցիները յուզում-
նահար, չէին գիտեր ասիկա, իսկ ճամբորդները գերազոյն իրողութիւնը
հաշուի իսկ չէին առներ:

Ճամբորդին ճամբայ պէտք է:

Ու Սարհատ ընտրած էր ճամբան, ու մինչեւ իր մահը չփերադարձաւ Մաղթինկ...

❖

Պատահուները օրէնք չունին:

Չորս տարի ետք, երբ նոյն կարաւանը կ'անցնէր Գալլի Գրունդէն, Քիւրտերը կ'երգէին երգ մը, գողը Տալուսրիկի եւ Անտոքի կռիւներուն, ուր Սարհատը Ասլանին գնդակը՝ «կաքաւը աչքէն կը դարնէր»:

Հերոսներու դավերդն էր, որ կ'արձագանգէր այդ վտանգաւոր անդանդներուն մէջ:

Կարպուշը ժպտող դէմքին՝ Քիւրտերուն ըսաւ.

— Գիտէ՞ք ով է Սարհատը Ասլանը, որ այսպէս կը դռնէք:

— Կարին մը, որ կուուցաւ թուրք զօրքերու եւ քիւրտ աշխրաթապետներուն դէմ, դիակներ փռեց լեռներուն վրայ ու ձորերուն մէջ: Ամէն կրտսրին տրմանի է երգի ու դռնէքի, — ըսաւ այն ջորեպանը, որ երդը կը շարունակէր:

Կարպուշը դարձաւ անոնց.

— Սարհատը Ասլանը այն երիտասարդն է, որ չորս տարի առաջ մեզի հետ կ'անցնէր այս կիբրճէն, ու եթէ այդ կուուին անոր գնդակը կաքաւի այգին չդպաւ, սակայն, ծակկց փուշոյի դլուխը ա՛յն ժայռին տակ ու կարաւանին ճամբայ բացաւ:

Երգը դադարեցաւ ու բոլոր Քիւրտերը հիացմունքով ձայնեցին.

— Ատուած պահէ այդպիսի կտրին մը: Ան ալ մեզմէ է, ինչ որ պէտք ունենայ եւ ինչ որ ուզէ մենք անոր պիտի հայթայթենք:

Եւ իրօք, հետագայ յեղափոխական գործունէութեան ընթացքին, լճէի եւ Ծարդինի ջորեպանները եղան հաւատարիմ Սարհատին, զէնք ու կապար փոխադրելով անոր խումբին:

Լեռնաշխարհը կտրիններ կու տար եւ լեռնաշխարհի մէջ կտրինները կը պաշտուէին...

(Շար.)

Կ. Ս.



ԱՌԱԿ

ԿՈՄՓԱՄԱՐՏ

Մէկը ճերմակ, իսկ միւսը սեւ
Կոփամարտի զոյգ մ'ախոյեան
Բեմին վըրան՝
Կը շափուէին իրարու հետ...
Ու հեւ ի հեւ
Ներկաները խայտարըզէտ՝
Կ'ըստասէին... ա՛վ զիտապաստ
Պիտի իյնար, աւ յաղթական
Միւսը խելէր բաժակն արծաթ:
Ճերմակն ռնկէր խաղ մը ըզգաստ.
Զոյգ քեւերով կազմած վահան
Կը պաշտպանէր ինքզինքն հանդարտ:
Սեւը անսանձ, բըռնկած յարդ՝
Կ'ոստոտէր յար, կու տար հարուած
Եւ անընդհատ կը շահէր կէտ:
Զէր պատահեր սակայն արկած...
Կարծես վըրան տեղար բամպակ՝
Զէր սասաներ հրակն ճերմակ,
Այլ ակնդէտ՝
Կը հսկէր միշտ սոսիս իր խէթ:
Մէյ մ'ալ տեսնես,
Երբ ծափերէն, կոռփէն արբշիւ,
Մոռցած խաղի օրէնք աւ գիր
Գանձ մը գրտած գնչուի պէս
Սեւը ցատկեց դէպի յառաջ՝
Ճերմակն այնպէս շարժեց արագ
Բազուկը աջ,
Որ շանթահար ծառի նման
Սեւը ինկաւ ռոտերուն տակ՝
Ուշակորոյս աւ արմաքամ:



Կեանքի մէջ ալ, ա՛վ քարեկամ,
Կ'ուզե՞ս մընալ միշտ յաղթական,
Մի՛ հրեքար ամէն հովի,
Ուժդ անարկու պահէ քեզի,
Բայց ուշադի՛ր,
Թարմար ժամուն
Տո՛ւր հարուածը անագորոյն:

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

ԳԵՂԱՄ-ԳԵՂԱԿ

ՍՕՍԻՊԵԼԼԱ

Սօսիպէ՛լլա, ի՛նչ հեղեղ է այդ ակնախտիկ գեղեցկութեան
 եւ ի՛նչ զգայացումն հմայք՝ զոր կ'արտասպոսես շուրջդ՝ գիծովու-
 թեան այս խօլ պահում...

Կրա՛կ. կրա՛կ ու կայծակ չէ՞ որ կը ժայթքի շուշանաթոյր
 ու զգլխիչ աչքերէդ որուն լուսեղէն արօրովը կը հերկեն սիրտերը
 մարդոց...:

Բռնած միտքը մարդուն ափսոսանքին մէջ մագնիսական նայ-
 ուածքիդ, ու ենթարկած հոգին անոր սիրոյդ բազմապատիկ խռովք-
 ներուն, Սօսիպէ՛լլա, կը ծփաս յուրօրէն երագներուդ կապոյտ ա-
 լարտին մէջ...:

Անծայրածիր լոյսի եւ անսպառ շողերու ոսկի քուրայ մըն է
 անբացկան նայուածքը քու, ո՛ր սէրը կը հոսի լաւայի եանգայն ու
 կը բռնկէ ինքնամատոյց սիրտերը գեղապաշտ երկրպագութեան...:

Կանգ առած միջոցին մէջ, նրբաեղիւ կռնակն իր յնաժող եր-
 կրէքի լուսահեղեղ կապոյտին, անվախճան ժամանակը մթոյններ է
 օտքերն իր քու վարդափթիթ գեղեցկութեան լուսեղէն աւազանին
 մէջ, վերակերտելու համար քստին իր անսկիզբ հալովոյթին...:

Բռնվառ ես դուն աղամանդէ յաւուն մէջէն կը քարճրանայ
 անուշահոտութիւնը արարական խռնկին ու խռովքի բազմապատիկ
 գալարումներով կը տարածուի սիրտերուն մէջ կուսական, բեղմնա-
 տրելու համար անջրդի ածունները վազում...:

Վեհօրէն արձանացած ճերմակ ու քարճրադիր պատշգամին
 վրայ երագներուդ կապոյտ դղեակին, փռած մարմանդ՝ կանաչին
 վրայ յարածուփ կայծերը հրահեղեղ նայուածքիդ՝ ինչպէս լին մը
 լուսէ, քայլ տուելու ես որ լուսինը քու չնայտարհիկ գեղեցկութեան
 յաւերժական հեփաթը հիւսէ...:

Ապշած քու գեղեցկութեան անկրկնելի ահագնութենէն, ար-
 ճանացելու եմ ժայռերը մարմար, դալար պարակները բռներ եմ կը-
 լոր պար, երէններն ու եղնիկները կայներ եմ շուար. կ'ուրիւն ու
 կ'արձակուիմ սառնափէ սառնափ նետուող ջրվժները մրկավար...:

Սիւզը կ'օրօրէ ոսկի քաշերը քարճրացած ցորեններուն, ի-
 րար կ'ընդհարին կանաչ կուրծքերը դալար սաղարթներուն, կ'աղօս-
 ուին անտառները խօյարձակ երգերովը սիրատարփ թռչուններուն,
 ու դո՛ւն, կ'անուած սեփական գեղովը քու աննառարաշ աչքերուն,
 կը քիավարես մակոյկը քու անուծելի երագներուն...:

Սա՛, Սօսիպէ՛լլա, պատարագ է մեծասմանչ եւ խնդոյք տօ-
 ցական, նուիրում է եզրի, քու փառանեղ գեղեցկութեան...:

Ի տես այս ամէնուն, Միքէլ-Անճելօն, կը ճգնի հասակդ ի

վար հոսող գեղեցկութեանդ անբացատրելի հառազայթները քա-
կարդել տգեղիմացած քարերուն մէջ ալապատարէ... որպէսզի կա-
յսարդականօրէն վարակիչ աչքերուդ աստղանման քթքանքն իր հա-
լազատ հոլովոյթին յաներժութենէն չշեղի...

Կ'ըսեն թէ՛ դուն իջած ես երկրէն երկինք կարկառուած սան-
դուխներէ լուսեղէն փարատելու համար մշուշը տրտմութեան .
քեղմնաւորելու կորդ սիրտերը մարդոց, ուղղելու ոլորապտոյտ կա-
ծանները լճաւածներուն, եւ թեւաւորելու միտքերը յուսազրաւ սի-
լոզներուն:

Կ'ըսեն թէ՛ դուն քագսկին ես բովանդակն անհաս, կարմիր
'ամփոլը' սիրտերուն տհաս... եւ ուղեցոյցը, կեանքի ա՛յն նոր
եղեգին, որ կարող է բանալ դռները երկնքին...

Ու տակաւին կ'ըսեն թէ՛ դուն գարունն ես անանց, արեւա-
վառ նայուածքդ անհուններուն վրայ արձակած, խօլարար կ'ընթացես
դէպի աստղերն ու Աստուած...

Որ այդ այդպէս է, Սօսիպէլլա, դո՛ւն եղիր ազօթարանը իմ,
եղի՛ր տաճա՛րը իմ նոր կրօնքին եւ թո՛ղ քո սիրտդ աւագանին մէջ
յաւէտ լողայ իմ հոգին...: Թո՛ղ ծեծուիմ ամենի ալիքներէն քո ու
թո՛ղ իշուիմ ամենի ամենի... իմ հոգը չէ, քաւ է որ լսեմ ձայ-
նը քո ու քո սէրը ընդմիշտ զիս կանչէ...

Լման կեանք մը վատնեցի հասնելու համար անմատչելի հան-
գրուանը քո գեղեցկութեան ու համակ էութեամբ հիւսուիլ հետը
քո անուն... եւ քեզ հետ բաժնել աւարը քո զգացած ցնծու-
թեան... իմ էութենէն տալ քեզի ամէն բան, միայն թէ քեզի հետ
լուսցնեմ բոլոր գիշերները զարնան...

Ու երբ իմ այս պարզ բաղձանքներուն դաշինքին տակ ստա-
րագրութիւնը դրոշմուի հառազայթագեղ ժպիտովը քո, Սօսիպէլլա,
ա՛յն ատեն կ'ըլլաս անկորնչելի ուժի եւ անյաղթահարելի մարտ-
կոցը մտքիս յարստուն ժայթքումներուն, կ'առնեմ քեզ մէջը իմ
հրահոսան քեւերուն ու կը տանիմ հեռո՛ւն, հեռո՛ւն...

Սօսիպէլլա, պէ՛լլա, պէ՛լլա, պէ՛լլա...

Գ. Գ.

Հալիվուս, Բալիթ.



ՏԵՍԻԼՔ ԱՆՑԵԱԼԻ

Քեզ, ա՛վ Անցեալ, իբրեւ ընկեր մանկութեան,
Դէմքս առնել կ'ուզեմ երբեմն եւ սրտանց
Խօսիլ ինտրդ, ճակատ ճակտի, անվարան,
Կեանքին վըրայ երանաւէտ, գոր անանց

Կարծեցիմք մենք եւ ապրեցանք միասին:
Ծրագներով եւ յոյսերով աղբջում՝
Ապագային միշտ յառեցանք. պատրանք սի՛ն,
Բայց եւ նորէն սիրեցիմք գայն եւ ու դուն:

Հիմա կրկին դէմս ես, Անցեա՛լ, մե՛ր տըղայ.
Պայծառարեւ եին օրերու դռ՛ւ երապիտ,
Երիթամած դէմքիդ վըրայ կը խաղայ

Դժմէտեսիլ խոժռո Ներկան անժղպիտ:
Անցի՛ր Անցեալ, ա՛լ չեմ խաբուիր պատրանքէդ.
Անցի՛ր կամ նոր Յոյս մը տուր ինձ գգուել գէթ:

Հ. Գ.

(25 Ապրիլ, 1965)

Մ Ի Ո Մ Ն

Սթիվ սրբեց քրտինքը: Բոթը մօտեցաւ իրեն: Հարցուց թէ ի՞նչ կը դիտէր այդպէս, գործատեղիին բակին մէջ:

— Մուխը... սեւ ծուխը, ըսաւ Սթիվ: Բոթը նայեցաւ այդ ծինելոյդին: Սեւ ծուխին: Ձոր ու ցամաք չէնքին: Գլուխը շարժեց, ըսաւ թէ ամբողջ օրը արդէն կը շնչէր այդ ծուխը: Ախորժակ չունէր այլեւս:

Սթիվ կրկին սրբեց քրտինքը: Ուրիշ բան ըրած չունէր: Միշտ ալ դժուարին եկած էր ապուշօրէն քրտնիլը:

— Լոնտոնի մէջ ալ մարդ կը քրտնի՞, ըսաւ:

— Ո՛ւր մարդ չի քրտնիր, վրայ բերաւ Բոթը:

Ապա աւելցուց թէ քրտնելուն խելացի կամ ապուշ ձեւը չկար:

Սթիվ չպատասխանեց: Շարունակեց ծխել: Հին ծանօթ մըն էր Բոթըրը: Տարի մը առաջ, երբ Լոնտոն եկած էր Սթիվ, շրջան մը անոր սենեակը բաժնած էր «Պօրտինկ չաուզ»ի մը մէջ:

Ճամբան Բոթըր փորձեց զինք համոզել: Ըսաւ թէ լուրջի առնելու չէր այդ քրտնիքի պատմութիւնը: Մարդ ձեւով մը պիտի քրտնէր: Ապրելու ուրիշ ելք չկար: Ապա մանրամասնութիւններու մէջ մտաւ: Սթիվ ականջ չէր կախեր: Բոթըր երբեմն ճիշդ մեծ մօրը պէս կը խօսէր:

Բոթըր մինչեւ «Գրօմուէլ Բօտ» խօսեցաւ: Ապա «պասը» տաւ: «Թի Թայ» մօրն պիտի հասնէր: Սթիվ թերթը դրնեց: «Էր Թերմինսլըին առջեւ ճամբորդներու նոյն յիմար աճապարանքն էր: Ձեռք դիտե՛ր ո՛ւր հասնիլ կ'ուզէին:

Կարմիր լոյսին սպասեց: Ապա կըտ-

րեց ճամբան: Գիշ մնաց որ ինքնաշարժի մը դարնուէր: Ականջ չկախեց շարժավարին հայհույներուն: Լոյսերը վառելու վրայ էին, երբ «Վէքթօրիա Սթրիթ» հասաւ: Փօնթինանդալ մտաւ: Գունաւոր ցուցատախտակով այդ «Վէքթօրիան»:

Հոն էր Վէքին: Բաժակ մը թէյի առջեւ:

— Ուշացար, ըսաւ աղջիկը:

Սթիվ համբուրեց աղջիկը: Իրաւ համբոյրի մը երեւոյթը փորձեց տալ: Շրթներէն համբուրեց: Անօգուտ: Լեզուին վրայ շրթունքի ներկի համ մը ըզզաց: Այս ալ նոր պատմութիւն էր կարծես: Աղջիկը ժպտելու պէս եղաւ: Միայն այդքան: Ապա ըսաւ թէ տեղ մը պիտի հանդիպէր: Թէ մինակ պիտի ձգէր զինք «թէյի» բաժակին հետ: Սթիվ չհարցաւ փորձեց թէ ուր պիտի երթար: Կը նայէր աղջկան: Նոյն ցրիւ մազերն էին: Նոյն յոգնած դէմքը: Միայն շրթունքի ներկը փոխուած էր:

— Ինչո՞ւ այսպէս կը նայես:

Սթիվ շարունակեց ծխել: Աղջիկը շատ ալ չհետաքրքրուեցաւ: Հարցուց թէ դիշերը «Գլապ» պիտի դա՞ր:

— Ի՞նչ ընելու, ըսաւ Սթիվ:

Վէքի ճզմեց սրկարէթը: Աւելցուց թէ սենեակին չորս պատերէն ձանձրացած էր ալլելու: Ապա մեկնեցաւ, ցրիւ մազերը մէկգլխի նետելով:

Սթիվ բացաւ թերթը: Աչք մը պըտրտցուց: Մարդիկ ինչո՞ւ այսքան պատերազմէ կը վախնային: Միթէ այնքան հաճելի՞ էր ապրիլը: Կրկին դրպանը դրաւ թերթը: Համբերութիւն չունէր կարդալու: Գրողը նամակը բացաւ: Հայրը սրտի տաղնապ մը անցուցած էր: Վէ-

ճակը լուրջ կը նկատուէր: Կրկին ինքնորդնք զգաց քրտինքներու մէջ: Սպասեալ կը հարցուց թէ անհանգիստ էր: Վայրկեան մը նայեցաւ անոր աշխատանքէն ապուշած դէմքին:

— Ոչ... ոչ... ըսաւ:

Վճարեց ու դուրս ելաւ:

Ինքզինք «անտրկրուանտ» գտաւ: Մարդկային ու մեքենական թոհուրոհի մը մէջ: Այդ բազմութիւնն ու մեքենայները շատ ալ չէին տարբերիլ իրարմէ: Նոյն վազքն էր: Նոյն յոգնածութիւնը: Սթիվ կարգի անցաւ: Ամէն ինչ կանոնաւորուած էր այս քաղաքին մէջ: Ինչպէս վայրաշարժերու վայրկեանները: Երկու քայլ անդին Մըթըր Դլարըքը նշմարեց, իրենց «մանէնը»-ը: Դժուար կը բռնէր գլուխը: Մոռցած էր սիկարէթը վառելու: Ամէն առտու յոխորտանքով մը կը մանէր գործատեղի: Դէմքի մորթը քերթուած ու անուշահոտուած: Գիշերը արդէն ապրելէ կը յոգնէր: Յաջորդ օրը սաղայն կը վերսկսէր:

Սթիվ գատեց այն «վալիս»-ը ուր պիտի կարենար ծխել: Ամէն տեղ արտօնուած չէր ծխելը: Շատեր կը սիրէին իրենց առողջութիւնը խնամել: Անկիւն մը նստեցաւ: Երևունի մը տեղաւորուեցաւ դիմացը: Անոր տեղը իրեն յիշեցուց հայրը: Ուզեց տեղը փոխել: Տեղերը զբաւուած էին: Փորձեց դուրս ելլել: Ուշ էր: Դռները դոցուած էին արդէն: Ծերունին հետաքրքրուեցաւ թէ ըստ մը մոռցած էր: Ապա աւելցուց թէ ինքը՝ անգամ մը, այսպէս աճապարած ատեն, հովանոցը մոռցած էր: Անձրեւի բռնըւած ու շարաթ մը «կրիթ» պառկած: Ծերունին պիտի շարունակէր: Սթիվ թող չտուաւ:

— Ձէ, բան մը մոռցած չեմ, ըսաւ: Ի՞նչ ունէր, որ ի՞նչ պիտի մոռնար: Այդ ապուշ քրտինքը դուցէ: Եթէ կարելի ըլլար մոռնալ: Կպած էր մարմնին, երակներուն, ուղեղին:

Սթիվ սիկարէթ մը վառեց: Ծերունին թերթ կը կարդար: Ծաղատ գլուխը եւ աչքերը կ'երեւէին միայն թերթին

ծայրէն: Հօրը աչքերը այդ Անգլիացիին աչքերուն նման կապոյտ չէին: Փորձեց յիշել այդ աչքերը: Ձյաջողեցաւ: Երատակ չէր գիտեր, սե՛ւ ինն անոնք թէ սրճագոյն: Երբեք ուղղակի չէր նայած հօրը աչքերուն: Սակայն ճաղատ էր հայրը: Լաւ կը յիշէր այդ մէկը: Միշտ քրտնած կ'ըլլար անոր ճակատը: Այդ քրտինքը կը սահէր վար: Կ'աղօսէր դէմքը: Ամբողջ էութեան աղի համ մը, ծարաւ մը կու տար: Օր մը նոյնիսկ հօրը ըսած էր թէ պէտք չկար այսքան վազելու: Այսքան քրտինք շատ էր գոյութիւն մը քաղկոտելու: Հայրը պայրացած էր: Ծուռ ծուռ նայած էր իրեն: Ապրաքտի տեղ դրած: Գուցէ զղջացած էր նման դաւակ մը ունենալուն: Անշուշտ թէ հօրը սիրտը տեղի պիտի տար: Ամէն առտու քնատ կը վազէր խանութ: Քնատ կը վերադառնար: Եւ այս, ոչ թէ շարաթներ, ամիսներ, տարիներ, այլ ամբողջ կեանքի շրջան մը: Նոյն վազքն էր: Նոյն շրջագծին մէջ: Դարձիւր ու դարձիւր, այդպէս ապուշ կտրած: Ձէր հանգուրժած: Ամէն օր նոյն անկողնի մէջ քնանալ: Նոյն երկնքի տակ արթննալ: Նոյն ճամբաներէն անցնիլ: Նոյն մարդիկը բարեւել: Նոյն պատերուն մէջ, նոյն կեանքը վերսկսիլ, այդպէս անվերջ: Մէկդի դըրած էր ամէն զգացում: Վերցուցած էր պայուսակը եւ եկած հոս:

«Ընդլի քարտ» կայարանէն բանուոր մը բարձրացաւ: Իւղոտած «պէրէ» մը ունէր: Երկարացած դէմք մը: Եկաւ, ցցուեցաւ դէմը: Այս մէկը պակաս էր կարծես: Լաւ, հասկցաւ: Երեւ յաւուր պէտք չկար: Մինչեւ կոկորդը մխրճուած էր արդէն: Հոս կամ հոն: Նոյն յիմար կրկնութիւնն էր: Ուրիշ ոչինչ:

Ծամբան ալ վերջանալիք չունէր: Երեք կայարան ունէր տակաւին: Ծերունին ծալած էր թերթը: Սթիվը կը սեւեռէր: Հորթի մը նայուածքը ունէր: Սթիվ միկարէթ մը հրամցուց: Մերժեց: Սկսաւ ծուխի վնասները թուել: Հագիւ հասաւ: Սթիվ ինքզինք դուրս նետեց: Մըթընցած էր: Թերթեւ մշուշ մը իջած էր: Այս քաղաքին մէջ, ոչ տունները, ոչ ալ

փողոցները կը զանազանուէին իրարմէ: Լատպրօք թէրաւը կը բնակէր: Կեդրոնէն հեռու: Պիւտտէն չէր ներեր: Երբորդը չէր, չորրորդ փողոցն էր: Վեցերորդ տունը աջին, կանանչ ներկուած դուռով: Միսիս Տրուէթը՝ տանտիրուհին «թէլէվիզիոն» կը դիտէր: Սթիվին հրաւիրեց որ նստի ու դիտէ «ճօքի» այդ յայտագիրը: Սթիվ չնորհակալութիւն յայտնեց: Ըստ թէ դէշ ձեռով քրտնած էր: Լողանք պիտի առնէր:

Առատօրէն վաղցուց ջուրը: Օճառոտ սրբիչը կը քսէր մարմինն, մորթը քերթելու աստիճան: Դուրսէն Ծուրնէսը ձայնեց, ուրիշ վարձակալ մըն էր: Կը հարցնէր թէ պիտի ուշանա՞ր: Թէ իրեն ալ տաք ջուր պէտք էր: Սթիվ կորսնցուցած էր ժամանակին գիտակցութիւնը: Այդ տնիծուած քրտինքը մաքրուելիք չունէր կարծես:

Երբ վար իջաւ, միւսը Տրուէթը մէշտ «թէլէվիզիոն» կը դիտէր: Պատուան մըրայ, մարդ մը, չնիկ մը դրկած, անոր հաջորդները, կազկանձումները կը փորձէր կեդծնել:

– Փայն... ֆայն... կը ձայնէր տան տիրուհին ձեռքերը իրարու զարնելով:

Սթիվ ըստ թէ «Գլապ» կ'երթար: Գուցէ ուշանար գիշերը:

– Հելլ է ճայս քայլ, վրայ քերաւ: միւսը Տրուէթը, առանց աչքերը հեռացնելու «թէլէվիզիոն»:

«Գլապ»ը չորս պատերուն մէջ, իր սովորական տեսարանը կը պարզէր: Նոյն մարդիկը կ'երեւէին «պար»ի կլոր աթոռներուն վրայ: Վիզին քրիստոնէի վրայ, կաղապարուած մազերով ողու մը հետ կը պարէր: Ձեռքի շարժում մը ըրաւ իրեն: Սթիվ անկիւն մը նստեցաւ: Ուիսքի ապսպրեց: Բօթըր մօտեցաւ: Հպարտ երեւոյթ մը ունէր: Ձեռքը աղջկայ մը ուսին դրած էր: Ներկայացուց աղջիկը: Լիզ էր անունը: Նեղ տարատ մը հագած էր այդ աղջիկը: Այլանդակօրէն շարունակ զէմք մը ունէր: Բօթըր դուրս ելաւ ծխախոտ գնելու: Աղջիկը ոտքերը կը շարժէր նուազին կշռոյթով:

– Ձեռն պարեր, հարցուց Սթիվին:

– Ոչ:

– Հապա ի՞նչ կ'ընես:

Սթիվ բարձրացուց գլուխը: Աղջիկը կը շարունակէր ոտքերը շարժել: Բօթըր վրայ հասաւ: Հարցուց թէ ի՞նչպէս դու տած էր Լիզը:

– Ոնկայի կ'երեւի, ըսաւ Սթիվ:

– «ՕՖ քըրտ» վրայ տուաւ Բօթըր, ուսնողունէի է տակաւին:

Լիզ «քրիստոնէի» վրայ Բօթըրը կը սպասէր: Սթիվ մինակ մնաց: Միշտ այսպէս եղած էր: Դիտեց սիկարէթին ծուխը: Այս հեռաձայնին խուցը գնաց: Օգտնաւային ընկերութեան թիւը դարձուց: Վերադարձի տեղ մը ապահովեց: Վարտնեցաւ սրահ մտնելու: Բան մը փշրուած էր կարծես իր մէջ: Վերջակէտ մը դըրուած էր: Վերադարձաւ սեղանին: Գաւաթ մը եւս ապսպրեց: Տոնելու էր այս օրը: Յաղթանակի՞ թէ պարտութեան: Հաստատ չէր գիտեր: Միայն մէկ բան յստակ էր: Ետքաթ մը ետք, ինքն ալ, ճիշդ հօրը նման քնատ խանութ պիտի վազէր: Մրճեփի աշկերտին շաքարը քիչ սուրճ պիտի ապսպրէր: Արթուն մնալու ձեւ մըն էր: Ապա պիտի սկսէր յաճախորդներու շարանը: Դարձիք ու դարձիք: Այս պիտի ըլլար իր կեանքը շաքար մը ետք: Տարի մը ետք կրկին նոյնը: Տասը տարի ետք, դարձեալ նոյնը: Մինչեւ որ իր սիրտն ալ տեղի տար: Եթէ տեղի տուած չէր արդէն:

– Ծոյ գաւաթ մը եւս:

Գուցէ պիտի ամուսնանար ալ: Այս մէկն ալ ընդունուած սովորութիւն մըն էր: Ինչպէս գաւաթ բերելը: Անոնք ալ իրենց կարգին պիտի քրտնէին: Ետտ, շատ հետաքրքրական հեռանկար մը իսկապէս:

– Սթիվ... Սթիվ:


Վիզին էր: Օբօրուելով կը մօտենար: Գլուխը կախ էր:

– Ի՞նչ կ'ընես Սթիվ:

– Ոչինչ... ապրիլ կը փորձեմ:

– Ապրիլ... կրկնեց աղջիկը:

Աչքերը մեծ մեծ բացաւ: Լալու պէս եղաւ: Նորէն չափազանցած էր խմիչքը: Հազիւ գաւաթ մը աւելի խմէր, այս էր



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՏԱԿՆԱՊԸ

Բանաստեղծութեան տաղանապը կը տկար... Յրիստոսէ առաջ Ջ. դարուն, այսինքն՝ այն օրէն, երբ Սաֆօ, հելլէն քերթողուհին, յուսահատութեան նուաճի մը մէջ ինքզինք ծով նետեց ժայռի մը կատարէն։

Պէ՛տք է հետեցնել ուրեմն, որ քընարերգութիւնը Սաֆօյի հետ սկսաւ եւ Սաֆօյի հետ ալ վերջացաւ։ Ո՛չ, անշուշտ։ Քնարերգութիւնը, առհասարակ բանաստեղծութիւնը, ծնած է առաջին մարդուն հետ եւ պիտի մեռնի վերջին մարդուն հետ։

Բանաստեղծութեան տեսակները, սեռերը կը հիննան ու կը մաշին, սակայն բանաստեղծութիւնը ինք՝ ո՛չ կը հիննայ, ո՛չ կը մաշի։ Կը փոխուի ձեւը, արտայայտութեան եղանակը, բայց խորքը կը մնայ անփոփոխ։ Աշխարհի ստեղծումէն ի վեր գոյութիւն ունի սէրը, օրինակի համար։ Ասիկա խորքն է։ Ձայն արտայայտելու, թերեւս նոյնիսկ գոյն գոյալու ձեւն է, որ կը փոխուի։

Դիւցապներգութիւնը, իբրեւ սեռ, առեն մը ի պատուի էր, հիմա արդէն անցած է դրական պատմութեան։ Ըսել կ'ուզեմ՝ մեռած է իբրեւ սեռ։ Ինչո՞ւ կը կարծեմ՝ անոր համար, որ մեր դարաշրջանին մէջ հին ըմբռնումով դիւցապներ չկան։ Մեր դարուն դիւցապներ

մեքենան է, նիւթն է։ Եւ բնաւ զարմանալի չէ, որ հիմա, մեր օրերուն, դիւցապներգութիւններ ու դեղօններ կը գրուին ա՛յս զգեստազններուն մասին։ Հեթակէսներ չկան, հրատալներ կան։ Վահագններ չկան, օղանակեր կան։ Աքիլ հագներ չկան, հրթիռներ կան։

Առաջին ակնարկով՝ կը թուի, թէ քնարերգութիւնն ալ ի վերջոյ պիտի ունենայ դիւցապներգութեան ճակատագիրը, — պիտի անցնի վերքերու պատմութեան։ Սակայն այս դժբախտութիւնը կրնայ պատահիլ ա՛յն ատեն, երբ մարդիկ ծնին, ապրին ու մեռնին՝ արտի տեղ մեքենայ մը միայն ունենալով իրենց կուրծքին տակ։

Մեքենան փոխարինեց դիւցապը, բայց չի կրնար փոխարինել մարդկային սիրտը։ Այս պատճառով ալ՝ ես վախ չունիմ, որ քնարերգութիւնը կրնայ կորսնցնել իր զահույքը դեղեցիկ դարձութեանց մէջ։

Ո՞րն է ճիշդը։ մենք հիմա բանաստեղծներ ունինք, սակայն բանաստեղծութիւն չունինք, թէ՛ բանաստեղծութիւն ունինք, սակայն բանաստեղծներ չունինք։

Իմ կարծիքով՝ երկուքն ալ սխալ են, որովհետեւ եթէ բանաստեղծն ունինք, ուրեմն նաեւ բանաստեղծութիւն ունինք։

Դա՛րձեալ, եթէ բանաստեղծութիւն ունինք, ուրեմն նաեւ բանաստեղծներ ունինք:

Դժուար է բանաստեղծը զատել բանաստեղծութենէն, ինչպէս զժուար է արուեստագէտը զատել արուեստէն: Եթէ արուեստագէտ չունինք, ուրեմն արուեստ չունինք: Իսկ եթէ արուեստ ունինք, ուրեմն արուեստագէտ ալ ունինք:

Արուեստը տեսութիւն է, արուեստագէտը պրակտիկն է, ինչպէս որ բանաստեղծութիւնը արուեստ է, բանաստեղծը արուեստագէտ է: Մեր խօսքը քանակի մասին չէ, որովհիտ մասին է: Բանաստեղծն է, որ կոչուած է բարձրացրելու կամ իջնելու բանաստեղծութեան ջերմաստիճանը, ինչպէս արուեստագէտն է, որ կը բարձրացնէ կամ կ'իջնցնէ արուեստին աստիճանացոյցը:

Եթէ չկայ մէկը, չկայ նաեւ միւսը: Եթէ կայ մէկը, կայ նաեւ միւսը:

Ինչպէս ամէն բանի, արուեստի մէջ ալ նախապայմանը տաղանդն է: Եթէ տաղանդաւոր է բանաստեղծը, «տաղանդաւոր» է նաեւ բանաստեղծութիւնը: Նոյն բանը կրնանք ըսել արուեստի բոլոր պարունակներուն, բոլոր ձեւերուն, բոլոր սեւերուն համար ալ:

Ծղիկնք այս առթիւ, թէ արուեստը հետամուտ չէ ճշմարտութեան, որ կը կազմէ գիտութեան առարկան: Գրականութեան եւ արուեստի առարկան զեղնացիլն է: Ինչ որ գեղեցիկ չէ, ուրեմն տրդեղ է: Եւ ինչ որ տրդ է, արուեստ չէ: Սնոնք, որ դէմ են այս տեսութեան, կրնան առարկել, թէ Ռոտէնի «Պառաւ Հոլմիէն»ը տրդ է, բայց արուեստ է: Ես ալ իմ կարգիս կրնամ առարկել, թէ «Պառաւ Հոլմիէն»ը գեղեցիկ է իր... տգեղութեան մէջ: Կը հետեւի, որ տրդեղութեան մէջ ալ գեղեցկութիւն կայ:

Կը կարծես, թէ մեր ունեցածը բանաստեղծութեան տաղնապ մը չէ, այլ զգայնութեան տաղնապ մըն է: Զգայութեան եղանակը փոխուած է, ուստի՝ փոխուած է նաեւ բանաստեղծութեան նկարագիրը:

Զգայութեան եւ գատելութեան եղանակները կը փոխուին ո՛չ միայն սերունդէ սերունդ եւ շրջանէ շրջան, այլեւ կը փոխուին նոյն սերունդին, նոյն շրջանին, մինչև իսկ նոյն անձին մէջ: Այսպէս՝ Եղիշէ Զարեկ երկու սերունդ է, երկու շրջան, երկու անձ, մէկը՝ «Ես իմ անուշ...», միւսը՝ «Ամբոխները խելապարուած»:

Առաջ՝ բանաստեղծութիւնը աշխարհէն կը հեռացնէր մեզ, հիմա աշխարհին կը մօտեցնէ: Իրականին մէջ՝ ասիկա դերեթէ նոյն բանն է, հեռանալու եւ մօտենալու եղանակները փոխուած են միայն: Ոչինչ մեզ աշխարհէն կը հեռացնէ, ինչպէս արուեստը, եւ ոչինչ մեզ ապահովութեամբ դէպի հոն կ'առաջնորդէ, որքան արուեստը, — կ'ըսէր իմաստուն Կէօթէն:

Բանաստեղծութիւնը պէտք է կարենայ մեզ աշխարհէն հեռացնել եւ միաժամանակ մօտեցնել անոր: Բանաստեղծութեան էութիւնը չէ, որ փոխուած է ուրեմն. փոխուած է անոր ձեւը:

Կրնայինք ըսել տակաւին, թէ գեղեցկութիւնը այն միակ բանն է, որուն օրէնք միայն չի կրնար հասցնել ժամանակը. թէ արուեստը կապ չունի մասնաւոր դարու մը եւ մասնաւոր երկրի մը հետ եւ թէ իրական արուեստագէտը կը պատկանի բոլոր դարերուն եւ բոլոր ժամանակներուն: Ինչ որ գեղեցիկ էր Պերիկլէսի դարուն, գեղեցիկ է նաեւ այսօր: Փրթիան եւ Միքէլ Անճելօ միայն երէկը չեն, այսօրն են ու վաղն են: Զի՞շտ չենք Հոմերոսը, Վիրգիլիոսը, Տանթէն, Շեքսպիրը...

Արուեստագէտը վեր է բոլոր պայմաններէն: Ան ի՛նք կը ստեղծէ պայմանները: Իր գործը նկարագիր մը ունի, եւ այդ նկարագիրը ի՛նքն իսկ է: Որքան մեծ է վերջինը, նոյնքան մեծ է առաջինը: Եւ փոխադարձաբար: Թերեւս այս ճշմարտութիւնն է, որ ըսել տուած է փարալոնքսի վարպետին՝ Ուայլտի, թէ արուեստի դպրոցներ չկան, արուեստագէտներ միայն կան:

Վեռլէն կը գրէր. «Երբ դժբախտ եմ,

տխուր քերթուածներ կը գրեմ: Երբ եր-
ջտնիկ եմ, դուարի՛ք քերթուածներ կը
գրեմ: Այս է ամէնը: Ես իմ բնագոյն
միայն ունիմ իբրեւ կանոն: Ապա կ'ա-
նելցնէր. «Արուեստը, աղա՛քս, բացար-
ձակապէս ինքզինք ըլլալն է»:

Վեռլէնեսն այս տեսութեան Գոտ-
լեռ հակադրեց ի'ր տեսութիւնը: «Բա-
նաստեղծը, — կ'ըսէր ան, — կը վայելէ
այն անբաղդատելի առանձնանորոշը, որ
ուղած ատեն կ'ընայ ըլլալ ինքզինք եւ
ուրիշը»:

Արուեստը մարգարէութիւն է որոշ
չափով: Միայն այսօրը չէ, «ամէն օր»

է: Ասելի յստակ տեսնելն է: Ձգալն է,
քան բացատրելը: Ձգացածը ներշնչելն է,
եւ ոչ թէ քարոզելը: Ուստի՛ ո'չ կ'ու-
սուցուի, ո'չ դաս կը տրուի: Ո'չ կը
փոխանցուի, ո'չ փոխ կը տրուի:

Մենք այժմ կը գտնուինք մեծ վեր-
վայրումներու նախօրեակին: Ի՞նչ դուքս
պիտի գայ այսօրուան միգրամածէն: Ձե՛մ
գիտեր: Գիտցածս սա՛ է, որ կա՛մ բոլո-
րովին զէպի աջ պիտի երթանք, կա՛մ
բոլորովին զէպի ձախ:

Կեդրոնը — պատմութիւն է այլեւս:

Բ. ԹԱՇԵԱՆ

ԴԵՄՔԵՐ

Բ Ա Ֆ Ֆ Ի

Փայաջուկ:

Ուրմիոյ ընդարձակ լիճին բոլորովին աղ ու Արեւելք գրացնութիւնները կան միշտ, Հայաստանի ու Պարսկաստանի այդ կողմերը, հին ու յաւիտեական Աւարայրի ճամբաներուն վրայ:

Հէր, Զարեանդ, Անդղ, Տղմուտ, Խանասոր:

Անուննե՛ր, անուննե՛ր, անուննե՛ր: Մեր ամէնէն խորունկ մէկ վէրքը կայ այդ կողմերը, մեր ամէնէն պայծառ մէկ փառքին իբրեւ արիւնոտ ու յաւիտեական պատուանդան: Այդ հարաւա-րեւելքի կողմերն էր, ազգային ճգնաժամի անհուն պահու մը՝ որ բովանդակ Հայոց Պատմութիւնը իր Լինելութեան բո-լորական խորհուրդը ապրեցաւ: Իր խորհրդաւոր 24 ժամը: Երբ յայտնի եղաւ, որ մեր եւ բուն Հայաստանին միջեւ կեանքն ու ազատութիւնը նետուած են մահուան կամուրջի մը պէս եւ զօրիւրի մը լման պատկերով:

Վանայ եւ Ուրմիոյ մեծ լիճերուն մէջտեղերն էր, որ ճարտարապետուեցաւ Հայկական Լինելութեան կառոյցին անբանդելի մէկ կոթողը, խորաւիժ եւ յաւերժապայց:

Մեր պատմութեան խորհրդաւոր կողմն է այդ կողմը: Ճնշողազորի՛ կողմը: Ստրկամերժման, ընդվզումի եւ ինքնորոշման կողմը: Առասպելն ու մեր ընդհանրական հոգին մեզ գրեթէ այդպէս եւ այդտեղերէ՛ն կը սկսին անեցնել:



1835:

Հետու եւ հին Թուական, հետու եւ հին տեղ: Արեւելքի մէջ, իրերն ու թուականները շուտ կը հիննան, իրենց ներկային մէջ իսկ անցելական կը թուին արդէն: Արեւը սաստկօրէն դունաթափող րան մը ունի կարծես. ու կարծես ժանգի եւ բորբոսի աշխոյժ գործունէութիւն մը

կայ ամէն տեղ: Հնութիւն ծնող Հին մանրէ մը, չես դիտեր ե՞րբ, ինկած է Ասիա կոչուող ցամաքամասին շատ մը կողմերը, եւ գեռ միջեւ տասներեքնեքնորդ դար եւ գեռ յետոյ՝ կը կրծէ ամէն ինչ որ կեանք է եւ կենսո՞ւնակութիւն: Կան բաներ այդ հոսմ ընդարձակութիւննեքնու օդին մէջ, աւերակներու գետինին տակ ու երկինքէն անդին՝ դադարեցն անցնել, Հին դար, ու երազ, ու երեւակայութիւն քարոզող: Թմբութիւն մը փրօփականտող: Ու ծածկօրէն լոյս, ու ծածկօրէն նորէն՝ խորագոյն եւ ընդարձակադոյն ոճերներ, ջնջումներ, դժոխք եւ չես դիտեր ի՞նչ տեսակ բացարձակութիւններ դաստիարակող: Ու այս բոլորին հետ, յիշատակ աճեցնող, մեր ամբողջ անձին վրայ՝ աստուածներուն, արքաներուն, մեծ բանաստեղծներուն եւ գեռ ուրիշ ճակատագրականութիւններուն կամքը անխմանալի փափառներու դուրջ ալիւրի մը պէս յարածամօրէն մաղող ու չվերջացնող:

Օ՞ր, այդ Արեւելքը, որ Եփրատներու արեւմտեան ափին իսկ, սկսած է ինքզինք արգէն, եւ որ անկէ անդին կ'երթայ ու չի՛ վերջանար, մանաւանդ մեզմէ մէկ ու կէս դար առաջ: Կ'ըլլայ Միջնորդութիւն ու չի վերջանար. կ'ըլլայ Պարսկաստան ու չի՛ հատնիր. կ'ըլլայ Հրեղեկաստան ու չի՛ լմնանար. կ'ըլլայ Չինաստան ու անհո՞ւն է...

Օ՞ր, այդ Արեւելքը, Աշխարհ մըն է ան, ուր քարքերը կարծես աւելի՛ հող են քան բուն հողը եւ հողին պէս ու սնոր կցուած՝ կը շինեն տարածութիւն ու ճամբայ: Հեքիաթները նմանապէս, ծէսներ ու անապառ նախապաշարումները նորէն այդպէս: Խառնուած են ու դարեւորով այդպէս կը մնան հոն՝ հողը, անցեալը, ներկան: Եւ այն միւս ժամանակը, որ ուրիշ տեղ դոյութիւն չունի, որ յատուկ է կարծես Ասիոյ կարգ մը տեղերուն միայն ու կարգ մը ժողովուրդներու, եւ որ անտպաղայ՝ ժամանակ մըն է:



Ընդարձակ դաշտեր, հեռուն լեռնաշարք մը եւ գիւղին մօտ Սուրա անունով փրփրայոյզ գետակ մը:

Ասկէ անդին, Բաֆֆիի ծննդավայրին մէջ՝ Թուառութիւն, յետադիմութիւն: Ամէն նայուածքի մէջ կոտակութիւն, ֆանաթիզմ: Բնութեան չափ Հին եւ կարծես անոր հողին ու քարին հետ միասին ծնունդ առած մարդկային նախնականութիւն մը:

Աղա, տէրաէր, տերվիշ: Ու աշուղ, ու ջատուկներ: Մուրացիկ ու խաչագող:

Մեծ գիւղ եւ ասանկ բաներ, զգտիկ քաղաք եւ ասանկ բաներ:

Սոսկալիօրէն Հին է ամէն ինչ, սոսկալիօրէն ծառնեթ, կենսագրականօրէն ամէն մարդ եւ իւրաքանչիւր առարկայ՝ ահաւոր կերպով բացայայտ: Երկար բացայայտութիւնէ մը՝ յոյնիսկ այլեւս մաշած, լմնալու մօտ: Եւ արդարեւ, սոսկալիօրէն բացայայտ բոլոր բաները որքա՞ն տխուր են, որքա՞ն մաշած, որքա՞ն մաշաբոյր:

Փայտլուկ:

Հայաստանը ունի նաեւ եւ ունի մանաւանդ իր ոգեկան աշխարհադուրութիւնը՝ անտասան եւ աննուաճելի: Ոգեկան այդ մեծագոր աշխարհադուրութեան մայրաքաղաքներէն մին է Փայտլուկը, ինչպէս ցորենի հաց եւ մտքի յաւիտենական հացթուխ մը արտադրած Հացեկաց գիւղը: Ինչէս՝ վէրքի եւ ողբի մեծ ուտիօկոյաններ Փանաքեռն ու Իզգիքմաւան: Ու գեռ՝ Թոքախտաւորներու Թոքախտն իսկ նախանձելի ընծայող Սկիւտաբը, Ակնը, Ախալքալաքը, Յեղին սիրաբ որոնող ու զայն գտած Բրդնիկը: Հայութեան մնացորդացին Համար իմացական բարձր մահակով հովիւ մը ծնած Մէօլէօղը: Եւ այսպէս քանի՞ տեղ, քանի՞ մայրաքաղաք, քանի՞ կեդրոն: Ամէն տեղ՝ ուր այս հինաւուրց ու հնավիշտ ազգը իր մեծերէն ու մեծութիւններէն մէկը աշխարհ բերաւ: Յստակ է եւ ինձի կը թուի թէ կանխուած ենք արդէն, մեր ոգեկան աշխարհադուրութեան եւ անոր

կարեւորութեան մասին աւելի երկար խօսելու համար:

Փայաջուկ: Յետո՞յ:

Ի՞նչը պիտի յիշէինք այդ դիւղին, տասն անգամ աւելի մեծ ըլլալու պարագային իսկ: Ի՞նչ՞ սը, չի՞թ եւ հուլունք վաճառող փերեզա՞կը, սրբութիւն եւ խաչ ծախող արեւելեան կողմն աշխարհի հրօշակուոր նենդե՞րը, աղուէս դունչով, աղուէս բարքով եւ տաճաղուէս խորամանկութեամբ: Ողի չունեցող եւ միայն ու միայն նիւթ ունեցող ո՞ր բանը, ո՞ր անձը նոյնիսկ, յիշեցուեցաւ, իր մահուան վրայէն սերունդի մը ժամանակը անցնելէ ետք: Ողջութեան ատեն իսկ աւելի մահ քան կեանք ունինողող, չապարող եւ միայն տգիտութիւն ապրեցնող, պարսիկ ու հայ աշխարհի այդ կիսամեռ դիւղը, երկաթ իսկ ըլլար, կը դիմանա՞ր իրթէ ժամանակի հսկայ սպունդին, եթէ չըլլար Ջէյրան Ռանուժի անդրանիկ զաւակը, Յակոբը, աշխարհ մը խելք եւ աշխարհ մը ոգի իր կեանքով, դարաւոր տղիտութեան ու մեռելութեան դէմ կարծես խելքի եւ կենսունակութեան փոխփոխէ ժամանակի հսկայ սպունդը, Հասութեան մէկ աստուծուն կողմէ:

Մա՞րդ չէր տառապեր ժպիտի սով այդ ու նման հազար դիւղի մէջ. կա՞ր հայու սիրտ, հազար վէրքէ պակաս վէրք ունեցող. ինչո՞ւ չապրեցան՝ եթէ վէրք ու արցունք պայծա՞ն են կեանքի երկարաճողման: Պէտք չէ մոռնալ երբեք, որ ոչինչ այնքան աւելորդ է, որքան ոգիէ եւ հետեւաբար կրակէ զուրկ տառապանքը: Ոչինչ այնքան ձրի՝ որքան տաքութեան անընդունակ, դիւրապաղ արցունքը, արեւնող, բայց մտածել չգիտցո՞ղ վէրքը:

Մեկը Միրզայի անդրանիկ որդի Յակոբը, հարուստի զաւակ, բազմաթոյր եւ բազմեղբայր՝ դիտէր մտածում եւ խօսք ճարել իր արցունքին: Մտածում եւ խօսք՝ մանուսնդ վէրքին:

Իսկ մտածումներու եւ դիւրի ընդարձակ կայրւածի մը ճակատագրուած մեծիքադէի մը վէ՛րքը...

Հայկական մեծափայլ մտածումի

վարպետներէն էր ազգայուն մարմնով այս բոլորովին կարճուկ փայլունկցին, յեղափոխական խօսքերու ամէնէն խորհրդաւոր եւ ամէնէն մեծ հրձիգներէն մէկը հայ կեանքին: Ահաւո՞ր եւ ահագնանքատակ խռովարկու մը՝ մտքի եւ հանրային տրամադրութիւններու աշխարհին մէջ: Անթեղուած կրակներու եւ ներքին անմար կայծերու առջեւ կեցած զարհուրելի հնոցապան մը:

Աղնուազար մէկը, դըշի մեկը մը:

Առեւտուրի մէջ ձախողութենէ ձախողութիւն դացած, բնա՛ւ չյաջողած եւ ուրեմն սնանկացած այս մարդը, դիւրի աշխարհին մէջ դրամապլուխ աւելցուց շարունակ, դիզեց մտքի անսպառ հարստութիւն, սերունդներու բաւող եւ շատնող զանձ: Իր տգնութիւնները դժբաճաբեր չեղան եւ չբերին նիւթական հասոյթ: Օրական տոտնըվեց ժամուայ իր չարաչար աշխատանքը բաղում տարիներու ընթացքին եւ ձեռք բերուած ճղճիմ վատտակը՝ պիտի չբաւէին երբեք իր բաղմանգամ ընտանիքին. մնաց այդ ընտանիքը չկշտացած եւ խեղճ: Եւ սակայն նման հարիւր հազարաւոր ընտանիքներ ունեցող ոչ թէ ազդ մը, այլ ճանի՛ մը աղգեր լիտլի պիտի կշտանային այն միւս հարստութենէն որ ժառանգ ձղեց իր ժամանակակիցներուն եւ յետնորդներու, եւ որ նիւթական հարստութիւն չէր, այլ ողեկան էր ու սահմանուած՝ մտածել եւ վերանորոգուիլ սիրողներուն:

Իր հայթայթած զաղափարական սընունդով, հին մեկըներու այս շառաւիղը այս ազգին չափ ազդ մը եւս կշտացընելու ի վիճակի էր իսկապէս: Այսպէս կը պատահի երբեմն՝ մեր գոնաւոր, մեր տարօրինակ կեանքին մէջ. հոս մէկը չկշտացնող անճրկած մարդը հոն միլիոններ կը կշտացնէ ուրիշ բանով մը. հոս սպառած է միշտ. հոն անսպառ է շարունակ: Հասուն է տեւաբար, ու տեւաբար կարծես ծերունական՝ կարգ մը տեղեր. իսկ այլ տեղեր՝ անձն է ան յաւէտ խանդավառ, յաւէտ երիտասարդ:

Հայրը եւ որդին:

Մեծ գիւղի մը տէրը կը սեպուէր Փայաջուկի կառավարիչ Մեկիք Միրզան: Ոչինչ: Իր որդիին համար, իբրեւ մնացուն ներկայութեան վայր, որ ըսել է հոգեկան իշխանութեան իբրեւ մնացուն տեղ՝ չնչին տարածութիւն մըն էր այդ գիւղը, չնչին՝ նոյնիսկ եթէ բազմապատկէին զայն ուրիշ հարիւր Փայաջուկով: Գիւղն ու հայ ազգին մեծ մասնազու-թիւնները ընտրած որդիին Փայաջուկը պատմական բովանդակ հայաստանն էր: Համա-Հայրենական ապրումներուն մարդն էր, իր թոքերը յուշալին թըթ-ուած ինով կենսատրոդ Սայմաստցի այս վիպադիրը: Հայրենիքը կը տեսնէր ան իր բոլոր հակայ ծաւալներուն ու նաեւ մանր մանրամասնութիւններուն մէջ: Կը քարոզէր զայն առաքելական բարձրա-դոյն վեհութեամբ մը:

Կը զգար, թէ ատենը եկած էր այնչափ ցնցելու աշխարհի այն ամէնէն տարօր-նակ բանը, որ հայ ժողովուրդը կը կոչ-ուէ: Նորէն ժամանակն էր, որ ընտիր ժողովուրթեամբ ընտրելու ժողովիկ սիրէին իրենց ժողովուրդը ոչ սովորա-կան ձեւով, այլ անսովոր: Դժնդակ ու-ճով մը: Այլ ըսաւ ամենայնի օգտակար: Իր պաշտած աստուծոյն վրայ թերու-թիւն չընդունող անողոր պաշտմունքով մը:

Տէր Թողիկի նախկին աշակերտը՝ իր ազգն ու անոր պատմութիւնը դաժանո-րէն պաշտողներէն էր: Անոր մեծ տե-սիքներուն տուելու ծունկի եկած մոլե-ռանդներէն: Խենթերէն ու աշխարհը խեն-թացնողներէն: Այսպէս...

Համբուրիյէ առաջ իր ազգին հերո-սական ու նուիրական ոտնահետքերը պատմութեան ուղիներուն վրայ, ան խստագոյն բաւերով կը դատապարտէր այդ նոյն ոտքերուն եղբորական անդամա-լուծութիւնը, մեռելու կէտերու վրայ տեսակ մը դժոխային տեղադրութիւն: Քննա-դատական զարհուրելի կրակի մը տակ պահեց հին ու նոր հանրային ամէն պա-կասութիւն, հասարակական ամէն ախտ, ամէն կեղծ սէր, կեղծ հիացում, անօ-գուտ ձեռնարկ:

Գիւղեր եղան իրեն չափ պայծառա-տես, իրեն չափ բարեխիղճ: Գիտցաւ կառավարիչ իր կրակները, տալով ա-նոնց խելք մը, տրամաբանելու իմաս-տութիւն մը, չլուարող բան մը: Իր կը-րակները, հանդէպ որեւէ բանի, չափէն աւելի մեծ եղան, բայց երբեք տնկչի: Ան ու ձգտում ունէին անոնք: Տրուած էր անոնց, իրենց գոյութենէն զատ նաեւ առաքելութիւն մը, պորձունէութեան ըն-թացք մը, յեղափոխական հրդեհի պատ-մարժէք յայտագիր մը:

Վաղուց հունը կորսնցուցած իր ազ-գին հունը փնտռողներէն էր: Եւ ամե-նամեծերէն ու մաքուրներէն: Անկաշառ մը՝ որեւէ տան, որեւէ պարագայի, որեւէ դնով: Հայ ցեղին երկրպագելի մաքուրներէն մէկը: Անոնցմէ՝ որոնք հարիւր առ հարիւր ապահովութեամբ մը, կը դիմանան ամէն փոթորիկի, քան-դիշ որեւէ ուժի: Գրուած է որ ասոնք հայաժողովն: Բայց գրուած է նաեւ՝ որ ուրիշներ չյաղթեն, այլ յաղթեն միշտ ասոնք: Ու յաղթին յաղթանակներուն ա-մէնէն վերջնականովն ու վայելուչովը:

Կրակէ սուրբ մըն էր, անապրելի-րէն դառն չքաւորութիւններու ափը հա-սած մեծ գերդաստանի մը այս գրագէտ զաւակը, ու կը ծեծէր իր ազգը յաղազս լոյսի եւ ցեղային արժանապատու-թեան:

Ինչո՞ւ չծեծէր՝ ծեծաստան աշխար-հի մը եւ ծեծաստան ժամանակի մը մէջ: Եւ մանաւանդ ծեծուելիք բաներուն ա-մէնէն առաջ ծեծուելիք բանը, — Տգի-տութիւնը, որ ուրիշ մէկը միւսին աւե-լի գէշ հազար անուն եւս ունի, հազարն ալ ստրկութեան յանգող:

Գէ՞շ՝ միթէ ծեծը այդ գէշ օրերուն, այդ բնաւ լաւ բան մը չունեցող ժամա-նակին մէջ: Վերջին մեթոտը չէ՞ր, վեր-ջին ապականը, տարօրինակ կերպով վեր-ջին քաղցր քնքութիւնը նոյնիսկ՝ մար-դուն թմրած հողին եւ ծուլութեան մէջ կորսուած խեղճ միտքը դուրս բերելու իրենց տգիտութեան հասարակաց գո-մէն:

Պէտք էր ծեծէր շրջապատը, ենթարկէր զայն բառերու խտապոյն ֆալսիկայի մը՝ օրինակովը զինք իրական ֆալսիկայի տակ շարժարած եւ իրմէ իմացական հսկայ հակ մը կերտած Տէր Թոդիկին:

Արդարեւ, պարտաւ տեղ ծեծած էր զինք, քիչ ուսում, բայց ամէն դասի ահագին ցաւ հաղորդող Տէր Թոդիկը, ամէնէն ամուր եւ անմահ տիպարներէն մէկը Ռաֆֆիի ամբողջ գրականութեան: Մէկը, որ այսօր եւ կարծես միշտ, նոյնքան եւ զուգէ աւելի ապրող ու իրական անձ մը թուեցաւ, քան զինք ստեղծած հեղինակը: Ռաֆֆիին պէս, Տէր Թոդիկն ալ կարծես զրազէտ մըն է, բայց փոխան զկայծերու, Յայմաւաւրք եւ շարժարանքի զիրքեր գրած: Այդ կերպարի մասին, տակաւին զայն օր մը առաջ տեսած ճարտար թղթակիցի մը կենդանի մէկ գրութիւնն է որ կը կարդանք կարծես, այն ալ մեզի շատ ծանօթ անձ մը նկարագրող:

Տէր Թոդիկը...

Կարելի չէ Ռաֆֆիի մասին մտածել եւ խօսիլ, առանց մտածելու եւ խօսելու նաեւ այս հին վարժապետի մասին:

Տէր Թոդիկը...

Կաղնիի պէս ամուր եւ լեռներու այդ հին ծառին չափ ալ կարծր տիպար մը: Լաւ մարդու մը համար բոլորովին անպատեհ բացերով կը ներկայացնէ զայն Ռաֆֆի: Ու բաւական մը այդպէս երթալէ ետք, իր ճամբու վերջաւորութիւններուն միայն կը համոզուի կարծես, որ զուր է պայքարիլ Աղթամարայ անապատէն եկած ու Փայաջուկ հաստատուած այդ կախարչ տէրտէրին դէմ. կը ստիպուի հետեւաբար ըսել՝ — Թէ չար չէր Տէր Թոդիկը, թէ նոյնիսկ բարի էր ան:

Օ՛, Տէր Թոդիկը եւ Ռաֆֆին:

Գէշ բառերով եւ հետզհետէ կարծես յոռեզոյն տրամադրութեամբ ինքզինք արտայայտած ծածուկ սիրոյ մը, աւելի ճիշդ համակրանքի մը խոստովանութիւնը կը թուին մեզի Ռաֆֆիի խօսքերը, շարժարաններու օրէնսդէտի մը, Տէր Թոդիկի առիթով ըսուած: Եւ միայն

տէրտէրին աղջիկէն չէ որ առաջ կու գայ ինքզինք հոս հականիշներով թարգմանող Ռաֆֆիին թաքուն համակրանքը Տէր Թոդիկին հանդէպ: Կու գայ նաեւ՝ վասն ուսման եւ դպրութեան հայթայթուած ֆալսիկայէն ու ծեծի դժնդակ ճիպոտներէն: Թէ մեր կարգ մը սէրերն ու ծածուկ համակրանքները ճիշդ ուրիշ՝ կու գան երբեմն եւ ինչ խոտոր եղանակներով կ'արտայայտուին, Աստուած գիտէ: Ու չի փրկէր մեզ մեր դրապէտ ըլլալը կարգ մը հիմնական անդիտութիւններէ, մեր արտայայտութիւններու ընթացքին: Զխորանանք սակայն եւ ըսենք, որ ուրիշ դարու եւ ուրիշ դասակարգի այդ մարդը, Տէր Թոդիկ, հակառակ թերեւս իր հանճարեղ հեղինակին բուն մտադրութեան՝ հետու կը մնայ տակաւին բացասական տիպար մը ըլլալէ: Մեր առջեւ դիզուած բոլոր դաժան փաստարկութիւններուն հակառակ, կը յաջողի որոշ համակրելիութիւն մը պահել ընթերցողի մտքին մէջ, որ հեղինակին զիջողութիւնէն չի դար կարծես: Այնպէս որ, Ռաֆֆի-Տէր Թոդիկ պայքարին մէջ, Տէր Թոդիկն է որ կը յաղթէ կարծես ի վերջոյ, իր դաժան բայց եւ նուիրական ֆալսիկայով:

Որովհետեւ,

Ի՞նչ թող ընէր ի վերջոյ, Արեւելքի աթարին եւ աթարի ծուխին ու հոտերուն մէջ ազդային կիանք, եկեղեցական դործունէութիւն եւ ընդհանրական ապագայ դաստաւորելու դատապարտուած ժողովուրդի մը տէրտէրը, որուն համար, ի պատիւ իր եւ իր ժողովուրդի իմացութեան՝ Գիտութեան իւրաքանչիւր մասնիկը մարդ մը իր կրկնապատիկին կը վերածէ եւ կ'արժէ հետեւաբար աշխարհ մը ծեծ եւ ծառայութիւն, ծէս եւ կանոնապահ կեցուածք:

Ի՞նչ թող ընէր:

Զրի կը արուէ՞ր լոյսը այդ թուականին եւ այդ Պարսկաստանին մէջ, առանց խօսելու զեռ քաղաքակիրթ Արեւմուտքի եւ իր հաւատաքնութիւն բուրդ դըպրոցավարութիւններու մասին: Ինչ բան չէր դնուեր սուղ, չէր դնուեր հարկեր

ծեծ ու Ֆայախկա արժող դժուարութեամբ: Ո՞ր կտոր հացը, բոլորովին չոր՝ չէր արժեք այդ օրերուն ծայրէծայր ցերեկներուն քրտինքն ու յոգնութիւնը ամբողջ: Արդ, կտորիկ մը հացը երբ դժուար ճամբով մը տուն կը մտնէր, տրամաբանական ի՞նչ պատճառով կտորիկ մը ուսու՞մը պիտի չմտնէր այս անդամ դժուարագոյն արահետով մը: Ու գնահատելի չէ՞ կարծրամեթոտ տէրտէրը, երբ շատ վեր կը դասէ կտոր գիրը, քան կտոր հացը եւ իր ազդին ամէնէն թանկարժէք այդ բանը կը բաշխէ անմոռանալի ծեծով, Ֆայախա առ Ֆայախ փողով փորագրող մոլեռանդութեամբ մը: Թեւեղով աւելի հեռուններն ու խորունկները գացած մարդիկ, իրմէ շատ առաջ, գրեթէ ինչ Աստուծոյ գրքին մէջ, եւ Տէր Թողիկ իր կարգին իմաստուն եղբիւր էր արտագրելու դաստիարակական փայտի վրայ անոնց իմաստութիւնը: Դառն է ծառ խրատը իսկ զոտալ նարաքողը...

Կեանքն ու բոլոր վարչակարգներուն բոլոր իմաստութիւնները չկրցան հակառակը փաստել դժբախտաբար: Եկան բոլորն ալ այդ ծանր տողը հաստատելու, ճիշդիւրեւ եւ Ֆայախկայի պէս գէշ տողը:

Տարօրինակ պիտի ըլլար, որ իր դոյութեան ընթացքին առաւելաբար սպասուելով իմած ժողովուրդի մը տէրտէրը, բան սորվեցնելու համար, չընտրէր սաստկութեան ճամբան, դաստիարակութեան ճիւղին ուղի մը Երեւան: Գիրքին տուած իր անհուն վարկին համար իսկ դժուար է դրախտ չտանիլ իր այրեղնադիմին ի խնդիր ամէն վայրկեան դրժոխք մը կերտելու տրամադիր այս թըթու քահանան:

Դիրքի՞ն դոնտեցան, երկինքէն դիւրի՞ն բերուցան, ինչ աղօթք եւ յոգնութիւն, ինչ սպասում չարժեքին այս աղգին, — կրնար ենթադրեալօրէն մտածած ըլլալ Տէր Թողիկ, հայ տառերը սորվեցուցած պահուն: Եւ ի՞նչ կ'արժեն մանաւանդ, դիրքին սորված, անտառապանք կերպով ճանաչուած բաները, մեղ-

քերով ու մեղանշումներով ծանր այս աշխարհին մէջ: Ապո՛ւշ էր Տէր Թողիկ, որ չգիտնար հոգեբանական խոր արժէքը այրմունքով ու տեսակ տեսակ խորովմունքներով ձեռք բերուած դրամագրութիւններուն: Գիտէր առնուազն, որ իր գիտցած աշխարհին մէջ ոչ մէկ բան չի կրնար մնալուն ըլլալ եւ արդիւնաւոր՝ առանց չարչարանքի:

Եւ ապա՝

Քաղաքակրթական կուրաստան այդ Արեւելքին մէջ, բոլորովին սառած խաւարի մը դէմ մարտի ելած հին ու անհուն Մեսրոպի մը այդ տժգոյն, այդ առկածեալ եւ սակայն իր մտադրութիւններով սքանչելի ներկայացուցիչը՝ ինչ թող ընէր, իր ներքին համոզմամբ մա՛րդ կը ծեծէր միթէ, թէ Ֆայախկայի մէջ դրած կը չարչարէր մարդացեալ տգիտութիւնը, անկէ լոյս հանելու կամ անոր մէջ մոմ մը վառելու բոլորովին հայրկական յամառութեամբ: Բաճիկներու վրայ կը բարձրանար Տէր Թողիկին ձեռքը, թէ Մաշտոցի աշխարհին մէջ, տգիտութեան վտանգ կազմող տղոց: Ըստ ամբողջ անցեալի մը՝ ծեծը ծնողական իրաւունքներ ունէր գիտութեան եւ քաղաքակրթութեան վրայ: Ձէ՛ր օգնած ճարտարապետութեան, գրականութեան, նկարչութեան եւ ամէն ինչի: Բնա՛ւ ծեծ չկար բերդի մը շինութեան մէջ, կամ մուրջի մը շինութեան մէջ, վանքի մը շինութեան մէջ: Զուարթնոցի հեռու հիմքերուն մէջ չկա՛ր այդ ճարտարապետական արտում միջոցէն: Իսկ մեծագոյն յեղափոխութիւնները ո՞ր հողին մէջէն բուսան եւ ուրկէ՞ առին իրենց առաջին սնունդը:

Ի հարկէ, Տէր Թողիկները չուզեցին բնաւ, որ մեծ ընդլիմանանք երբեմն յունութիւն ըսուածին դէմ. բայց իրենց գաւազանը իրենցմէ՛ ալ խելացի ըլլալուն, արագորէց նաեւ իրենց յոյսերը հեռագնաց եւ կրցաւ հայթայթուած մտքի լոյսին խառնել այն միւս լոյսէն, որ ըմբոստութիւն եւ յեղափոխական կեցուածք կը կոչուէ:

•

— Բաղդատած փոքրիկ ոտքերուն շատ խոշոր դուռնի մը ունէր Ջէյրան Ռանուսի տղան, կ'ըսեն եւ կ'ուզեն դարձացրնել նաեւ մեզ իր դարձացած կենսագիրները, մոռնալով միշտ որ ազգի մը մասնազրոյթի միջոցով մէկ վիպագրին կը վերաբերի իրենց խօսքը եւ ոչ թէ ողիմպիական մարտի մը համար վաղուի մը կամ աշխարհահռչակ ֆութպոլիսթի մը: Վասնզի ո՞ր պէտք է որ ոտքեր փոքր ըլլային եւ դուռնի մը խոշոր, եթէ ոչ հոս: Եւ կա՞յ աւելի անդարմանալի եւ արդար բան, քան այս մէկը:

Հսկայ դուռնի մը:

Հարկաւ հսկայ:

Որովհետեւ ոչ թէ իր, այլ ուրիշի ոտքերն են որ պիտի վազեն, թուղթին վրայ վազող ու չյողնող իր գրիչէն ետք: Դուռնի մը ու գրիչով վազելէ ետք թուղթերու անհուն աշխարհի մը մէջէն, բոլոր Բաֆֆիներուն դերը վազցնել է եղած ու վազքերուն հսկել: Հսկակչուէ՛ աջն ու ձախը, թոյլն ու աստիկը, ազգավրնանն ու մարդավնասը:

Հսկայ դուռնի մը: Պատշաճ:

Վայել՝ իր մեծ առաքելութեան: Վայել՝ իր գրական ու յեղափոխական անսպառ լաւաներուն, որոնք Վալդեր կը կոչուին, ինքն կը կոչուին, Սամուէլ եւ Դաւիթ Բէլ կը կոչուին: Որոնք Կարօ են, Ասյան են, Ֆարհատ են, Որսորդ Աւօ են, Գաւոր Պետրոս են, Մուրադ են, Վարդան են, Սամուէլ են, ու Դաւիթ Բէլ, Միքիթար, Հիւսիսային հեռու մահակապաններն են Համբ:

Որքան տեղին, նուիրական մտածումներն ալ մեծ, այդ չեղող պարունակը՝ տգնաւզարմ մատենագիրի իր ուսերուն: Որքան տեղին՝ այս ազգին տեսած այնքան անտեղի դուռնիներէն ետք: Անտեղի եւ անբովանդակ: Անպատշաճ: Մի՞թէ բազում չեղաւ Բաֆֆիներու օրէն մինչեւ այսօր, թիւք անոնց որոնց գլուխները եղբակիցներէն անընդունակ մտքին խորհելու գործին մէջ: Գլուխներու մակարձ, ձրի գոյուն թիւն մը կարծես, մախում մը:

Ազգը Վալդեր—ու Հեղինակի օրերուն, այլ մանաւանդ աւելի առաջ, քաղաքութեան հաստ շրջանի մը, մեծահարուստ եւ մեծատիրոջ անձեր ունէր առհասարակ, փոխանակ զինք Պատմութեան լայն պողոտայ հանող իմացական ու ոգեկան մեծութիւններ ունենալու: Կաթողիկոսներ կային՝ անհզօր եւ անհայրական: Կաթողիկոսարանի փակ պարիսպներու, փակ Վեհարանի եւ փակ մտքի դիւրին կաթողիկոսներ էին անոնք: Մթաւանող էին շարունակ եւ ոչ թէ լուսաւորէ, Հայոց կաթողիկոսական աւանդութիւնը մինչդեռ լոյս կ'ուղէր միշտ, մեծ Գրիգորէ մը եւ ինք վերապէ մը ի վեր: Ու կային առաջնորդներ՝ ոչ թէ ազգի, այլ միայն ու միայն առաջնորդարանի: Գրականորոյս վարդապետներ՝ եւ ոչ թէ գրահրնար:

Ձրի ապրողներու դասակարգ մը: Փոքր, անաղթք, անտառապանք: Անվրսեմ:

Մարդկային ահաւոր մանրուք մը ամէն տեղ՝ հայ ազգին կենսունակութիւնը ընթիլ առ ընթիլ կրծող, սպառող, մահացնող: Հասարակական հիւժախտ բոլոր դասակարգ մը՝ որուն դէմ հարկ էր բռնել պայքար մղել: Անխնայ պայքար՝ հանրային բոլոր տեսակի չարիքներուն դէմ, դեմու համար Հայը իր զարգացման բնականոն հունին մէջ:

Պայքար եւ մտաւորականի մաքուր խոտութիւն:

Ուրիշ բան է արդէն այն մեծ վիպակոյտը, որ Բաֆֆի վաստակ անուանով հասած է մեզի: Ազգային մաքուրութեան եւ առողջ մթնոլորտի հաշուոյն կատարուած ներքին աւլուք մը չէ՞ ան, հսկայական համեմատութեամբ: Ձէ՞ ապա, անխնայ վերադասաւորում մը, դարերէ ի վեր տակնուվրայ եղած կարասիներու:

Գրիշ էր այս վիպագիրին ձեռքինը թէ յեղափոխականի կացին՝ մեր հանրային գործերու եւ ստրկային մտայնութեան ու բարբերու ծովիլի—ին մէջ: Չենք գիտեր: Գիտենք միայն որ ան կարեւոր շատ բան, փետտեց կարգ մը ուրիշ բա-

ներ, ու երազեց մեր ազգին կենանք տա-
րեր ձեռով մը: Երազեց զայն ազատ, ե-
րազեց Հանրապետական, ու Հանրապե-
տականօրէն արդար: Պատուեց եւ մեր
երեսին նետեց Հազար անգամ եւ Հազար
ձեռով տպուած մեր ստրկութեան ծրա-
դիր-կանոնադիրները, եւ պայծառ տը-
րամարանութեամբ ու պայծառ ուխտե-
րով՝ ընդունիլ տուաւ յեղափոխութեան
նոխ յայտադիրը, Հայաստանի եւ Հա-
յութեան յաւիտենական մէկ ծրագրէն
Հանուած կարծես:

Կ'ուզէր յեղաշրջել Հայ կենանքը: Իր
վէպերը կ'աշխատէին այդ ուղղութեամբ:
Վէպէն դուրս՝ նաեւ միւս բոլոր տողե-
րը: Կործր էր յաճախ, որովհետեւ յե-
ղափոխութիւնը չի կրնար քնքոյշ ըլլալ:
Յուսահատ չեղաւ բնաւ, որովհետեւ յե-
ղափոխական երթի ատեն յուսահատու-
թիւնները մէկ մէկ դաւաճանութիւն են,
վատարիներու դասալքութիւն:

Բաֆֆի իջած էր պայքարի կրկէս
մոլեռանդ խաչակիրի մը ոգևորութեամբ,
խարազաններու Համար բոլոր ձեւի մա-
կարոյծ գոյութիւնները ազգին մէջ:

Բայց միայն խարազան դործածող
մը էր Մշակ թերթի վիպագիր աշխա-
տակիցը, ոչ ալ տեւաբար եւ ամէն ինչ
քանդող մը: Սքանչելի որմնագիր մըն էր
նաեւ՝ արդար եւ գեղեցիկ բաներու: Տե-
սիլք եւ տրամաբանութիւն Հաւասարա-

պէս զօրաւոր էին իր մէջ. կատուցում-
ներու ատեն, այդ երկու հիմնական ըն-
դունակութիւնները կը դործակցէին ի-
րարու, ամբողջական ընծայելու Համար
առաջադրուածը: Ամուր տրամաբանու-
թեան ընկեր կրակոտ երեւակայութեամբ
մըն է որ Բաֆֆի մեզ կը փոխադրէ պատ-
մական ու աշխարհագրական որեւէ շըր-
ջան, եւ կը ստեղծէ ուղած ատենը անց-
եալ աշխարհի մը թէ ապագայ կենանքի
մը Ոսբալծիւն, — կարօտախտը:

Հայաստանի Հարաւային սահմանե-
րուն վրայ ծնած մտքի այս քղեշխը իր
մտածելու գործը կը կատարէր մարգա-
րէի մը պայծառատեսութեամբ եւ տաք-
եալի մը նուիրումով, Արտվանին պէս,
ու այն ամբախտ ու ամբակորով երի-
տասարդին նման, որ դեռ չտեսնուած
պայծառութեամբ մը դաւանադեց Հա-
ւատամբը նոր ժամանակներու յեղափո-
խական Հայութեան, իր Ազատն Աստ-
ուած երգին պարզագոյն աստութեամբը:

Սալմաստցի Հանճարեղ երիտասար-
դը թիֆլիսեան իր դժնդակ դիւերներուն
մէջէն արձագանգեց Նոր-Նախիվեանցի
երիտասարդի երգին, վերածելով այդ
երդը բազմահազար էջերով վէպերու
շարքի մը: Անոր իւրաքանչիւր վէպը
կրնանք կոչել Ազատն Աստուած...

ԵՂ. ՊՅՅԱՅԵԱՆ

Հոր Գիրքեր

Ինչ ունեցել է ծագվաւորը քո
Հնում, անցեալում - լուսաւոր ու վեհ,
Ինչ ունի այսօր, ի՞նչ գտարք ու խոս -
Ո՛ղբը հաւաքել եւ քե՛զ է տուել: -

Ե. ԶԱՐԵՆՅ



Հր. Քոչարի «Ապիտակ գիրք»-ի աւարտին, ընթերցողը անպայման պիտի մտարեւի Զարենյի վերի տողերը, կամ՝ նոյն ճոխութիւնը ընդդէմ դերձաւոր բառերով պիտի արտայայտէ իր խորունկ դժուարեանները: Իրաւամբ, ինչ որ իբրեւ զլուսաւոր ու վեհ բան ունի մեր ժողովուրդը, ինչ որ իբրեւ Հայաստանի ունի ու երազ, կարօտ ու ցանկութիւն, վերջ կամ գայլոյթ՝ ամբողջութեամբ ու զրական թարմութեամբ տըրուած են այս հատորին մէջ: Իմացական բուն Հետաքրքրութիւն, լեզուի պաշտամունք, տառապանքներուն մէջ անհրկուն մնալու կամք, լաւատեսութիւն ու վերականգնելու անյետաձգելի տենչ, աշխատանք ու հայրենի հողին հետ մեր ունեցած անքակտելի ու դարաւոր եղբայրութիւնը: Իւրաքանչիւր կիրք մը դարձած է «Ապիտակ գիրք»ին մէջ եւ իւրաքանչիւր կիրքի համար Հր. Քոչար ընտրած է կրօն ու հոգեւոր տարերային տիպար մը:

«Ապիտակ գիրք»ը կը բացուի համա-

նուն պատմութեամբ: Պատմութեամբ պատմարանի մը կեանքն է: Աշխուժ, դորձունեայ, ճառագայթող իմացականութեամբ եւ հարուստ ներաշխարհով մարդ մը, որ իր գլուխ-գործոցը գրելէ առաջ կը կորնցնէ աչքերուն լոյսը: Ազդիկներուն կը պատուիրէ թանաքամանը լեցուն պահել ու դասաւորել լեցուցած թուղթերը, և ինչ կը շարունակէ նախկին թափով գրել: Գրած է հոթանասուն հազար էջ: «Մնում է քննաւնէնք հարիւր էջ գրել» խիղճս յաւիտեան պէս խաղաղեցնելու համար: Այդ հարիւր էջը պիտի ցոյց տայ, որ ի գուր չեմ ապրել աշխարհումս... Ուրիշ տեղ մը ըսած էր զարժեալ՝ - «Գլուխ-գործոցս դեռ թղթիմ չեմ յանձնել: Նա եղում է հագուստ մէջ: Ուշադրութիւն դարձրէ՛ք խօսքիս, չեմ ասում մտքիս մէջ: Նա հագուստ մէջ է եղում: Դեռ սպասում եմ եղա՛մ, փրփրի, մի քիչ իջնի, վերստին», որ տեսնեմ խոր յատկութիւնը:

Կը հասնի գլուխ-գործոցը թուղթին յանձնելու ժամը ու շորս օր շարունակ

կը գրէ եւ հինգերորդ օրը կը դնէ վերջակէտը, այն մեծ գոհունակութեամբ որ «գրեցի ամենամեծը եւ ամենամեծ գիրքը...»: Ներսէ կը մտնէ աղջիկը ու թուղթերուն նայելէ յետոյ՝ կ'արձակէ առանձին ճիւղ: Մոռցած են մէկն զնկ ածանիւն մէջ: Պատմարանին գրիչը սահած է թուղթերուն վրայէն, առանց հետք ձգելու: Ձէ դրուած գլուխ-գործոցը: Շուտով կը մեռնի պատմարանը: Զաւակները իրար կը բերեն թուղթերը եւ կը կադմեն «Ապիտակ գիրքը»:

Պատմութեան անանցքն է տրիպ ու զեղեցիկ է ամբողջը: Թորունի է խորքը ու թելադրական: Պիտի ըսէինք՝ եթէ իրական է պատմութիւնը՝ հեքիաթի մը չտի համ ունի, եթէ հեքիաթ է՝ իրականութեան մը չտի ուս: Յաւիտենական է մահաւանդ ապրումը: Ամէնէն առաջ ունի ընդհանրական բնոյթ մը: Բոլոր արուեստագէտներուն առաջնապէսը դրսեւորող խորհրդով մը: Ո՛վ չէ ապրած իր գլուխ-գործոցը գրելու տառապանքը: Եւ ապա՝ ո՛վ յաղողած է ըսել իր վերջին խօսքը: Իր վերջին խօսքը ըսելէ ետք՝ այն ո՛ր անձն է, որ ոչինչ ըսած ըլլալու տառապանքն չէ բռնուած վերստին ու նոյն պահուն չէ մտածած իր գլուխ-գործոցին մասին, որ պիտի գրուի տա՛հալին: Իրական արուեստագէտներուն հոգիին՝ անհատնէի՛ է կենքը ու ամէն ոք ունի իր «Ապիտակ գիրքը»:

Ըսինք, թէ մեր իրականութիւնը կը ներկայացնեն Քոչարի հերոսները, առաւել՝ հեքիաթի հով մը ունին, առաւել՝ ներքին ապրումներով շարժումի անցնելու բացարձակութիւն մը: Հր. Քոչար ոչ միայն բռնազրօս ներկայութիւններով ու սարքովի մտայնութիւններով չէ խնդած իր այս գիրքը, այլ նաեւ միանգամայն խորտակած է սոցիալիստական ուժայիլ կոչուած սահմանափակ պարունակին շրջանակները ու մտած մարդոց բնական ապրումներուն տաք ոլորտին մէջ:

Երկար առեն զձեռով ազգային, խորքով միջազգային՝ կոչուած գրական ապարդիւն սկզբունքին կիրարկութեան հանդիսատես ըլլալէ ետք՝ մարդ ուրա-

խութեամբ կը հաստատէ մարդկայնական սկզբունքներուն յաղթանակը: Քոչարի գիրքը հերքումն իսկ է իրենց քառասունամեայ քարոզներուն: Միջազգայինի ձգտում չկայ հոն, ալ ու ձախ եղած ակնարկութիւններն իսկ զանցառելի են անոր էջերուն վրայ: Կայ բացարձակ ազգայինը եւ ձեռով եւ խորքով: Եւ ասիկա է միջազգայինին ուղիղ ճամբան: Ռուսիահետեւ գրականութեան, ինչպէս նաեւ արուեստի միւս ճիւղերուն առանցքը մարդն է. մարդուն ներաշխարհը խուզարկելու եւ հոն թաքնուած ուժերն ու լոյսերը դուրս բերելու արարքն գրականութիւն անունը կը արուի: Եւ ո՛ւր կրնայ մարդ աւելի հարազատ ըլլալ, խորանալ, բիրեղանալ, եթէ ոչ իր արեւնը կրող մարդուն, պատմական նոյն մահաւանդութեան ու հոգեբանութեան տէր անձերուն մօտ:

Հր. Քոչարի գործերէն մաս մը թարգմանուած է ռուսերէնի եւ Սովետ Միութեան սահմաններուն մէջ ապրող ժողովուրդներու լեզուներուն: Նման բախտի մը արժանանալու պարագային, սակայն, «Ապիտակ գիրքը», վերը ընդգծուած առաւելութիւններուն բերումով, անսկնկալի պիտի բերէ օտար ընթերցողը, ինչպէս պատահեցաւ, նոյն դեռով, հայ ընթերցողին: Մեքենանուէր ընտանեկան հոգեկան եւ մեքենայացեցող մարդերու երկրպագութիւն ընելը ամէնօրեայ ծիսակատարութեան վերածած դերակատարը չէ՝ «Ապիտակ գիրքը» հերոսը, այլ անոր էջերը իր կիրքով ողողած ապրող տիպարն է, ստեղծագործութեան, կտրուի, վէրքի, աշխատանքի, պաշտամունքի բազմերես կենքով մը տրոփող բարդ անհատը, որ տեսանելի կը դառնայ ուրիշին, երբ հարազատ մը հարազատ լոյսեր կ'արձակէ անոր վրայ:

Ինքը, Հր. Քոչարը, միայն հոյ մարդը կրնար եօթանասունըհինգ տարիներ շարունակ մայրենի լեզուին համար կոչուած բերաններ բանալ եւ անակնկալ յորդումներով էջեր քաղցրացընել. ուրիշ մը չէր կրնար բնաւ չըստուած

սրտեր լույսին հանել ու սանձաղծեցի այն «կարօտ»ը որ յատուկ է միայն հայ մարդուն:

Իւրաքանչիւր պատմութեամբ սպիտակ խորք մը ունի, սպիտակ խորք մը ունի, սպիտակութեան մը խորհուրդը կը թելադրէ, մեր ժողովուրդին մէկ առաքելութիւնը, մէկ բնազդը, անգիմադրելի ցնորքը: Առաջինը մտքի իրականութիւններուն հաւատարմութեան ցեղային հաւատքի մը թանձրացումն է, երկրորդը՝ մեր ողորդութիւնը, «նահապետ»՝ լաւտեսնութիւն մը կ'անձնաւորէ, մայրենի լեզուը, շարքը, մայրենի լեզուին է արդէն, իսկ «կարօտ» մեր կարօտն է, տարերային ու անդիմադրելի, որ ողջ ժողովուրդի մը ամէնէն բուռն ապրումը եղաւ ամբողջ յիստուն տարի:

Այսպիսի տիտակ գիւղէն դադարած ու Արագի այս ափին ինկած դաշտապահ մըն է անոր Հերոսը, Առաքելը, որ հառաւոր, երեկոյ, գիշեր, ցերեկ կը նստի միւս ափի հարազատ վայրերուն ու կ'ապրէ ուրիշ յանձնած երկրի կարօտ կոչուած անհանգչելի կրակին: Օր մը չդիմանալով այդ նոյն զգացումին զօրութեան՝ կը գրեմարալէ՝ ռահմանը ու կ'երթայ հայրենի գիւղը: Քնորիդային քաղաքական սահմանը չարափառ կերպով խախտած վերայիշեալ Առաքել էլոյնեանը՝ կը գրադրեն «պետութիւններ կառավարող մեծ մարդիկ»: Արտաքին գործոց նախարարութիւնները յուշագրեր կը գրեն իրարու: Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան կառավարութիւնը կը պահանջէ Առաքելը «մեր կատարած յանցագործութիւնների համար պատասխանատուութեան ենթարկելու»: Միւս կողմէն «Թուրքական կառավարութիւնը չի տարախուսում, որ յիշեալ էլոյնեանը կապուած է անգլիական հետախուզութեան հետ եւ, հետեւաբար, հանգիստանում է երկու բարեկամ երկիրների թշնամին»:

Մինչ Առաքելը՝ կը հասնի «երկիր», կը համբուրէ հօրը դերեղմանը, աչքերուն կը նետէ Մուրատ գետի ջուրէն, կը նստի իրենց փուլ եկած տան շէմին, կու-

լայ, կարօտը կ'առնէ ու կու դայ: Անմիջապէս կը նետուի բանտ եւ դատի կը բաշտի:

Սրտառուչ մաս մը.

– Որ Հայաստան էստեղ է, իմը գործ ունի իր էմտեղի հետ, – հարցրեց մայրագան:

– Իմ սրտի ըսէ, մատաղ...:

– Մարդիկ խելոք վիտի շարժանք, թէ սրտով...:

– Ես չեմ ու գաղափար չունեմ, ես սիրտ ունեմ, որ խօսք ու խրատ չեմ կանայ... Որ կարօտեալ՝ կը ծռի, որ ծռաւ՝ օրէնք ու սահման կը մտնայ...:

Այս պարզ կարօտը, պարզ մարդու մը անշար այս արարքը, ինչպէս կը թելադրեն վերի մէջբերումները, կը ստեղծէ հսկայ տակնուվրայութիւն մը: Պատահաւ կը դառնայ համայնապար կարգերուն ու բարքերուն ամփոփ մէկ բեմադրութեան: Պարզամտութիւն ու «չեկիտ» տակաւ բնազդով՝ կատարուած հաւատաքնութիւն: Կացութիւնը իր մարդկային կողմով լուրջնորդներուն եւ նոյն կացութիւնը իրենց հաշտին շահագործելու նկրտող ծանրաշուք ստրկամիտներուն միջեւ ընդհարում: «Վերելում հանձնարարներ եւ մերքեւում հետեւորդներ ունեցող» արարածներուն ներաշխարհային բովանդակ ազտեղութիւնը՝ «Ո՞նց ես անմեղացի, մաքուր աղանի ես դարձրի էդ դաշնակցական խմբապետին»: Ու այս բոլորին ողբերգական հետեւանք՝ շնորհադրկումներու ու շնորհադրկումներու շարք մը: Այսինքն՝ պարզ կարօտի մը առիթով ու դիմաց համայնապար բարքերուն ամբողջ ծիծաղելիութիւնը:

«Սպիտակ գիրք»:

Իր անունով միայն «Սպիտակ» չէ այս գիրքը, սպիտակ է մանաւանդ արդար ժողովուրդի մը ամենամաքուր ու մարդկային ապրումները բերեղացեղութիւնը: Պատմութեան մը անունով ամբողջ հատոր մը կ'ընկու գիրքութիւնը ինչ չէ թիւադրած մանաւանդ այս «Սպիտակութիւնը»: Այլ ամբողջին ու գին: Կարծես ուրիշ ոչ մէկ խորագիր պիտի ընդունէին Գրաւոր այս պատմը:

ւածքները: Սպիտակ են անոնք մեր կարօտներուն մաքրութեամբ, մեր պաշտամունքներուն ջերմեղանդութեամբ, հողին հետ սննցած մեր կապերուն զօրութեամբ: Թուրքին սեւը տեսած, ու համայնավարին կարմիրը տեսած, թուրքին կարմիր արարքներուն ենթարկուած, ու համայնավարին սեւ գործունէութենէն հարուածուած, այլ՝ միշտ սպիտակ մընացած մեր ուղիով, բնագոյներով, ասոնց շուայլ տուրքերով: «Սպիտակ»-ը ցեղ մը կը խորհրդանշէ հոս ու ինքզինքը կը հակադրէ ոչ սպիտակ կեանքի մը, որուն բովանդակ ահաւորութիւնը անբացառ Գոշարի սերունդը, հարաւի թէ հիւսիսի մէջ:

Տասներորդ տարեկանէն սողին դրականութիւն կ'ընէ Հր. Գոշար եւ երեսունընչորոր տարեկներէ ի վեր գիրք կը հրատարակէ, ունի կարմիր բովանդակութեամբ կարմիր էջերու ընդարձակ ժառանգութիւն մը, բայց իր ամբողջ գրականութեան լաւագոյն էջերը խմբագրելով կարելի չէ կազմել «Սպիտակ գիրք»-ին որակով հատոր մը:

Ու այս փթիթումը, յանկարծական զարթնումը զարմանալի չի թուիր մեզի: Հայ ընթերցողը Հայաստանի գրողէն

միշտ կը սպասէ նման յորդումներու: Ուրովհետեւ գրողը ինք եւս առնուած էր ճշունմի տակ, կը վախճար իր մտերիմ ապրումներէն, խորագոյն անձէն, ճիշդ իր հերոսներուն պէս, որոնք «ամէն օր յիշում էին իրենց երկիրը, բայց վախճում էին խոսել, քովիկեմք քարեկամութիւն կար պետութիւնների միջև, վերագալմից ու յայտից խոսելը դատում ու դատաւարում էր»:

Նոյնն էր պարագան գրողներուն ու Գոշարին, որ, անուշտ, «տասնամեակներով լաւ իր սիրտը» պիտի զատարկէր օր մը եւ պիտի պատմէր իր խորագոյն հսր ախկոծող փոթորիկներուն պատմութիւնը անոնց՝ «Ով էիր լսողութիւն ունէի» լսելու, հագի ունէի» հաւատալու եւ սիրտ ունէի» յուսալու:

Մենք կը հաւատանք արեան կանչին եւ հողի ըստած համադրեալ ուժին, որ նախաօրութիւն է, կարօտ է, ուրոյն ձգտում է, եւ որ կը սպասէ իր յայտնութեան ժամուն ու կը փութացնէ ու կը շեշտագրէ մեր յաղթանակները:

«Սպիտակ գիրքը» այդ «ժամուն» ծնունդն է:

Գ. Ս.



«ԱՄԵՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ» (ԺԲ. ՏԱՐԻ) (ԿԱՐՈ ԳԵՈՐԳԵԱՆ)

Լուրջ, մեծդի, ալլազան։ Ու իբր տարեգրքային որակին մէջ, զինք կանխող տասնմէկ Հատորներուն վրայ յաւելում արձանագրած Հաստատուն Հատոր մը։ Եթէ զբաղան մրցանակներ ու պատուանշաններ ըլլային մեր մէջ տարեգրքային Հրատարակութեանց Համար՝ ոչ մէկ կասկած, որ Կ. Գէորգեանը պիտի ըլլար առաջինը զայն ստացող, — Թէոդէկի մահէն ետք, — իր լոյս ընծայած տարեգրքերուն որակը, ծաւալն ու ալլազանութիւնը նկատի առած։ Կարօ Գէորգեան, արդարեւ, չպատահեցաւ երբեք, որ դաւաճանէ Ամէնուն Տարեգիրքը — ամէնունը ընկու գրական տարադին։ Այդ տարազը կ'ուզէր տարեգրքին Համար կանգ առնել միջինի մը վրայ, տուրք տալով մէկ կողմէ ժողովրդական ճաշակին եւ դիւրամատչելիութեան, ու, միւս կողմէ՝ ընթերցողներու մտաւորական դասակարգի աւելի լուրջ հետաքրքրութիւններուն։

Տասներկու տարի շարունակ, Կ. Գէորգեան ընթերցումի նիւթ Հայ ընթերցողներու, Հայերէնի տարածման կը ստարէ եւ առ այդ անգնահատելի ծառայութիւն մըն է որ կը մատուցանէ մեր մշակոյթին։ Այս ուղղութեամբ ինչ որ ըսուի իրեն չափազանցուած պիտի չթուի։ Իր անխնայ աշխատանքներուն, կատարած պրպտումներուն եւ զազութէ զազութ թափառումներուն շնորհիւ, ան յաջողեցաւ մշակութային տեսակ մը Հաստատութեան վերածել իր տարեգիրքը, որբիշ Հաստատութիւններու կողքին։ Իսկ ազնի ու անոր ոգեկանութիւնը զօրացընող ճիգեր, երէկ, այսօր եւ վաղը՝ արժանի են մեր ժողովուրդի ամենաջերմ դնահատանքին։

Մասնաւորելով մեր խօսքը Ապրիլեան Եղեռնի Յիշատեանկի Հատորին, որ 12-րդ Ամէնուն Տարեգիրքն է, յայտնենք, թէ նախկիններուն բաժիններէն ու

չինչ զանց ընելով Հանգերձ, Կ. Գէորգեան ներկայ Հատորին մէջ աւելցուցած է Եղեռնին եւ անոր յարակից պարագաներու բաժին մը։ Այսպէս։

Նահասակ դրաղէտներէ նշխարներ ու նկարներ տպելէ ետք — 46 էջ —, 134 էջ ալ նուիրած է Եղեռնին, պատմութեամբ, նկարներով ու փաստաթուղթերով լեցուն։ Կայ այդ էջերուն մէջ նահասակ մտաւորական եւ ժողովուրդ, կայ ապստամբութիւն, կայ ցեղասպան դաժիճ, ու կայ մեծ վրէժխնդրութեան մը ահաւոր գործադրութիւնը, գործադիր անձերու տիտանեան տիպարներով, — Սողոմոն Թէշլիբեան, Արշալիք Շիրակեան, Արամ Երկանեան, Միսաք Թորլաքեան, Ստեփան Մաղիկեան եւ Պետրոս Տէր Պօղոսեան։ Միայն ինքը արդէն, այս մասը, մեծադիր էջերով դիրք մըն է եւ ընտիրներէն՝ Ապրիլեան Եղեռնի մասին ու կը կազմէ առանցքը, 688 էջերով այս տարուայ տարեգրքին։

Ամէնուն Տարեգիրքէն ամէնէն կարեւոր մէկ բաժինն ալ իր գէշ Գաղութներդու բաժինն է, ամէն տարի դադուրի մը նուիրուած։ Այս տարի այդ ծաւալուն բաժինը յատկացուած կը գտնենք Անդլիոյ եւ Իտալիոյ Հայերուն։ Հարիւր քառասունըճինդ էջերով — որ բնի է դարձեալ առանձին գիրքով մը —, տըրուած է Համառօտ անկարկ մը երկու դադութներու անցեալին վրայ. տրուած է ապա անոնց այժմու պատկերը։ Մարմիններ, դպրոցներ, ազգային դէմքեր, Վենետիկի Միխիթարեան Վանքը եւն։

Բնաւ հարկ չենք տեսներ յայտնելու, թէ խմբագրական ու զաստարումի ինչ ոգիով Կ. Գէորգեան մօտեցած է տարեգրքի իւրաքանչիւր բաժինին, քանի որ տասնմէկ տարիներու վաստակ մը կայ մէջտեղ որ կը վկայէ հեղինակին լրջութեան, հմտութեան եւ խառնապահանջ ճաշակի մասին։

Վ. Ճ.

Կոմարներ

ՄՆԱԾ Է 1915-ԻՆ...

Անո՞ճ որ հայոց լեզուի կամ գրականության ուսուցիչ եղած են, նը-
կատած են հարկաւ, որ հեղինակ մը ներկայացնելու կանչուած աշակերտ-
ները, ընդհանրապէս, ինքնավստահ կը դառնան իրենց վերջին բառերուն
մէջ, ու առանց սխալելու գոյզն կ'սակածին՝ կ'եզրակացնեն.

— Նահատակուած է 1915-ին...

Այնքան շատ է նահատակներուն թիւը, այնքան շատ կրկնած է սղան
«նահատակուած»ը, որ կը կարծէ, թէ գրագէտ ու բանաստեղծ բառերուն
դիմաց անհրաժեշտ է այդ չարաղէտ բառը ու պայման:

Բայց օրերը փոխուած են ու կեանքը տարբեր բան կ'ըսէ մեզի հիմա:
Հայոց հայրենիքը, ժողովուրդը եւ միտքը նոյն ատեն թիրախ դար-
ձուց թշնամին եւ մեր անունն ու անոր կնիքը կրող ժառանգութիւնները ի
սպառ ցնջելու իր գաղափարներով տարիներ շարունակ սեմֆաց: Բայց հայ-
րենիքին մէջ մասը կայ ու կ'անի ամէն օր, ժողովուրդը կայ ու կը բազ-
մանայ ամենուրեք ու նմուած իմացականութիւններուն տեղ՝ նոր գէտֆե-
րու հսկայ փազա՛նգ մը կայ:

Այս մարզին մէջ կայ մասնաւոր եւ աւելի գեղեցիկ մէկ պարագայ:
Մինչ թշնամին հայ մտաւորական դասը փնացնելու իր եզրական ծը-
րագիրը կը գործադրէր, նոյն տարին, մեր ժողովուրդը, նոյն կռչումին ծա-
ռայելու նակատագրուած դէմքերու ծնունդ կու տար, նահատակութեան
թուակման ծննդեան թուականի մը վերածելու շքեղ վրէժխնդրութեամբ մը:
Նոյն օրերուն ծնածները նահատակներուն թիւին կէտը հազիւ կը հասնին,
բայց անպայման կը պատկանին ճակատագրեւոր վերին խաին: Այսուհե-
տեւ պիտի տանք անունները Յովհ. Շիրազին, Սերո Խանգատեանին, Եղ-
Պոյաճեանին, Համո Սահեանին, Մարո Մարգարեանին, Լուիշներու եւ այլ-
տի ըսեմք հպարտութեամբ.

— Մնած է 1915-ին...

Մեր իմացական կեանքին մէջ, այս դէմքերը կու տան այն տպաւո-
րութիւնը, կրկնեմք բառը՝ հպարտութիւնը, ինչ որ տուին մեզի ծովածա-
ւալ նահատակութեան մը դիմաց վասպուրականի, Շապին Գարահիտաթի,
Մուսա-Տաղի, Ռուֆայի ու Տարօնի դիւցազնական խոյանքները:

Երգի եւ խօսքի արածուած վարպետներուն տեղ՝ երգի եւ խօսքի նոր
վարպետներ ծնան հաւանաբար նոյն տարին, որոնց կենսագրութիւնը ան-
ծանօթ կը մնայ մեզի, բայց կան ապահովաբար, թշնամին դէմ տարած
ցեղին սա յաղթանակին մէջ իբրեւ լրացուցիչ ուժեր:

Այս նոր յայտնութիւնները, ի հարկէ, չեն փոխարիներ կորուստե-
րը, փոխարինելի ոչինչ կայ աշխարհի մէջ, եւ թերեւս ատար համար է, որ
կեանքը հետաքրքրական է եւ արուեստը իմաստ ունի: Խօսքը շարունակու-
թեան մասին է, ու այդ «շարունակութիւնը» կը շարունակուի 1915-ին ծը-
նածներուն կողմէ, նոր խորքով ու նոր ու ճախ երանգներով:

Նահատակներուն նահատակութեան յիսնամեակը տօնեցինք, մեզի կը
մնայ նոյն գարավով վեր առնել նոյն թուականին ծնածներուն բերքը եւ սօ-
նել այս անգամ ծննդեան յիսնամեակներ...

Դ Ի Ր Ք Ը . . .

Տեղական շաբաթաթերթի մը Ապրիլեան Եղեռնի յիսնամեակին ճաշիկով թոշակաւ վերադարձեր Էջիմ մէջ, վերադարձաց գրչակ մը, յիմացի առաջնով փորձած է պաշտպանել համբաւանքով ըմբռնութեամբը:

Մեծ միտք չունիմք վերադարձ գրադարձը իր ըմբռնութեամբով, բայց քերական անբարձր տ է պատկ թմայլ մը արտագրել հետ, ըմբռնութեամբ ինքն ինքն փոքրամեծներուն փոքրագուրքինը ցուցադրելու համար: Ապակեմեծութեամբով պաշտպանութեամբ ըմբռնութեամբ ինքն ինքն փոքրագուրքինը ցուցադրելու համար: Ապակեմեծութեամբով պաշտպանութեամբ ըմբռնութեամբ ինքն ինքն փոքրագուրքինը ցուցադրելու համար:

«ՆԱԻԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՑ»

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, ԷՁ 340

...Ուր տանիկը անցել է՝ անտառ չի մնացել, բոյս չի մնացել, տուն չի մնացել... Հարցրէ՛ք յոյներին, հարցրէ՛ք սերպերին, հարցրէ՛ք բուսականներին... Այսօր իսկ, տեսէ՛ք նրանց վայրենութիւնը՝ ոչ միայն անպաշտպան ազգաբնակչութեան դէմ, ոչ միայն կանանց եւ երեխաների դէմ, այլ արուեստի եւ ճարտարապետութեան այն հրաշալիքները դէմ, որոնք տասը տասնըչորս դար կեանք են ունեցել, մարդկութեան փառքն են կազմել եւ քրիստոնէական արուեստի հիմքը... Դուք զիտէ՛ք, անշուշտ, որ Քիմալի կառավարութիւնը հրաման է տուել իր զօրքերին թնդանօթի բռնել բոլոր կառուցուածքները, բոլոր եկեղեցիները, որոնք մնացել էին ամայացած երկրում եւ որոնք վկայում էին մեր ցեղի հանճարը: Եւ այդ ոչ թէ իբրեւ պատերազմական անհրաժեշտութիւն, այլ պարզապէս քանդելու եւ տեղադրելու համար... Մտածեցէ՛ք Աղթամարի հրաշալիքները, Անիի անզուգական պալատները եւ եկեղեցիները... Սրբկանե՛ր...

— Անկասկած, իրաւունք ունես, — համաձայնուեց տխրած ձայնով Հէրեանը:

— Ես ոչայ եմ.

«ՆԱԻԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՑ»

ՊԵՏԶՐԱՏԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, ԷՁ 360

— Անկասկած իրաւունք ունես, պառասխանեց Հէրեանը տխրած ձայնով: — Փաստերը յամառ են, բայց ժողովուրդը միշտ մնում է ժողովուրդ, ինչ ազգի էլ պատկանի, յանցաւորը զեկավարներն են...

— Ես ապայ եմ.

ԿԵՑՈՒԱԾՔ...

«Գէպէ մը պատահեցաւ անցեալ տարի եւ մեծածախ գրազէտ մը իր դիրքը ճշգրտօրէն տարբերեց իր համակարգը: Եւ անա չարտաւար գտած գրազէտին արարքը ճիշդացնելու համար լայն տեսանք տեսնելու մը պարտաւարքներ: Պարտաւարքներուն հեղինակները իրենց տղայ եւ տղայներով քերեւա փորձեցին վստահութեամբ զիր մը շահիլ իրենց կուտակեցողութեան, բայց գրազէտի կեցածքէ մը չէր ամկապած մեծ գրազէտի մը համակարգը:

Բ. տպագրութեան մէջ երեւցած յոյժ թրջասէր այս յանձնարարներն անդրադառնալէ առաջ՝ պիտի ուզէինք ընթերցողին ուշադրութեան յանձնել յայտարարածը, յայտարարածին ամբողջութիւնը, դիմացի էջին վրայ չտեղեկանալու եւ հոն արտագրութեան ճիշդ սկիզբը գտնուող հետեւեալ մասը եւս:—

«Նկատուած է. տանիկը, որ բարձրագոյն ուսում է առնում՝ այլտեսքով է: Կա վախում է մշակոյթից, ժողովրդական հասկանում է, որ մշակոյթը — երբ արտաքին անբովանդակ ձեւ չէ — մտահոգ է իրեն համար: Եւ շատ հասկանալի է. մշակոյթ ստեղծելու համար պէտք է կարողանայ այլափոխուել, հոգեպէս վերածննդ, քաղաքացիական, կեանքին նոր արժէքներ տալ եւ այդ արժէքներով ապրել: Իսկ նա՝ վարժ է քանդելու, այրելու...»

Թուրք մարդուն ներքին բովանդակութիւնը կամ անբովանդակութիւնը սեւագրող այս բնորոշ սողերը կաշառուած բարեացակամութեամբ՝ մը մէկ-կողմ դնելէ ետք՝ այլեւս ի՞նչ կը մնայ Թուրքին, ինչով ըմբռնելի կը դառնայ Թուրքը: Յանուն ի՞նչ բանի կը կատարուի գրական այս տանիկութիւնը ի վերջոյ:

Ու ապա՝ Թուրքը արդարացիօրէն կարակացութիւնը՝ «ժողովուրդը միշտ մնում է ժողովուրդ, ինչ ազգի էլ պատկանի, յանցաւորը ղեկավարներն են...»

Յիշեցէք ձեզի ծանօթ Թուրք ղեկավարները: Սուլթան Համիտը եւ իր կարմրութիւնը: Իթթիհատը եւ իր ոսկերը: Աթաթուրքը՝ եւ ասոր թրջութիւնը: Մենտերէսը՝ եւ վերջին թրջութիւնը: Այսինքն՝ նոյն մեղադրութեան ծնած Թուրքը, ի պատկերի իւրում: Բայց Թուրքերու ծնունդ առնած Թուրքը յանցաւոր չէ, կ'ըսուի մեզի, «յանցաւորը ղեկավարներն են», կ'ըսուի:

Թրապէ՞ս Հայերէն գրուած են այս սողերը, հայ գրադէտի մը գրչով գրուած են, Հայաստանի մէջ տպուած են...

(«Աւագախորտ Նուր»):

ԱՍԿԷ՝ ՀԱՅԵՐ ԷՆ ԱՆՑԵՐ

ԱՍԱՑՈՒԱԾՔ ԾԱՌ ՏՆԿԵԼՈՒ ԱՌԹԻՒ

Տէ՛ր, օրհնէ՛ ծառն այս մատղաշ: Ես կը տնկեմ գայմ ահա
Փխրուն եւ սեւ հողին մէջ ուր պապերս կը պառկին.
Ես՝ ամենց թռոր հսկայ, այս հողին տէրն եմ կրկին,
Ու արեւուն տակ կ'անիւմ՝ ամուսն ամուսն շարքիս վրայ:

Պիտի բանայ ծառն այս մեծ իր բազուկներն ու հողին,
Գրկած իր մէջ պապերուս արեւոտ շունչը ամմահ.
Տէ՛ր, միս միմակ, նագիլի, այս ծառն ազօք մը ըլլայ
Յի փաթթուիլ իր մարմնոյն գան սիրողները գիւղին...

Երկաթագիր պատմութիւնն այս մտերիմ հողերուն
Աչքիս արցունք կը բերէ... Փառք ու մեռել շատ ունի
Երկիրն իմ հին, ալեւոր՝ սրուն ես թռն եմ վայրի,
Խնկումներով բեղմնաւոր, երազներով օրօրուն...

...Մեռելներու իբրեւ խաչ՝ ես այս ծառը տնկեցի...

ԼԵՒՈՆ Զ. ՍԻՒՐՄԷԼԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏՈՒՆԿԵՐԸ

Եղեռնի գոհերի յիշատակի ծառատունկը առաջինն սկսեցին երեսնի
աշխատաւորները: Այս օրերին բազմամարդ է Գեղարդ տանող ճամնապարհի
Աւան եւ Առինջ գիւղերի միջեւ ընկած հատուածը: Այնտեղ, արեւի առաջ
շողերով զոռուած բլուրների վրայ արդէն տնկուել են հազարաւոր ծառեր:
Ամէն օր այստեղ ծառատունկի են գալիս մայրաքաղաքի աշխատաւորների,
ուսանողների, պարզների բարձր դասարանների աշակերտների խմբեր,
գրողներ, արուեստագէտներ: Կեանք ու կենդանութիւն է տալիս ճամնա-
պարհի ձախ ափին ընկած այս երբեմնի ամառի լանջը: Գնալով աւելանում
են տունները՝ շերտ առ շերտ, շարք առ շարք: Գեղամ Սարեանի հետ ծառ
է տնկում երիտասարդ ուսանողը: Նա փխրուն հողով ծածկում է մատղաշ
ծառի արմատները եւ հիւսումնաւ նայում սիրելի բանաստեղծին, որ ծառ է
տնկում իր աւագ գրչեղբայրների Գ. Վարուժանի, Սիւրենյանի, Ռ. Սե-
ւակի, Գ. Զօհրապի եւ միւսների յիշատակին:

Քիչ այն կողմ ուսանողների մի խումբ շրջապատել է Վաղարշակ Նո-
րենցին: Նա երիտասարդական եռանդով բաժը մխրճում է շէկ հողի մէջ,
շիւեր տնկում, որ անեն, սաղարթախիտ ծառեր դառնան, հով անեն մարդ-
կանց եւ պատմեն հայ ժողովրդի տխուր անցեալի ու այս լաւ, այս արեւոտ
օրերի մասին:

Կ'անցնի մի քանի տարի, Հայաստանի տարբեր շրջաններում այսօր
տնկուած հազարաւոր ծառերը կը դառնան կանաչ ամառաշերտեր, միշտ
կանաչ պահելով ամառաց գոհերի յիշատակը:

(«Գրական Քննիչ», 1965 Ապրիլ 2)

ԵՒ ԱՍԿԷ՛ ԹՈՒՐԲԵՐ...

Հայաստանի գրողներուն ծառ տնկելու ներշնչումին մէջ բաժին մը ունէ՞ր արդեօք 1920-ին Հայաստան գացած ու քսանէն վար տարիքի մը մէջ իր քերթումները ստորագրած Սիւրմէլեանի «Անացում»-ը: Կարելի չէ պնդել, բայց նաեւ կարելի չէ Հայաստանի գրողներու կոչին եւ դայն իրաւ դործելու թափին հետ չյիշել Սիւրմէլեանը, որ կրկին զայս հոգին տէրը՝ դարձած՝ «Մեռելներու իրերէն խաչ» ծառ կը տնկէր, պապերուն փխրուն ու սեւ հողին մէջ:

Երէկ բանաստեղծ մը ու այսօր բանաստեղծներու ու գրագէտներու բազմութիւն մը ու ամբողջին ողին՝ որ կ'անձնաւորէ միւր ժողովուրդին առհաւական բուռն տարերքը, թանկարժէք իրագործումներու մղիչ ուժը: Կառուցանել, կանանչեցնել, արարել՝ ահաւասիկ մենք: Ու քայլ մը անդին, ուրիշ ժողովուրդ մը՝ որուն բովանդակ պատմութիւնը հիւսւած է կոտորելու, չորցնելու, աւերելու յաղթողական դէպքերով:

Դիմացի բանաստեղծութեան ու արձակին մէջ դուք տեսաք մեր բանաստեղծներուն ու գրագէտներուն ողին ու ամայքները շնչեցնելու անոնց անդիմադրելի եռանդը: Կարդացէ՛ք հիմա Իթիֆատ կուսակցութեան կեդրոնական կոմիտէին մաս կազմած ու Ապրիլեան Եղեռնէն քիչ առաջ իր գորութիւնները հրատարակութեան տուած թուրք բանաստեղծ Զիա Կէօք Ալփի հետեւեալ յատկանշական տողերը.

Արդարութիւնը պիտի կայեմ սուրիս ծայրը,
Փաղափակըքսութիւնը ձիւս պայտերում,
Պիտի կործանեմ աւէն բան,
Քար քարի վրայ պիտի չքողաւմ,
Պիտի չմնամ ո՛չ կանգում ծառ, ոչ ալ կանանչ տերեւ,
Եւ այնպիսի աւերակներ պիտի սփռեմ,
Որ զանգձ տեսնողները ըսեն.— Հոսկէ քարքերն են անցեր...

Մարդիկ իրենց պատմութիւնը կը կերտեն ու հպարտութիւնը կը ձեւակերպեն իրենց արդարամտութեան, քաղաքակրթութեան բերած նպաստին, քար մը ուրիշ քարի մը վրայ դնելու կորովին, ծառեր ծաղկեցնելու եւ ապարանքներ բարձրացնելու իրենց ստեղծարար կիրքին վրայ, մինչդեռ թուրք մարդը, թուրք ցեղին խորագոյն արտայայտիչը՝ բանաստեղծը կը յոխորտայ արխանահողութեան, տանակոխումի, քանդումի, կանանչ բան չձգելու եւ աւերակներ սփռելու իր եռանդուն թրքութեամբ:

Հարկ չկայ երկարելու մեկնաբանութիւնը: Գուցէ վերի քանի մը տողերն ալ անհրաժեշտ չէին: Զիա Կէօք Ալփ ա՛յնքան ամբողջական ձեւով խրատացած է իր ներաշխարհին բնական մղումները, ու նաեւ ա՛յնքան ցալտուն դարձուցած է թուրքին դարաւոր թրքութիւնը, որ աւելորդ կը դառնայ բաները անդամազննելու եւ խորհրդածութիւններ բնելու ամէն փորձ:

Հակադրարար, հարկ չկայ նոյնպէս մեկնաբանելու հայոց արարչական բնադղը:

Ի՞նչ անջրպետ Հայուն ու Թուրքին միջեւ...

... ԵՒ ԱՍԿԷ՝

Նախորդ էջի վրայ արուած բանաստեղծական թրգութիւնը կարգացած վերջացուցած էինք, երբ Հանգիպեցանք թիւ մը վարը զետեղուած սահմարմակ թրգութեան: Մասնակցական ծանօթութիւն մը կը յայտնէ, թէ անիկա ազուած է 1911-ին, զօանկնք սրաթերթի 21 Սեպտեմբերի թիւին մէջ: Պատահական թուրք մը չէ նաեւ այս զգուծեան հեղինակը, այլ ստացած է Համալսարանական վճարական, գործածած է Ալիս Կիւտիւզ կեղծանունը եւ կը կոչուի Էնիս Ալին Պէյ: Էնիս Ալին Պէյ վարի արեւածարաւ իր ուխտը արտասանած է Ծաթիւ Սուլթան Մէհմէտի զամբարանին առջեւ ծնրադրած մէկ պահուն:

Քաղաքական ապարդիւնի մէջ զանուզող եղեռնամոլներու դառին մէջ, առաջին հերթին դժուար է թերեւս ըմբռնել բանաստեղծին ներկայութիւնը, բայց մենք մարդու առջեւ չենք դտնուիր, Թուրքի մը առջեւ կը դտնուինք, ու Թուրքը Թուրք է մարդ ըլլալէ առաջ ու բանաստեղծ-գրողէն դառնալէ ետք:

Ընդգծեցէք Էնիս Ալին Պէյի թրգական ընդլուծութիւնը արտայայտող սա տողերը:

Գրութիւնը պիտի կախեմ հաքաղամիս սայրին,
Խմաստութիւնը երազէմիս փամփուշտին,
Փաղափաղքութիւնն ալ ճծայգիս ետեւի պայտին...

Կոխած տեղերուս ամէն մէկ մասէն արիւմ պիտի ծայրփի...
Երկարած թաթիս տակ գարուններ, աշունն եւ աշուններ գմտանի
պիտի վերածուին...
Եթէ քաղ քաղի վրայ ձգեմ, ետիս քաղած օշախս քաղ քաղուի...
Վարդաստաններ մեռելատան պիտի ընեմ տարովս...
Պատմութեան պիտի քաղում անանկ կործանուած ու գետնիհասար
աւերակ մը որ տասը դար չկարենան քաղափաղքութիւն կանգնե-
ցրեն լանդ վրայ...
Եթէ ճիւղերուն վրայ տերեւ, ու պատմէշի վրայ դրօշ քաղում, քաղ
սեւ կնիք գարնուի հաւատիս տախտակին վրայ...
Շունչէս հուր պիտի սփռեմ, գէմէնս՝ մահ, իսկ քայլափոխէս՝
անդունդ...
Ամէն ճերմակ գոյն բուս մը վառօղի արատով պիտի խաբանեմ, եւ
ամէն վառօղի արատ՝ ափ մը արիւնով պիտի քաքաւեմ...
Գրութիւնը պիտի կախեմ հաքաղամիս սայրին, խմաստութիւնը
երազէմիս փամփուշտին, քաղափաղքութիւնն ալ ճծայգիս ետեւի
պայտին...
Լեռներու փառարները, անտառներու հովանին եւ աւերակներու կոշ-
կոն գուրծերը պիտի խօսին յաւիտեանութեան՝ եւ այդ տեղերէն
անցնող քաւրքին պատմութիւնը...

ԴԱՐՁԵԱՎ ԹՈՒՐԲԵՐ

Ու ապա անգամ մըն ալ կարդացէք նախորդ էջին մէջ տրուած Թուրքին ներշնչումը: Ձեռն Կէօք Ալի Եւ Խնիս Ալին Պէյ բառ առ բառ զիրար կը կրկնեն: Բայց չկարծէք թէ բանազոյ է մէկը կամ միւսը: Այս նորոգութիւնը անոր համար է, որ երկու հեղինակներն ալ Թուրքեր են եւ երկու տեսակ Թուրք լիայ աշխարհի վրայ: Այլ՝ կան նոյն բնազդով, նոյն արիւնով, նոյն ներշնչումով ու բառերով Թուրքեր միայն թրջաց մէջ, ու իրենց բնազդը մէկ բան կը տենայ՝ աւեր, արիւնք մէկ բան կը փնտռէ՝ արիւն, ներշնչումը նոյն բանը կը թելադրէ՝ զոհիք, բառերը նոյն բանը կը հրահանդեն՝ եղեռն:

Արարքներ թուելու եւ անոնց մէջէն Թուրք հողին ստուգելու ճիշդ զուր ճիշդ մը կը թուի այլեւս, երբ այդ հողին ամբողջութեամբ սեւազրոյ Ձեռն Կէօք Ալի Եւ Խնիս Ալին Պէյին պէս հասընտիր Թուրքերու ներշնչումները կան:

Թարգմանութեան հետ կու տանք նաեւ Հայաստան թրքերէնը, որ առիթ կը դիւրացնէ կողատուքեան հանալուծը: Երանի թէ ուրիշ լեզուներու հետ վերածուէր այս գրութիւնը եւ առիթ ընդհանրանար հանալուծը...

Պատարզում քօրբախարն հէր քուքարնմտան գան փըզըրբանաֆ...
Ուգաթարդում բէնչէմին ալթընտա պահարլար խիգան, խիգանլար
գնտան օլանազ...
Թաշ իւքիմնտէ դաշ պրագըրսամ, արգաւտա գալան օնազըմ
սէօնսին...
Կիւլիստեմլարը սինկիւմլէ գապրիստան իտէնէյիմ...
Թարիհէ՝ տիւմ տիւգ պիւ խարապա պրագանազըմ ֆի, իւքիմնէ օն
ասըր, պիւր մէտէնիյէք գուրամաւըմ...
Տալ իւքիմնտէ կարրագ, պարն իստիւմնէ պայրագ պրագըրսամ,
իւմն քահքարմըն օրքարնա գարա տամկա վարուլոււմ...
Նէֆէսիմտէն հանկըն, սիւսիւմտան էօլիւմ, աւըմըմտան ուշուրում
սագանազըմ...
Հէր պէյագ բէնկէ պիւր մէնչէ պարուք լէֆէսի, հէր պարուք լէֆէսիմն
պիւր աւուս գան պուլայանազըմ...
Մէրիամէթի հաքազանըմըն ազըմա...
Միւֆէրէյի քիւֆէնկիմին գարսուրնա...
Մէտէնիյէթի աքմըն արգա մուրնա տաանազըմ,
Տալարըն ֆօլուֆլարը, օրմանարըն կէօլկէլէրի, խարապալարըն
պարուշուֆ չէնրէլէրի էպէտիյէթէ «պարալարտան կէչէն քիւրֆ
հիֆայէլսինի» սէօլէյէնէֆ...

ՆԻԻՐԵՆՊԵՐԿԻ ՎՃԻՈՐ ԵՒ ՄԵՐ ՎՃԻՈՐ

Բաժանորդի դարձու առաջին ֆանամենակին գործադրուեցաւ կանխա-
մքտածուած առաջին ցեղասպանութիւնը, եւ երկրորդ ֆանամենակին՝ երկ-
րորդ ցեղասպանութիւնը: Առաջինին մարդակերները երկրորդը կազմակեր-
պողներուն «վարպետները կը համարուին աշխարհի կռիւն, ու այս ընդ-
գրծումը աննկող չէ, որովհետեւ պատմութիւնը սխալ պիտի ըլլար եւ Թուր-
քը Թուրք պիտի չըլլար, եթէ երբեք աւերումներու եւ կոտորածներու մար-
դին մէջ անկէա դադրէր գործակիր ըլլալէ:

Թուրք սերագործները եւ նաեւ սերագործները իրենց մտայնացում-
ներով եւ ծրագիրները գործադրելու դժոխային եղանակներով միեւնոյն ու-
զին կը ներկայացնեն, բայց անոնց ղեկավար ղեկներուն տրուած պատիժ-
ները նոյնաբժէք չեն:

Աշխարհը միացաւ Նիւրեմպերկի մէջ դատի քաշուած նաեւ դատին-
ներուն դէմ, բայց նոյն աշխարհը տարբեր կեցուած մը ցուցաբերեց քուրք
բարեմիներուն հանդէպ:

Հագար անգամ խաբուած, հագար անգամ խոցուած, գոհուած, զըր-
կըւած ազգը նորէն առանձին մնացած էր այն սեւ օրերուն, անհամար գո-
հներուն սուգը կը մորմոքէր տակաւին. խլած էին իրմէ նոր ձեռք ձգած ան-
կայսութիւնը, ու յագթակամ ազգերը, հիւսիսէն մինչեւ հարաւ ու մինչեւ
արեւմուտք, մէկ կռիւմէն որքեր կը յարդարէին գազաններուն ու միւս կող-
մէ ձեռք կ'երկարէին անոնց ծնունդ տուող գիշատիչներուն:

Այդ պահուն էր ահաւասիկ, որ Նիւրեմպերկի մօտերը հայկական բա-
ներ պատահեցան, բայց Նիւրեմպերկի մէջ պատահածին մօտեցող ոչինչ տե-
ղի ունեցաւ աշխարհի մէջ, երբ մենք էինք գոհը: Զուտ հայկական բաներ
պատահեցան Նիւրեմպերկի մօտերը, իրենց նմանը չունեցող, գծուար, տա-
ծանելի, բայց ինքնատիպ բաներ, վեհապանծ, կեցուցիչ՝ Հայոց գիրին
պէս, Հայոց երգին պէս, Հայոց նակատագրին պէս...

Տարօրինակ է արդարեւ մեր ճակատագիրը, առանձնայատուկ՝ քա-
ջայազք Հայկէն սկսեալ մինչեւ երազական մայրաքաղաքներուն մէջ իրենց
արուքիւնը յայտնաբերած մեր վիշապաճաղ տղաքը: Գերագոյն սրբութիւն-
ներ ստեղծելու աշխատանքին, ինչպէս նաեւ զանոնք պաշտպանելու տեմ-
դին մէջ, եղած ենք միշտ այսպէս, առանձին, յումառ, մեզմէ գորաւոր ու-
ծերուն տեսարար բախելու, այլ պատմութիւնը մեր ոգիին ենթարկելու ա-
նօրինակ բախտով ու կամքով ապրող ժողովուրդ մը: Ու քերեւս ա՛յս է
պատճառը, որ Հայոց պատմութիւնը պատմութիւն ըլլալէ աւելի դիւցազ-
ներգութիւն մըն է, ծայրէ ծայր:

Միեւնոյն ոգին ներկայացնող, իրարու հետ բազդատելի, իրարու հետ
շփոթուող տիպարներ են քուրք ցեղասպանները եւ նաեւ ցեղասպանները:
Բայց տարբեր են ու իրարու հետ քնաւ բազդատելի չեն զանոնք հաշուեյաթ-
դարի ենթարկող դատաստանները: Որովհետեւ ինչպէ՞ս բազդատել յազ-
քական բանակներու ու պայակոյտին կողմէ սարքուած դատարանը, քարոյը-
ւած ազգի մը գաւակներուն կազմած դատաստանին հետ: Համագոյնատուր
դատարանները ինչպէ՞ս բազդատել վրէժխնդիր տղոց արութեան հետ:

Նիւրեմպերկի մէջ տրուած մահալիւծները պատմութեան կը պատ-
կանին, մերը՝ դիւցազներգութեան:

Ա Հ Ա Բ Ե Կ Ի Չ Ն Ե Ր

(ՀԱՏՈՒԱԾ)

«Բաղինջի այս թիւին առաջին պահէ, Նշմարներուն մէկ մա-
սը եւ աւարեկէներուն Նուիրումն բաժինը, պատրաստումն էին
նշեռնի Յիսնամեակին նուիրումն մեք բացառիկին Համար, բայց
կամէ՞ անկախ պատճառներով այս թիւին վերապահուեցան ա-
նոնք: Ապրիլեան Նշեռնի առիթով գրուած ուրիշ գրութիւններ
եւս Հասած են մեզի, որոնք պիտի առնէ յաջորդաբար:

Դուք մեր տառապանքին եւ մեր կռուին երկարատեւ տալիսներէն ի վեր,
Աննուանելի պարիսպները հանդիսացա՛ մեր ֆայլերը կոտորոզ բալար բալար
բշնամիներուն հանդէպ՝
Եւ բռնակալութեան քաղաքներուն եւ անոնց հրապարակներուն վրայ,
Երբ մեր գիտէր փողոտանելէն մեր տա՛ արիւնը կը հոտոտուէր...
Ահաւասիկ որ ձեր խրոխտ հասակները միւս միմակ եւ հերոսաբար
աշտարակուեցան...
Ձեր ֆայլերը մեռելապատ փռոցներուն մէջ վրէժին ազապէր գոռացուցին,
Ձեր սուրներուն հալածանքէն բոլոր դաւանանքները եղբայրադուներուն հետ
գերեզմանուեցան,
Ու ձեր ճակատ ճակատի եւ անվեհեր ու անվախ ու հպարտ երեսմէն,
Երբապէս խուժանը վատերուն՝ ձեր ռաբբիներուն կառչելով իրենց կիսմէն
հայցեցին...
Ու դեռ երէկ, ձեր ահաբեկչի ռաբբիները մարդասպաններու քափորներ
մոխրացուցին...
Բարբարոսներու այդ խելացնոր վոհմակներուն մէջ վար քալալով
արեգակներուն միմա պայթելով...
Այսպէս, ձեր արգաքախաղի արիւնասեւեռ յապտերները ձեր ձեռքերէն
առկախ,
Բոլոր խաւարտչին եւ եղեռնական հոգիներուն գոցուած դուռներէն ներս
խուժեցիք,
Ինչպէս Խղմամբէն, որուն ճշմարտագէտ նայուածքը վախճան մըն է
միանգամայն...
Դուք Օրէնքը եղաք եղեռնապաշտ Զարիքին ուսերուն վրայ հակող,
Եւ հայրենի ամէն յուզում, ամէն խռովք, ամէն հեռ ու ամէն վրէժ,
Ձեր նժարին մէջ կշռուեցաւ եւ ձեր արգաքախաղի ատենին սեղանին վրայ
յայտնուեցաւ...
Դուք ո՛չ գիմակիցներ ունեցաք եւ ո՛չ ձեր հաւատքին վրայ իշխողներ,
Դուք, - դուք ձեր անձն էիք անստեղծութիւն եւ ձեր արքայապետ հոգին,
Ձեր Եսը գերազայն մարդուն համ է ամէն գորութեան գերիվեր,
Ձեր վճիռը ամէն վճռի մահավճիռն է անաղոք,
Եւ վա՛յ ամոնց, որոնք ձեր կարմիր եւ մահացու կմիտվը կը խաբանուին...

ՄԱՍՄԱՆԹ



ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԻՐԵԱՆ

Սողոմոն Թեհլիրեան ծնած է 1896 Սպրիլ 2-ին, Կամախի Բաղառէճ գիւղը։ 1905-ին, կը հաստատուի Երզնկա։ Թեհլիրեան դերպաստանը 1915-ի կոտորածներէն տուալ Երզնկայի մէջ կը հաշուէր 85 հոգի։ Եղեռնին կ'ազատի միայն Սողոմոնի մեծ եղբոր մէկ աղջիկը։

1915-ին Սողոմոն Սալմաստ է արդէն եւ կամաւոր՝ Անդրանիկի խումբին մէջ։ Մաս կը կազմէ Սեպուհի վաշտին։

Վանի նահանջէն ետք Թեհլիրեան 1915-ի Օդոստոսին Երեւան է եւ լծուած որբահաւաքի գործին։ Հոս է որ կ'իմանայ հայկական ջարդերուն պատմութիւնը եւ կը հիւանդանայ։ Երբ ամէն յոյս կը կորսնցնէ, թէ հարազատները կրնան ողջ մնացած ըլլալ, մէկ մտասեւեռում

կ'ունենայ այլեւս, — Պոլիս երթալ եւ գտնել Թալէաթը։ 1916 Օդոստոսին, որբահաւաքի գործով կ'երթայ Երզնկայ եւ կը շտապէ տեսնել իրենց տունը։ Տարի մը ետք, կը վերաւորուի Սարիղամիլի մէջ եւ կը ղրկուի Թիֆլիս։ 1919 Դեկտեմբերին կ'անցնի Պոլիս, Թալէաթը գտնելու հաստատ վճռակամութեամբ։ Նիմանայ ջարդարարներուն փախուստը Պոլսէն։ Ստուգելէ ետք, որ Յարութիւն անունով մատնիչ մը պատրաստած է հայ մտաւորականներու եւ հանրային կարեւոր դործիչներու 250 հոգինոց ցանկը, կը սկսի հետապնդել զայն եւ անոր սարքած մէկ խրախճանքին ընթացքին կուտայ արժանի պատիժը։

Թալէաթը գտնելու մտածումը տակաւ կը դառնայ իրեն մղձաւանջ։ Նոյն նպատակով Նոյեմբերին կը մեկնի Փարիզ։ Հոկտեմբերին Պոսթընէն եկած Հ. Յ. Գ. Կ.—ի հրաւերին ընդառաջելով կ'անցնի Ամերիկա։ Դեկտեմբեր 3-ին Պերլին կը հասնի եւ կ'իջեւանի Թերկարտէն հիւրանոցը, ուր կ'ապրէր Թալէաթի ահաբեկման գործին ներկայացուցիչը։

Երկարատեւ հետապնդումներէ ետք՝ 1921 Մարտ 15-ի առտուն, Թալէաթ կ'ելլէ պատշգամ, կը զննէ մայթը եւ ապա կ'իջնէ վար ու կը բռնէ Ուշլանտի ուղին։ Թեհլիրեան, որ վարձած էր Թալէաթի տան դիմաց դռնուող թիւ 37 սենեակը, իր կարգին վար կ'իջնէ եւ քանի մը վայրէկան ետք եղեռնի թիւ մէկ ճիւղը կը փոխ գետին։

Սողոմոն Թեհլիրեան կը բռնուի եւ գերման դատարանին կողմէ անպարտ կ'արձակուի։

«Յուսարեր» մատենաշարը երկու անգամ լոյս ընծայեց Վ. Մինասերեանի կողմէ գրի առնուած Սողոմոն Թեհլիրեանի յուշերը, առաջին անգամ 1953-ին, երկրորդ անգամ 1956-ին։

Կը մեռնի Պոսթընի։

ԹԱԼԷԱԹ ՓԱՇԱՅԻ ԱՀԱՐԵԿՈՒՄԸ

Լծակի պէս հաստ դատակը վեր տարաւ, ձեռքով մակատը շփեց, մերս մտաւ: Նայեցի ժամացոյցին. տաս էր, Ուլիանու գնալու իր սովորական ժամը: Ձենքը առի վրաս, պատրաստ դուրս գալու: Ցանկարծ մա յայտնուեց դրան մօտ աւ փղի պէս ծանրօրէն սկսեց վար իջնել: Երբ դուրս ելայ փողոց, գիմացի մայրով արդէն բռնել էր Ուլիանուի աչիւն: Սառը դատադուրիւնը ինձ ասում էր, որ այս անգամ անկարող պիտի լինի ազատուիլ ձեռիցս, բայց եւ յուզումը բազմալեզու ազդակներով փոքորկում էր ինձ:

— «Հասի՛ր, վագի՛ր. անցի՛ր միւս մայրը, ու շեղակի կոնակից, մէջէ՛ն, գլխի՛ն, շո՛ւտ, անցի՛ր փողոցը...»

Մայրից իջայ փողոց՝ յետեւը անցնելու համար բայց յանկարծ մի բան շեղեց ինձ. հագար անցավ պարզում բանը այդ պահին մէկէն մէկ կասկածելի թուաց. մա՞ է արդեօք...

— «Անցի՛ր դիմա՛ցը, դիմա՛ցը, դիմա՛ցը, ուղղակի ճակատի՛ն, շո՛ւտ, շո՛ւտ, վագի՛ր»...

Դիմացի մայրով ետաւարուեցի նըրան, արագ քայլերով բաւական յառաջացայ, անցայ նոյն մայրը, ուսկից գընում էր նա: Ցետ դարձայ: Մօտենում էինք իրար: Նա գայիս էր նեմելու ձեռով՝ ձեռնափայտը անփայտ ճօնելով: Մի կարճ տարածութիւն մնացած անդորրութիւն համակեց էութիւնս: Հաւասարելու վրայ Թալէաթը շեշտակի նայեց ինձ. աչքերի մէջ առկայծեց մահուան տարտուռը: Վերջին քայլը բեկուեց. մի քիչ քեփուեց որ խուսափի, բայց գէնքը քաշելու ու գլխին պարպելու մէկ եղաւ...

(«ՎԵՐՑԻՇՈՒՄՆԵՐ»)՝



Թալէաթը հարուածից կարծես ցընցընեց ու մի ակնթարթ հզօր մարմինը պրկուեց ճիգ, բայց երեքուն, ապա՝ սրբոցում կազմու բունի պէս երեսի վրայ տապալուեց բնդիւնով... Քիչ դէմը մի կին ճշաց ու գետին փռուեց. մի մարդ վազեց դէպի նա... Բնաւ չէի կարող երեւակայել, որ այդպիսի դիւրութեամբ գետին պիտի փռուի գազանը: Մի վայրկեան մզում ռմեցայ բոլոր գնդակները պարպել մէջէն, բայց փոխանակ կրակելու տարեմանկս նետեցի: Սեւ, քանձոր արիւնը վայրկեանապէս լնացաւ Թալէաթի գլխի շուրջ. կարծես ջարդուած անօթից մագուր էր դուրս բախում...

— Մարդ սպանմե՛ց, լսեցի...

Նայեցի վեր, վար, դիմացը, աւելն կողմ մարդիկ կանգ առած՝ նայում էին ինձ...

— Մա՛րդ սպանեց, բռնեցէ՛ք՝ ճշաց մէկը, ցանցաձեւ պարզելով դէպի ինձ ձեռքերը...

Բայց լնացող արիւնը կարծես դիւրեւ էր ինձ:

ՍՈՂՈՄՈՆ ԹԵԼԼԻՐԵԱՆ



ԱՐԱՄ ԵՐԿԱՆԵԱՆ

Արամ Երկանեան ծնած է Կարին, 1900-ին: 1915-ին ազատուելով եղեռնէն կ'ապաստանի Կովկաս: Պատանի հասակէն միտքն ու հոգին տարուած էին Հայրենիքին ծառայելու տենչով: 1917-ի վերջերք, երբ ուսական բանակը լքեց ռազմաճակատը եւ երկրին պաշտպանութեան գործը ծանրացաւ հայերուն վրայ, Արամն ալ շատերուն պէս շտապեց արձանագրուիլ կամաւոր եւ մեկնիլ ճակատ:

1918-ի սկիզբը, Արամ կը պահպանէր ռուս զօրքին լքած գոյքերը եւ կապ կը պահէր ճամբու միւս կայաններուն հետ: Պաղարիւն, անվեհեր, ամէն վախ արհամարհող Արամը շուտով աչքի կը զարնէ իր քաջութեամբ: Ռուսական նահանջի օրերուն Արամին կը յանձնուի Կարինի թուրքերուն հսկելու պարտակա-

նութիւնը: Փայլուն կերպով կը կատարէ իրեն վստահուած այդ գործը:

Նահանջէն հտք երկանեան կը մտնէ Դրոյի զօրամասին մէջ եւ գործօն մասնակցութիւն մը կը բերէ Բաշ Աբարանի հերոսական ճակատամարտին մէջ, իբրեւ գնդացիրային վաշտի պետ՝ միշտ առաջին գծի վրայ, միշտ վտանգն ու մահը արհամարհելով:

Հանրապետութեան տարիներուն Արամը կ'անցնի կուսակցութեան տրամադրութեան տակ յատուկ գործերու համար:

Արամի առաջին գոհերէն մէկը կ'ըլլայ Կովկասի չար ոգիներէն մէկը՝ Խան Սոյսկին:

Արամի եւ իր ընկերոջ Արշաւիր Երակեանի գնդակներէն Պերլինի փողոցներուն մէջ կ'իյնայ Պէհաէտտին Շաքիր կոչուած իթթիհատական գլխաւոր ճեւղներէն մէկը:

Պոլսոյ պարպումէն յետոյ, Արամը կ'անցնի Ռումանիա, ուր կը մնայ մինչեւ 1927 թուականը: Այդ թուականին կը տեղափոխուի Արժանթին: Ռումանիա թէ Արժանթին, ան միշտ կը մնայ Դաշնակցական գործօն ընկերներու առաջին շարքերուն մէջ, հռանդուն աշխատանքով եւ զոհաբերութեամբ: Մասնաւորաբար նիւթական թէ բարոյական մեծ ջանքեր թափած է Պուէնոս-Այրէսի «Արմենիա» թերթին համար:

1931-ին յայտնի կը դառնայ, որ հերոսը վարակուած է թոքախտէ: Մօտ երեք տարի մաքառելէ հտք այդ անողորհ հիւանդութեան դէմ, 1934 Օգոստոս 2-ին կը մեռնի:

Պէյրութի մէջ լոյս տեսաւ իր յուշերէն մաս մը, «Գիւրգ Մատուցման եւ Հատուցման» խորագրով:



ՊԵՆՏԵՍՏԻՆ ՇԱՔԻՐԻ ԱՀԱՐԵԿՈՒՄԸ

...Ոչ մէկ տարակոյտ որ անխուսափելիորէն մեր ճամբուն վրայ պիտի դիմաւորէինք գիրքնէ, որովհետեւ կը քալէինք դէպի Ազմի պէյի տունը, այն մայքիմ վրայէն ուրկէ խուսրը պէտք էր առաջանար:

Կարեցինք մայքը: Մեր ակնարկները զարնուեցան իրարու: Հասկցանք իրար: Հրամանը վճռական էր: Եւ մենք կը կին մեր կէտերուն վրայ էինք:

Անցաւ խուսրը մեր առջեւէն, երբ կը կտրէր փողոցը, որ երկու հարիւր քայլ հեռու ձէմալ Ազմիի դռնէն՝ կը բացուէր Ուլանդի վրայ: Մենք դուրս կու գայինք՝ իբր կողմնակի փողոցէն դուրս եկող պատահական անցորդ:

Առջեւէն կը քալէր Բուսի պէյ, անպէտ տիպ մը, որ Տիկին Թալէաթի հետ կը բնակէր եւ կը ծառայէր իբր հագածու եւ քարտուղար: ձէմալ Ազմիի եւ Պէնտէստինի կինը շրջապատուած իրենց զաւակներով կը քալէին խմբովին. իսկ Տիկին Թալէաթ, մշտնջեր ձէմալ Ազմիին եւ Պէնտէստինին, տաք տաք եւ ուրախ խօսակցութեամբ կը հետեւէին խումբին:

Խումբը հասաւ դուռը:

Մենք ամենց կանակը:

Տիկին Թալէաթը դէպի առաջ երեւ եւ երկու գնդակ գանկերու մէջ գտնել ակնթարթ մը միայն տեսց:

Վայրկեանական քարացած լուսնեան մը յայտնաբեր լայագին ողորակած մը «պապա», պապա...» երբ երկու դիտակներ փոփոխեցան իրարու վրայ:

Ի՞նչպէս եղաւ. չեմ գիտեր: Տեսայ միայն որ գետինը ծանկերու վրայ ինկած է մահ թ...», ասորմանակը թռած՝ ձեռքէն: Իսկ Տիկին Թալէաթ, հակառակ բնութի վիճակներուն եւ դիտակներու վրայ թափուելուն, կը փորձէ բռնել թ...ն:

Ատրճանակիս փողը կուրծքին ընկեր-

(«ԳԻՐԻՔ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՒ ՀԱՏՈՒՑՄԱՆ»)



կել տուաւ զինքը: Դարէն քայլ մը եւ բռնելու նիգ մը: Կրկին սպառնալիք: Կրկին փորձ եւ կրկին սպառնալիք, մինչեւ որ սատանայի նկունութեամբ թ... արդէն ցատկած էր:

Դնդակ մը էլեկտրական լոյսի լամպարին, որ սակայն վրիպեցաւ: Բայց մենք արդէն Լուսնի գլխարկէն վրայ ենք, երբ ուշ մնացող քանի մը անցորդներ դեռ չեն սթափած անակնկալի քարացնող ներարկումէն:

Իսկ երբ վիճակներ եւ օգնութեան աղաղակներ կը սթափեցնէին քարացած անցորդներն ու կը բացուէին պատուհանները, մենք արդէն քարած էինք փողոցները, ուր այլեւս չէին հասներ լուսնեւ նիւթերը:

Պերլինի փողոցները անսովոր ոչինչ ունէին, երբ քառքին զիս կը տանէր դէպի Ունտեր-Դէն-Լինդէն եւ ուրիշ քառքի մը հոտ՝ դէպի իմ սենեակը:

Այնքան թեթեւ կը զգայի, կարծես լեռ մը ինկած էր կուրծքիս վրայէն: Վրդտակ էի գնդակիս մահացութեան մասին:

Հատուցուած էր ուխտը Հայ մեռելոցին:

ԱՐԱՐ ԵՐԿԱՆԵԱՆ



ԱՐՇԱԽԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

Մենք է Պոլիս ու մեծցած՝ իրենց տունը ժամադրաբար դարձուցած Դաշնակցական մտաւորականներու եւ գործիչներու շունչին տակ, որոնք շուտով իրենց շրջանակին մէջ կ'առնէն պատանի Շիրակեանը եւ իրեն կը յանձնեն զէնքի փոխադրութեան եւ դուրսէն լուրեր ու տեղեկութիւններ հաւաքելու գործը։ Շընորհիւ իր փոքր տարիքին, բնական ու լիթութեան եւ արագաշարժութեան, մեծ ճարտարութեամբ զլուխ կը հանէ իրեն վստահուած բոլոր գործերը։

Պատերազմի ընթացքին փախստական մտաւորականներուն կը մատուցանէ թանկագին ծառայութիւններ։

Զինադադարին կ'անդամադրուի Հայ Տրամադրիկին, բայց իր բուն զբաղումը կ'ըլլայ թաքստոցներէն զէնք դուրս հանել եւ վերին մարմնին ցուցմունքներով յարմար վայրեր փոխադրել։ Այդ օրերուն իրեն կը յանձնուի նաեւ Վահէ Իհոան անունով հայ մատնիչը աչքէ չհեռացնելու պարտականութիւնը, աւելի ուշ ահաբեկումը, զոր կը կիրարկէ 1920 Մարտ 27-ին, առտու, Պոլսոյ Թարլաուէ իրեն կը յանձնուի Իհոանին ահաբե-

կումը, զոր կը կիրարկէ 1920 Մարտ 27-ին, առտու, Պոլսոյ Թարլաուէի պողոտային վրայ։

Երկու ամիս փոխտական կը մնայ եւ Զուիցերիական անցագրով երկար ուղիական մը ապրելէ ետք՝ 1920 Յունիսին կը հասնի Հայաստան։ Նոյն տարին գինեւորական նախարար Ռուբէնի որոշումով Արամ Երկանեանի հետ կը զրկուի Բաքու, Էնփլը եւ Ռայիլ փաշաները ահաբեկելու եւ այդպիսով առաջըր տոնելու համար Հայաստանի վրայ անոնց ծրարագրած արշաւանքին։ Կը հասնին Թիֆլիս, կը ձերբակալուին ու կը նետուին Մեհակի բանտը, ուրկէ կը յաջողին խոյս տալ երկար շարշարանքներ կրելէ յետոյ։

Քանի մը օր ետք Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէն կը հրահանգէ Շիրակեանին անմիջապէս Պոլիս վերադառնալ։

Պոլսէն Պատասխանատու մարմինը կը զրկէ զինք Հոռովմ, ջարդի ատեն Թուրքիոյ վարչապետ եղած Սախ Հալիմ փաշան ահաբեկելու համար։ 1921 Յունիսին Արսիլ Սիսակ անցագրով ճամբայ կ'ելլէ եւ Դեկտեմբեր 5-ին հեջիսթային պարագաներու տակ կ'ահաբեկէ փաշան։

Կը վերադառնայ Պոլիս, ուր կը հաղորդուի իրեն, թէ յաջորդ հանգրուանը Պերլինն է։ Կը մեկնի ու երեք ամիս լաւօրեակ մասնակցելէ ետք հետապնդումի գործին, 1922 Ապրիլ 17-ին, իր գործակից ընկերոջ՝ Արամ Երկանեանի հետ կ'ահաբեկեն ձեմալ Ազմին եւ Պէհաւտին Շաքիրը։

1923-ի սկիզբները կը մեկնի Միացեալ Նահանգները ու կը հաստատուի Նիւ Ճրքի։

Այս տարի Պէյրուի Համազգային մատենաշարը լոյս ընծայեց Արշախի Շիրակեանի յուշերը, «Կտակն էր նահատաներուն» անունով, որ կարդացուեցաւ մեծ հետաքրքրութեամբ։

ՍԱԻՏ ՀԱԼԻՄ ՓԱՇԱՅԻ ԱՀԱՔԵԿՈՒՄԸ

...Յանկարծ, վերէն լսուեցաւ կառ-
քի մը դգրդիւնը: Մէկէն մարմնէս ան-
ծանօթ սարսուռ մը անցաւ, երբ տեսայ
հսկայ ձիերը, որոնց բաշերը հովէն կ'ա-
լծփէին: Կառքին մէջն էր Սաիտ Հա-
լիմ փաշան՝ իւր թիկնապահին հետ: Փա-
ղոցին միւս ծայրը նայեցայ. Ս. դեռ
հասած չէր: Վայրկենապէս «ցտեսու-
թիւն» ըսի Հեյեմային, պատուիրելով որ
շուտ ներս մտնէ, քանի որ «հայրս» կու
գար...

Անմիջապէս ֆալեցի միւս մայրը,
որպէսզի լաւագոյն շիրքով մը անարե-
կումը կատարեմ. բայց քանի մը անըն-
թարթ ուշացած ըլլալուս, քիչ մնաց ձիե-
րու տակ մնայի. ձեռքս վերցուցի, բը-
ռունցեալ ցցած. ձիերը խրտչեցան եւ ծա-
ռացան: Այդ իրարանցումին մէջ, արագ
ասումով մը անցայ եւ ցատկեցի կառ-
քին վրայ, կոխելով ռոնտոնդին: Մէկ
ձեռքով բռնեցի կառքին յենարանը, քիչ
մը երերացի բայց հաստարակչութիւնս
կրցայ պահել: Մինչ թիկնապահը կառա-
պանին կը նայէր ու բաներ մը կ'ըսէր,
երեսի հասկնալու համար ձիերուն խըրտ-
չիլը, Սաիտ Հալիմ փաշային աչքերը
հանդիպեցան աչքերուս: «Երէն» ըսաւ
թիկնապահին: Այս եղաւ Սաարազամին
վերջին բառը: Աչքերը սարսափով լեցան
էին՝ երբ ատրճանակիս փողը ուղղեցի տջ
ժանգին եւ կրակեցի: Երկրորդ փամ-
փուշտի մը հարկ չ'մնաց: Խռպտա գայն
մը եւ Փաշան նստած տեղէն տապալեցաւ
կառքին մէջ, գլուխը իմ կողմս, գրեթէ
նսկերուս տակ: Կառքը դեռ կ'արշաւէր:
Թէվֆիք Ազմին, առաջին շփոթէն
սքափած, ատրճանակ մը հանեց ու կը
պատրաստուէր կրակել, երբ ատրճանա-
կիս փողը անոր ալ նակտին ուղղելով,
զոռացի թուրքերէնով.

— Այ՛ աչաղը, կեպեք թիւրքերը — 'տե-
տե՛ գէնգ, կը սատկեցնեմ...

(«ԿՏԱՄԵՆ ԷՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ»)



Հնազանդեցաւ եւ ատրճանակը կառ-
քէն դուրս նետեց, ահաբեկ դէմքով: Ա-
տրճանակիս կոթովը այս անգամ սկը-
սայ հարուածել կառապանին կոնակին,
պռտալով, խալերէն. «Ասքեք-ա, ասքե-
ք-ա» — «կեցի՛ր, կեցի՛ր»: Խեղճ կառապա-
նը վախէն կը դողար եւ յուսահատական
նիչերով զիս վկայութեան կը կանչէր,
ըսել ուզելով: — Տե՛ս, կեցնել կ'ուզեմ,
բայց ձիերը չեն կենար:

Կը վերյիշեմ տակաւին. տարօրինակ
ու անհաստատի տեսարան մըն էր: Զիւ-
րուն խելակորոյս վագրը, Փաշային կայս
ինկած գլուխը, որ կը ճօճէր կառքէն
դուրս, արտափառ թիկնապահը, որ
ձեռքերը վեր՝ նստած կը մնար մամի
պէս, խուճապահար կառապանը. եւ ես,
մէկ ռոտ կոխելիք տեղին վրայ եւ միւ-
սը ներս ու ատրճանակը ձեռքս: Ուժգին
հովէն վերաբկուս կը ծածանէր կոնակիս
վրայ, հսկայ թռչունի մը ձեւը տալով
ինծի: Այս պատկերը, որ կ'ամբողջացը-
նէր դէմքիս իջած սեւ գլխարկը, անցորդ-
ներէն ռմանց երեսակալութիւնը գրգռած
էր եւ հետագային ռստիկանական հար-
ցաֆննութեան ընթացքին, առիթ տուած
էր անոնց ըսելու թէ սպաննողը ուրաւա-
կան մըն էր — Ֆանթօմա:

ԱՇԽԱԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ



ՄԻՍԱԲ ԹՈՐԱՔԵԱՆ

Ծնած է Տրապիզոնի Կիւլանա գիւղը: 95-00-ի օրերուն դեռ 4-5 տարեկան ժանուկ՝ խորապէս կը կրէ Հայկական Զարգերուն զարհուրելի աւարտութիւնը:

Հայկական եղիւնէն աւելի առաջ կուտակեցուք հեռագրի մարմինն մէջ համակը Կովկաս տանելու գործը իրեն կը վստահուի: Վերադարձին կ'իմանայ, որ տեղահանութեան հետեւէն գործադրուած է եւ իբր ընտանեկը թշուառ անորոշ ուղղութեամբ:

Կը գիտնորարդուէ թրքական բանակին եւ Հիւանդութեան կեղծելով ազատ կ'արձակուի: Զինուորական կարեւոր տեղեկութիւններով կը յաջողէ զարձեւել Կովկաս անցնել: Կը հանդիպէ Արաւստացի Մարտին, Սեպուհին, Անդրանիկին եւ Դրոյին: Կարող եւ Սարգիսի մէջ կը մասնակցի կարգ մը կռիւններու: Բաշ Աբարանի ճակատամարտին մէջ կը վերաւորուի:

1921 Յուլիս 18-ին Հերոսի մը վայել խիզախութեամբ կ'արձակուի Բաշուի 30 հազար հայու թեան դահլիճ: Պէյլուտ թան Զիվանէթը, Պուսոյ Փըթի Եան-ի պարտէզին մօտ: Կը ձերբակալուի, բայց դատարանը ազատ կ'արձակէ զինք:

Հրատառական է իր յուշերը, ճերմերու հետք խորագրով:

1921 Յուլիս 18-ին, երեկոյեան երկու ինքնաշարժներ եկան ու կանգ առին հիւրանոցի դրան առջեւ: Բարձրահասակ, փափալը գլխուն՝ ձիվանջի գուրս եկաւ 4-5 հազիլի հետ միասին ու բարձրացան հիւրանոց: Ուշադիր կը նայէին: Քիչ վերջ դուրս եկան հիւրանոցէն բաւարը միասին եւ մտան մօտիկ Փրքի Եանի պարտէզը, յառաջացան դէպի անեմաւորը: Մենք նրանց ֆունտուհեանի հետ մտանք պարտէզ, բազմութիւնը խոնարհուեալ էր, դժուար էր շարժիլ: Կարելի չեղաւ յառաջանալ եւ իր նստած տեղը զարնել: Սափաւած նստանք մուտքի դրան մօտ գետեղաւած նստարանի մը վրայ եւ ուղեցնէին, որ գործի անցնիմ դուրս գալէն ետք, հիւրանոցի մուտքին:

Երկար սպասելէ ետք, ժողովուրդը խուռնեցաւ սկսաւ դուրս գալ: ձիվանջի արդէն անցեր էր մեր առջեւէն: Ամբոթի խոնարհութեամբ պատճառով չկրցայ հասնիլ մօտը, շատ որոշ կը տեսնէի զինք: Դէպի հիւրանոցի մուտքը կը մօտենար, որում 50-60 մեքր արդէն մօտեցեր էին: Դժուար էր ժողովուրդը եւ նամբուն երկու եզերքներում շարունակ բազմաթիւ ինքնաշարժները ճեղքել ու անցնիլ: Մտածեցի որ այս արգելքներով պիտի չկրնամ հասնիլ իրեն: Ուստի, ինքնաշարժներու մէջտեղերէն արագ-արագ մօտեցայ:

Այժմ արդէն հազիւ 30 ֆայլ հեռու էի իրմէ, նկատեցի որ գլուխը ետ դարձուց ու սկսաւ շուրջը նայիլ, ապա նորէն շարունակեց նամբուն: Կասկած արքընցաւ մէջս, բէ քերեւս կանկաւած է ու պիտի խուսափի: Ուստի, ամեն կերպով պատրաստ զգացի ինքզինքս, հագնեցաւ ու մարմնադէտ պիմդ եւ անխռով: Եւ հազիւ գլուխը դարձուցած պիտի ֆայլէր, յաջողեցայ հասնիլ քովը: Փաշեցի ատըրնանակս: Շատ երկարահասակ մարդ էր, մնացածի ցած. պարտաւորուած զարկի կողմէն, փոխանակ գլխէն, ատրճամակիս փողը գրեթէ հագուստին կ'պած: Ուրիշ կերպ չէր ըլլար. ետեւ ինքնաշարժ կար, կողքերը ժողովուրդ, ինքն ալ գի-

ՀԻՎԱՆՇԻՐԻ

ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

մացա: Ազատ շարժելու հնարաւորութիւն չունէի:

Առաջին գնդակին չիմկաւ. միայն ժողովուրդը քիչ մը բացուեցաւ: Ընդհակառակը, շտկուեցաւ եւ երկու ձեռքերս կրցաւ ամուր բռնել, քանի որ ետ քաշուելու կարելիութիւն չունէի: Ձեռքերս բռնելը շատ լաւ եղաւ, որովհետեւ, դարձաւ դէպի ինձի եւ կուրծքը առաջս ե-
 ժաւ: Այս անգամ երկու գնդակ եւս տե-
 զաւորեցի ռազմակի կուրծքին: Ինկաւ:

Երբ ուղեցի փողոցի անկիւնը դառ-
 նալ, ակամօքս հասաւ ճիվանջիքի ձայ-
 նը, որ *Ժամատ* - Օգոստոսիւն - կը պո-
 ռար: Կէս գիշերուան ժամը մէկի տոնե-
 ներն էր: Կասկած արթնցաւ մէջս, թէ
 մեռած չէ: Ցանկարծ միտքս ինկաւ ե-
 րազս, որ տեսեր էի քանի մը օր առաջ
 եւ քնկերներուս պատմած: ...Այս երա-
 զը տղոց կողմէ մեկնուեցաւ իբրեւ գոր-
 ծիս անյաջողութիւն:

Ահա այս երազի վերյիշումով անկիւ-
 նը չդարձած, երբ ձայնը ակամօքս հա-
 տաւ, մոռնալս ըսի. «Մեռած չէ, վերա-
 դառնաւ ու վերջացնեմ»:

Ետ դարձայ դէպի դիակը: Երբ մո-
 տեցայ, գլուխը հաւաքուած էին 20-30
 հոգի: Բոլորն ալ քաշուեցան ասորձանա-
 կը ձեռքս տեսնելով: Մօտեցայ եւ գետե-
 նը փռուած ճիվանջիքի գլխուն վրայ կե-
 ցայ: Կուրծքին գնդակ մըն ալ պարպե-
 ցի: Ապա շուրջս նայեցայ եւ տեսայ, որ
 4-5 ոստիկաններ, ատրճանակներ ձեռ-
 քերին, բռնած էին այն անկիւնը, ուր-
 կէ կրնայի փախուսաւ տալ:

Մտածեցի, թէ ասանց մէջէն այդ
 հետքով ողջ ազատիլ անկարելի է: Որո-
 շեցի կտրել փողոցը, դիմացը անցնիլ ու
 բարձրանալ Բերա: Բայց ինքնաշարժնե-
 րը շատ էին, խիտ առ խիտ շարուած՝
 Բերա Փայտի վարի անկիւնէն մինչեւ
 Փըքի Շան: Ասանց մէջտեղերէն ալ անց-
 («ՕՐԵՐՈՒՍ ՀԵՏ»)



նիլ կարելի չէր: Նկատեցի վրան բաց
 ինքնաշարժ մը: Ժողովուրդէն շատեր
 կծկուեք կամ պառկեք էին ինքնաշարժ-
 ներու կողքին:

Երբ անցայ միւս կողմ, պառկած
 մարդոց վրայ ինկայ եւ տակաւին ստե-
 րըս գետին չհասած, չորս հոգի բռնեցին
 զիս: Բռնակներէն մէկը սպաննուողին եղ-
 քայրն էր, ուժգին բռնեց մէջքէս, առ-
 ջեւէս: Գնդակ մը պարպեցի, որ աչքին
 վերի ոսկորները փշրեց ու անցաւ: Ձիւ-
 կաւ: Թէեւ արիւնահոս էր եւ արիւնը վը-
 րաս կը հոսէր, բայց մէջքս չճգեց: Երբ
 ճգած ըլլար, թերեւս միւս երեքն ալ
 սատկեցնէի ու ազատէի:

Ատրճանակիս մէջ մնացեք էին չորս
 փամփուշտներ: Նորը լեցնելու հնարա-
 տութիւն չունէի, վայրկեանապէս ինք-
 զինքիս եկայ, չուզեցի աւելի բարդացնել
 խնդիրը եւ հաշտուեցայ յանձնուելու գա-
 ղափարին հետ: Թեքուեցայ, բազուկս
 դրի ինքնաշարժի կողքին, հատ մը կլա-
 կեցի օդին մէջ ու սպասեցի:

Այդ պահունք թուրք ոստիկան մը մո-
 տեցաւ, բռնեց ձախ բազուկս եւ կ'ուզէր
 ատրճանակը ձեռքէս առնել: Ըսի. «Չփոր-
 ձես, թէ ոչ շան նման կը սատկեցնեմ»:
 Այսպէս լարուած կեցած էինք, երբ հա-
 սան Զրահասցի ոստիկանները...

ՄԻՍԱԿ ԹՈՐԱԳԵԱՆ



ՍՏԵՓԱՆ ԾԱՂԻԿԵԱՆ (աջիմ)
ԵՒ ՊԵՏՐՈՍ ՏԷՐՈՒՆԵԱՆ

Մնած է նոտորիորի շրջանի Մոխրկոտ գիւղը, 1886-ին: Մանկութիւնը կ'անցընէ ծննդավայրին մէջ, իսկ ուսումի համար կը մտնէ Տըրապիզոնի Ֆրէնման դպրոցը: Լէ տարեկանին հետզհետէ հասակակից աղէկայ ժը հետ կ'աժուտանացնէ զինք, որպէսզի գերէ մեայ պանդխտութիւնէ:

1906-ին, օսմանեան սահմանադրութեան օրինակէ կը մտնէ Դաշնակցութեան շարքերը:

Խորթով, իր մօրեղբայրներուն մօտ գտնուած միմիջոցին կը ծաղի առաջին աշխարհամարտը: Անմիջապէս կը փութայ հովկան, միանալու համար կամաւորական խումբներուն:

Հայաստանի Հանրապետութեան շրջանին Մաղիկեան կը գտնուի Մեպուհի անբաժան զինակիցը, որ մասնակցի Մայիսեան ըմբոստութիւնը զսպող ուժերուն:

Հայաստանի խորհրդայնացումէն ետք կ'որոշէ մնալ եւ աւարելիլ Մոսկուայի բարեկամութիւնը վայելող էնվէր եւ ձէմալ փաշաները: Էնվէրը կ'ազատի ձեռքէն, բայց յաջողութեամբ կը կազմակերպէ ձէմայի աւարեկումը:

Իր ստեղծած ստորերկրեայ կազմակերպութեան շնորհիւ, Մաղիկեան մեծ նառայութիւններ կը մասնուցանէ Ռուսիոյ խորերն ու աքսորավայրերը լեցուած արենակիցներուն, անունը ու հազուադէպ միջոցով մինչեւ հեռուոր վայրերը: Բայց ի վերջոյ, օր մը, ինք եւս կ'իյնայ Տէկայի ձեռքը եւ այնուհետեւ անժամօք կը մեծայ իր նահատակները:

Մեծ Եղեռնի պատմութիւնը սեւ շրջաբոյժով շրջանակուած պիտի մնար եւ նըւատաւութիւն իջնէր հայ հագիններուն, եթէ տեղի չունենային այս արդար ահաբեկումները:

Անմահ մաս կը կազմեն ահաբեկումներու ուրիշ շարքի մը՝ ուր հայ պատուհառ դեռ բարձրացաւ միշտ հայութեան ամենագլխի թշնամիներուն վրայ:

Հաւատացած եմք, որ օր մը հայքն իր պիտի գիտնայ զմահատալիքի իր արդար տալիք տալ վրէժխնդրութեան այդ սգին իրականութիւն դարձնող եւ մեր պատմութեան ժամանակակից շրջանը լուսաւորող այս նոր թաքուլ վանանդեցիներուն...:

✽

1922 թուին էր:

Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիզի Պեհպուրեան փողոցում եւ հացթուխի խանութ ունէի:

Այդ նոյն փողոցում գտնոււմ էին Չէկայի հիմնադրութիւնները եւ հրշէջների հաստատութիւնը:

Մի օր, առաւօտեան ժամը մօտ 10-ին, իմ խանութը մտան երեք հոգի: Նըրանք ինձանից հաց գնեցին: Մէկը նըրանցից՝ մի շիշ օղի հանեց գրպանից, իսկ միւսը՝ մի բաժակ: Օգու շիշի բերանը բացին եւ հերթով սկսան խմել օղին նոյն բաժակով եւ ուտել հացը:

Հէնց որ վերջացրին, նըրանցից մէկը թուրքերէն ասաց իր ընկերոջ. «Տես, գալի՞ս եմ թէ ոչ»:

Ընկերը դուրս եկաւ փողոց եւ խնայն վերադարձաւ՝ թուրքերէն յայտնելով, որ գալիս եմ:

Երբեք էլ անմիջապէս դուրս եկան փողոց:

— Եւ հասկացայ, որ սրանք թրքահայեր էին: Շիշը եւ բաժակը սեղանի վըրայից վար դրի եւ անցայ դէպի պատուհանը տեսնելու, թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ: Թուրքերէն խօսիլը կասկած տաւ չեքած էր իմ մէջ:

ՃԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

Խանութի դռնից դուրս եկայ եւ տեսայ, որ հեռուից երեւ հոգի, մարթ գլխարկ դրած, գալիս են ծանր ֆայլերով: Իսկոյն իմացայ, որ սրանք Թուրքեր են:

Երբ նրանք մօտեցան տասը ֆայլի վրայ, յանկարծ Հայերից մէկը սկսեց հայտնել.

— Շո՛ւն Ճեմալ, դու կը կարծէիր թէ հայ ազգը անտէ՞ր է, որ Տէր-Ջօրի մէջ 200 հազար կիմ եւ երեխայ սպաննել տըւիր...

Ճեմալը բացազանջեց.

— Խընդըր կեմալուր (անհաւատ խոզ), եւ ձեռքը տարաւ դէպի իր ատրճանակը: Նրան հետեւեցին իր երկու թիկնապահները:

Բայց հայ տղաները միջոց չտուին. վայրկեանապէս տասը հարուածեան մատուցելու ատրճանակները ֆաշելով՝ ծրեքին էլ ճակատից խփեցին: Երեւ Թուրքերն էլ դէմքի վրայ փռուեցան գետին:

Հայ տղաները իրենց բանկանի գլուխներէն ձեռքով համեցին երկրորդ ատրճանակը եւ սկսան շրջանաձիւ կրակել, որպէսզի շփոթութիւն ձգեն ժողովուրդի մէջ:

Այդ ժամանակ եկաւ Զեկայի Ռայս-կուքիւնի մի հայ զինուոր դուրս թաւաւ եւ բռնեց ահաբեկչներից մէկին: Միւս ահաբեկչները ասացին.

— «Ա՛յ տղայ, խեղճ ես, մեզք ես, հեռացիր»:

Ձիւնուրը պատասխանեց. «Պէտք է ձերբակալեմ ձեզ»: Ահաբեկչները «մեղքը քո վզին» ասելով խփեցին այդ զինուորին էլ եւ իրենք հապնեալով փախան աւանայտացան:

Հինգ վայրկեան վերջ, ամբողջ փառքը լեցուեցաւ չէկիստներով, երշէշներով եւ զինուորներով:



Եկան դատական բժիշկները եւ քարտուղարը: Բժիշկը բռնեց սպանուածներին եւ քիւղորեց քարտուղարին, որ գրէ հետեւեալը.

«Ճեմալ փաշայի եւ իր երկու թիկնապահների ահաբեկումը եղել է շատ անսպասելի: Գնդակները կպել են նրանց ճակատից եւ մահը եղել է րոպէական»:

Այդ ժամանակ երշէշների հիմնարկաւ վրացի Պերիան: Նա նայեց խփուածներին, գլուխը թափ տուեց եւ ասաց ռուսերէն.


— «Էսո Դաշնակալի տերրոր» (ա՛ս դաշնակցական ահաբեկում է):

Այդ օրը 800 Հայեր ձերբակալուեցան եւ Մեծիթի բանտը լեցուեցան: Զեկան, երեւ ամիս բանտարկեալներին հարց աւ փարձ անելուց յետոյ, ոչինչ չըկարողացաւ իմանալ եւ բոլորին էլ ազատ արձակեց:

Ամբողջ Թիֆլիզի ժողովուրդը զարմացել էր, թէ ինչպէ՞ս Զեկայի շէնքին առջեւ սպաննել էին չորս հոգի եւ չէին ձերբակալուել: Ժողովուրդը ասում էր.

— «Տեսէ՛ք ի՞նչ քաջեր ունեն Հայերը»:

ԴԱՐԵՀ ՀԱՅԱՍՏԱՆ



Հայաստանի եւ հայկական Արտասահմանի բոլոր մեծ ու պղծ-
տիկ կեդրոններում մէջ, իր մախրեթացը չունեցող յուզումով ու
եանդիստութեամբ սօսնուեցաւ յիշատակը մեր մէկ ու կէս միլիոն մա-
խատակներուն:

Իր սուգին առջեւ միասնական եղաւ ամբողջ Հայութիւնը:
Ապրեցաւ՝ ազգային բարձրագոյն գիտակցութեան իր բուսկ-մ. բո-
սկ-մ՝ որ կը կեդրոնացնէ ազգը բազկացնող բոլոր տարրերուն բո-
լոր դրական կարողութիւնները, որ մոռցնել կու տայ ժխտականն ու
ժամանակաւորը:

Արդ,

Ազգային բարձրագոյն գիտակցութեան եւ բարձրագոյն ապ-
րումներու այդ նուիրական բուսկն՝ պէտք է կարենամք գոյութեան
մնայուն դաւանանքի մը վերածել, մեր ժազաբական գործունէա-
լիւնը այդ անասան վէմին վրայ խարսխելու համար: Երբ չկայ
համագոյն գիտակցութեան ամէն ինչէ վեր ապրում ժողովուրդի
մը մէջ, այդ ժողովուրդը անկարելի է որ տէր դառնայ իր իրա-
ւունքներուն: Ընդհանրական իսկական է որ կրնայ ստեղծել ընդհա-
նօրի իրաւունք, ընդհանուր կարգ եւ ազատութիւն:

Այսինքն Յիսնամեակը տեղ մը հասցուց մեզ. Գեղեցիկ
տեղ մը: Այս գեղեցիկ տեղէն, համար Հայութեան համար, պէտք




է սկիզբը առնենք եւ մեկնինք ասկէ ետք շֆե'զ բաներ, որոնք կը կոչուին հայկական դատի հետապնդում, հողերու եւ ազատութեան իրաւունք, ազգահաւաք եւ ազգաբնակչութեան ան:

Յրկրի ու Արտասահմանի հարիւր հազարներու հասնող բազմութիւնները, որոնք ամէն երկրի մէջ իրենց մեծագոյն սուգն ու մեծագոյն կամքը արտայայտեցին, չգալին անյուր գալարումի մը մատնելով թշնամին՝ պէտք է գէշ բաներու վերջ տան եւ լաւ բաներու սկիզբ մը:

Մենք կը հաւատանք, որ Հայը հագեցնուած դուրս պիտի գայ իր ճանապարհներու Յիսմամեակէն: Պիտի կարենայ այլեւս վերջ տալ սին վէճերու եւ կործանարար թիւրիմացութիւններու իր եկն ցաւին:

Նուազ գիտակից ժողովուրդներ անգամ՝ համախմբուած են կամ յամառ նիգերով կը քանան համախմբուիլ. ինչո՞ւ չկանխենք եւ չգերազանցենք այդ բոլորը, մենք, որ շատ անգամ ու շատ մը լաւ բաներու մէջ գիտցած ենք կանխել ու գերազանցել ուրիշը:



«Բազմնյի խմբադրութիւնը գրական կարծիքներու ազատութիւնը յարգած է միշտ եւ ճիշդ այդ սկզբունքի հիման վրայ է, որ կը հրատարակենք Գ. Վաղդէն Աղունիին նամակը, Գ. Զօհրայի յիշատակին նուիրուած յօդուածէն ետք եւ այդ յօդուածին առիթով»:

Ուրիշ համակներ եւս ստացած ենք, նոյն առթիւ, որոնց տեղ չենք տար պարզ ափս Կատեմատով, որ Հետադայ նամակը լիովին կ'արտայայտէ ընդհանուրին արժանազրութիւնը:

Պատուարժան Խմբագրութիւն «Բազմն» Ամսագրի

Աստ

Սրտի անհուն կսկիծով կարդացի «Բազմն»ի Ապրիլեան Եղեռնի Յիսնամակին՝ նուիրուած Ապրիլ-Մայիս միացեալ թիւերուն մէջ, Վահէ Օշականի մէկ ծախսեր գրութիւնը՝ Գրիգոր Զօհրայի մասին:

Զարմացայ թէ ինչպէ՞ս «Բազմն»ի առաջնութիւնը շունչով հանդէսի մը մէջ հայ գրագի մը ստորագրութեամբ, տեղ գտած է այդ տիպի խրժման մը:

«Զօհրայի գրական խառնուածքը արդէն սկսած էր մեռնիլ, երբ ըսպաննեցին զինք ու Արեւմտահայ գրականութիւնը մեծ բան չկորսնցուց իր անհնաւորութեամբ», յանգեցած է գրել Վահէ Օշական:

Մենք կը գարնանանք, թէ ի՞նչպէս այդքան խնամուած ու գեղեցիկ բացառիկի մը մէջ, որ իսկապէս արժէքաւոր կոթող մըն է եւ այնքան գեղուն յարգանք մը կը պարունակէ բոլոր աշխատակիցներուն կողմէ հանդէպ նախատակ գրագէտներուն, տեղ տրուած է բոլորովին անհիշող եւ անպատշաճ այդ գրութեան: Զնգեցիւ՞մ համար արդեօք «Բազմն» գրականութեան մէջ կարծիքի ազատութեան իր որդեգրած ծանօթ սկզբունքէն: Բայց այս առիթը թոյլ կու տա՞ր նման անհարկի լայնամտութիւններու:

Արդարեւ, Վահէ Օշականի համաձայն, Զօհրայը արդէն մեռած էր նախատակութեան տասնեակ տարիներ առաջ, ուստի հարկ չկայ այսօր, յիսուն տարի ետք, արցունք քափելու անոր աննշան կորուստին համար:

Հայկապա «դամբանական» մորավէպի իշխանին համար...

Ու կտրծէ՞ առաւել եւս շեշտելու համար իր հերոսութիւնը՝ սրբազան մեռելներ մեռցնելու, Վահէ Օշական ճշմ յախարտ շեշտի վրայ եւ երջանիկ անպատշաճանատութեամբ մը՝ Եղեռնի բերնով *սխլէթանթ*, այսինքն ա-

մաթէօր կը շարքաբէ վարպետը եւ քացարձակ տրիամփանք կը ցուցադրէ ամօր մշակած գրականութեան հանդէպ՝ «Կիս ու հշտանք, բախտախաղ, գինի ու քաղաքականութիւն», ահա այս է եղեր Զօհրայի ըստանդակ գրականութիւնը, որ «Պրոլիկ» կառուցում մը միայն – վահէ Օշականէն է սահմանումը – կը ներկայացնէ եղեր հայ գրականութեան համար:

Ու մտածել, թէ Զօհրայ մեր մէջ այն փոքրէն է, որուն գրականութիւնը մարդկային սահմանէն անդին, դէպի համամարդկայինը կը ձգտի: Վահէ Օշական կը մոռնայ, թէ հեղինակաւոր եւ շատ մեծ քննադատներ, իրաւ եւ վաւերական գրականագէտներ, ինչպէս Յակոբ Օշական, Հիւսեան, Ալբայեան, Ջօզանեան, Գ. Մխիթարեան մեծ գտած են Զօհրայ գրագէտը, քերական գնահատած են Զօհրայ մտաւորականը:

Թոգումէ որ մեզի համար Զօհրայ միայն նորավէպի անհատատրիլի իշխանը չէ եղած, այլ եղած է ու կը մնայ անփոխարինելի օրէնսգէտը, որուն տիրական արժէքին տեղի թուրքը անգամ խոնարհած է բազմիցս, եղած է ու կը մնայ դեռ բանիբուն հոնտորը, որ գիտցած է, ի պահանջիլ հարկին մըրկել օսմանեան խորհրդարանը, եղած է ու կը մնայ զեռ խիզալն ու խորիմաստ ու հրապարակագիրը, որուն գրիչը գիտցած է տառնակ տարիներ յուզել եզրային-հաղափական այնքան կենսական հարցեր, եղած է ու կը մնայ զեռ տնխանք ու բանհարաւոր մտաւորականը, որ իր դարուն վրայ անբնական կնիքը դրած է իր համեմարին ու մտքին, յաւարձակով:

Եթէ Զօհրայ լռած է ժամանակ մը եւ տառերերկու տարուան մէջ միայն երեք հատ պատմութեան ստորագրած է, այդ չի նշանակեր թէ ամեն գրագէտը – երէ խժոժօրէն չնահատակուէր – հասուն տարիքին մէջ, անտառիման պաշարով աւուցուն, անծիր փորձառութեամբ ճոխացած, պիտի չտար տանգիտի կոթողական գործեր, նո՛ր գործեր, որոնց առջեւ ամէնէն խոտապտեմնք քննադատն անգամ գլխարկ պիտի հանէր: Սակայն, Զօհրայի թողած վաստակն ալ բաւական է. որ ազգովին խոնարհինք մե՛ծ հայուն եւ մեծ մտաւորականին առջեւ, վասնզի Զօհրայ կը մնայ հայ մարդուն համար երկնամերձ գագաթ մը մեր գրականութեան կայունածէն ներս եւ ո՛չ ոք – նոյնիսկ եթէ «Փողոց» ու «Պատուհան» ալ երգած ըլլայ – չի կրնար պարկեշտօրէն վահէ Օշականի ոճով ու ոգիով խմբագրուած յօդուած մը ըստորագրել Զօհրայի հասցէին... Յիսմանակի ծիրին մէջ եւ անբնականիլ ալ խոտիլի տրամարանութեամբ վնուի, թէ «Ձկար, չէ եղած երբեք Զօհրայ գրագէտը»:

Մինչդեռ յիսուն տարուան անցրպետ մը կը բաժնէ մեզ Զօհրայի ճաշատակութեան չարաշէտ թուականէն եւ մինչեւ այսօր քափուր կը մնայ ամօր տեղը Հայ Գրականութեան տանարին մէջ. ո՛վ գիտէ դեռ որչափ պիտի սպասենք նոր Զօհրայ մը կարեմալ աղջունելու համար: Մինչ այդ հարկ կա՞յ նահատակ գրագէտները խաչելու՝ աղմուկ հանելու սիրոյն:

Յարգանքներով
ՎԱԶԳԷՆ ԱՅԳՈՒՆԻ

իր վերջին գիրքի մասին գրախոսականը տպուած էր արդէն, երբ մամուլը գուժեց մահը:

Հր. Քոչարի կորուստը խոր ցուպանմանեց Հայաստանի թէ արտասահմանի գրական ու մտաւորական բոլոր բնականներուն անխոր:

Հանգուցեալը սկսած էր գրական համաժողովրդական դէմք դառնալ Յանկիւտի մէջ. երբ գրական իր ցրտութեան միջազգային գիրքերէն երաժարած՝ սկսած էր մշակել ճեւղ ու բովանդակութեամբ ազգային գրականութիւն մը:

«Սպիտակ գիրքը» իր կարագի քաղցր երջը եղաւ:

Սկսեց վարար Հր. Քոչար այս խտորին ոգիով եւ աւելի ընդարձակ տարածութեամբ ուրիշ գործեր ևս պիտի տարագրէր. երբ իր տարիքին ու տաղանդին յուսեանք մէջ մտեր չհարուածէր գիւժ:



Հրաչեայ Քոչար (Գաբրիէլեան) ծննած է 1910ին, Ալաշկերտ գաւառի Ղումլի Բաճախ գիւղը: 1916 թուականին աւիկա կը կարսնցնէ իր ծնողները եւ գաղթող համագիւղացիներու օգնութեամբ կը հասնի Հայաստան: Օրումն հաջը ապահովելու համար Հոկտեմբերեան շրջանի մէջ կը դառնայ գաղմարած: 14 տարեկանին կը յաջողի մտնել տեղւոյն դպրոցը:

Տեղական դպրոցը աւարտելէ ետք, 1927-ին կը դրկուի Երեւան՝ կրթութիւնը շարունակելու: Կը մտնէ Զեքիանկիի անուան գիշերային դպրոցը եւ ցերեկները կ'աշխատի ձեռն-օճառի գործարանին մէջ՝ որպէս բանուոր: Այդ տարիներուն կը կարդայ հայ, ռուս եւ եւրոպացի ճշմարտը հեղինակներու գործերը եւ կ'այցելէ գիւղական վայրերն ու պատմական յուշարձանները եւ իր տպաւորութիւնները կը հաղորդէ թերթերուն:

Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին օրերուն կը մեկնի ռազմականա եւ կ'աշխատի ճակատամարտի թերթերու խմբագրութիւններուն մէջ:

Հր. Քոչար գրել կը սկսէ 1927-28

թուականներուն, ստարագրելով վիպակներ, պատմութեան, հեքիաթներ եւ ակնարկներ:

Յաջորդաբար կը հրատարակէ *«Հերոսների ծնունդը»* (1942), *«Նախորդակին»* (1943), *«Սրբազան ուխտ»* (1946), *«Բարեկամութիւն»* (1950), *«Վիպակներ եւ պատմութեան ճեւղ»* (1958), *«Մեծ տան գաւառներ»* վէպը երկու հատոր, առաջինը 1952, երկրորդը 1959 թուականներուն:


Հր. Քոչար գրագած է մանկ գրական քննադատութեամբ: 1949-ին հրատարակած է իր գրական-քննադատական յօդուածները *«Գրականութիւն եւ կեանք»* վերնագրով:

1961-ի Յունուարին այցելեց Արաբական երկիրները եւ եղաւ Իրաք, Լիբանան եւ Սուրիա:

1946-ին «Հայաստան հրատարակչութիւն»ը ձեռնարկեց իր երկերու ժողովածուն հրատարակել, 7 հատորով:

Վերջին գործը եղաւ *«Սպիտակ գիրքը»* (1965):

Մեռաւ 1965 Մայիս 3-ին, երկարատեւ ու ծանր հիւանդութենէ մը ետք:



Digitised by R.A.R.@

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ՝

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ» (անգլերէն) Զ. Սիւրմէլեան, Միացեալ Նա-
հանգներ, 1965:

«ԵՒ ԵՂԵՒ ՄԱՐԴ» Զ. Որբունի, Փարիզ, 1965:

«ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՓՈՂՈՑՆԵՐ» Գ. Անէմեան, Պէյրութ, 1965:

«ԱՆԱՊԱՏԻՆ ԽՈՐԵՐԷՆ», Արմէն Տատուր, Գահիրէ, 1963:

«ԱԶԳԱՅԻ ՅՑ ՏԱՐԻՆԵՐԸ» (բացառիկ հատոր) Պէյրութ, 1965:

ԾԱՆՕԹ.— Լ. Մկրտչեանի յօդուածաշարքին («Բագին» թիւ
2, 3) վերջին մասը պիտի տանք յաջորդ թիւով:

ՎՐԻՊԱԿ.— Մեր այս թիւին էջ 33-ին վրայ գտնուած «կարմ-
փամարտ»ը պիտի ըլլայ ԿՌՓԱՄԱՐՏ, էջ 59-ի «Կեցուածք» խորա-
գիրը պիտի ըլլայ ԿԵՑՈՒԱՄՔԸ, իսկ էջ 60-ի խորագրին «էն»ը
են:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍՈՂՄԱՆ 7 ՏՈՂԱՐ

ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ.—

DIKRAN KOUYOUMDJIAN

B. P. 587, Beyrouth — Liban

digitised by A.R.A.R.@